886

204
Z-97

2018

Перрен
Людмила Ивановна
Москва 1973-02-4

ԱՆԱՊԱՏԱԿԱՆՆԵՐ

ԵՒ

ՎԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

(Օրտատպած Արարատ ամսագրից)

Միսաքան Ս. Էջմիածնի

ՅՈՒՍԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐԱԹՈՌՈՅ ԱՌԹՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

1906

Дозволено Цензурою 16 Мая 1905 г. г. Тифлисъ.

28. 1190

41188-60

ԱՆԱՊԱՏԱԿԱՆԵՐ

ԵԻ

ՎԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՎՐԻՊԱԿ

				Սխալ	Ուղիղ
Եր.	33.	տող	վերևից 20.	տեսել	տեսնել
»	50.	»	» 20.	կարօտ ենք	կարօտենք
»	72.	»	» 8.	րո	որ
»	108.	»	» 16.	սրբոյն	սիրոյն

ԱՆԱՊԱՏԱԿԱՆՆԵՐ

ԵՒ

ՎԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

(Արտատպած Արարատ ամսագրից)

Միաբան Ս. Էջմիածնի

ՅՈՒՍԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

1906

Дозволено Цензурою 16 Мая 1905 г. г. Тифлисъ.

ԱՆԱՊԱՏԱԿԱՆԵՐ

ԵՒ

ՎԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՎՐԻՊԱԿ

				Սխալ	Ուղիղ
Եր.	33.	տող	վերևից 20.	տեսել	տեսնել
»	50.	»	» 20.	կարօտ ենք	կարօտենք
»	72.	»	» 8.	բո	որ
»	108.	»	» 16.	սրբոյն	սիրոյն

ԱՆԱՊԱՏԱԿԱՆՆԵՐ ԵՒ ՎԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

«Այսօր ցօղով իմանալեաւ յամպոյ Հոգւոյն զուարթացան բոյսք եկեղեցւոյ, պարարտացան դաշտք արդարութեամբ և գեղեցկացան անապատք մաքուր կուսութեամբ. փառս տացուք նմա սրբասաց ձայնիւ»։ Շարկ. կանոն Պենտեկոստէի. Ե. աւուր. Հ։

Ա.

Ա.նապատական կեանքի սկզբնաւորութիւնը. Ռաքաբիմեանք։—Եղիա մարգարէ։ Յովհաննէս Մկրտիչ։ Հեսեանք։

Ճգնաւորական կամ անապատական կեանքի նախագաղափարներն են Եղիա մարգարէն ու Յովհաննէս Մկրտիչը։ Ջէմս Բօբերտսոնը ասում է[1]*. «Միայնակեցութիւնը բացառապէս քրիստոնէական հաստատութիւն չէ։ Միանձնութիւնը կամ անապատականութիւնը ընդհանրապէս յայտնի էր արևելեան կրօնների մէջ և օրինաւորապէս սրբագործուած էր Հին Կտակարանով, ուր երևան են գալիս այնպիսի անապատականներ՝ որպիսի են Եղիա մարգարէն, Ռաքաբիմեանք, Յովհաննէս Մկրտիչը։ Իսկապէս Նոր Կտակարանում էլ կարելի է կրօնաւորութեան ապացոյցներ գտնել մի քանի առանձին հատուածներում»։*

Պարզենք թէ ինչումն էր կայանում Եղիայի, Ռաքաբիմեանց, Յովհաննէս Մկրտչի և մեր կողմից աւելացնելով Հեսեաններին անապատական կամ միանձն ճգնաւոր լինելը։

1.) История Христіанской церкви въ двухъ томахъ С. Петербургъ, 1890. томъ первый, *եր.* 313—314.

Եղիա մարգարէն ու Յովհաննէս Մկրտիչը իսկական անապատական էին և խստակրօն ճգնաւոր։ Նրանք անապատ էին հեռացել ոչ միայն իրանց հոգու փրկութիւնը հոգալով, այլ անապատից իրանց ձայնը լսեցնում էին անվեհերութեամբ յանդիմանելով ու սարսեցնելով աշխարհի հզօրներին, երբ տեսնում էին նրանց անօրէնութիւնն ու անիրաւութիւնը։ Ս. Գիրքը Յովհաննէս Մկրտչին, որով և Եղիային, բնորոշում է նրանց մասին գրելով. «Ձայն բարբառոյ յանապատի, պատրաստ արարէք ղճանապարհ Տեառն և ուղիղ արարէք ղշաւիղս նորա (Եսայի մարգ. Խ. 3։ Մատթ. աւետ. Գ. 3)։—Նրանք, այսինքն Յովհաննէս Մկրտիչն ու Եղիան, Տիրոջ ճանապարհը պատրաստելու, ու նրա շաւիղները ուղղելու համար անապատում բարբառող աղդարար ձայնն էին։

Քրիստոնէական եկեղեցին միայն Եղիա մարգարէին ու Յովհաննէս Մկրտչին է ընդունում իսկական անապատականներ և. սրանց հետևող՝ Եգիպտոսի անապատականներին, յատկապէս Անտոնին [1])։ Ռաքաբիմեաններին ոչքան և Ջ. Բօրերտսօնը դնում է Հին Ուխտի միանձն անապատականների կարգում, սակայն նրանք այնպիսի աշխարհուրաց և խստակրօն միայնակեաց անապատականներ չէին, որպիսի էին Եղիան և Յովհաննէս Մկրտիչը՝ և եկեղեցին էլ նրանց չէ ընդունում. բայց որովհետև նրանք Հին Ուխտի անապատականների շարքում յիշուեցին, հարկ ենք համարում նախապէս մի քանի տեղեկութիւններ նրանց մասին տալ և ապա դառնալ իսկական անապատականներին։

Ռաքաբիմեանների հիմնադիրն է Ռեքաբի որդի Յովնադաբը [2]), Իսրայէլի Յէհու թագաւորի օրով (883—855 թ. Ք. ա.)։ Ռաքաբիմեանք իրանց համայնքի հիմնադրի պատուէրին համեմատ քաղաքներից և շէներից դուրս վրան-

---

1.) Շարական. կանոն Անտոնի անապատականի, ԺԵ.։ Կանոն ծննդեան Յովհաննու Մկրտչի. ՀԳ։

2.) Երեմիա մարգ. գլ. Լ.Ե.։ Գ. թագ։ Ժ. 15—23։ Բառարան Ս. Գրոց. Կ. Պոլիս, Ա. Յակոբ Պօյեաճեանի 1881 թ։

նելի մէջ անապատներումն էին ապրում, տուն չէին շինում, երկրագործութեամբ ու այգեգործութեամբ չէին զբաղվում և գինի չէին խմում։ Այս բանից առնելով Բոբերտսոնը կարծում է, թէ Ռաքաբեմեանք Եղիայի և Յովհաննէս Մկրտչի պէս անապատական էին. բայց նրանք ընտանիք ունէին, և երևի, խաշնարածութեամբ էին զբաղվում։ Նրանց օրինապահութեան մի դէպք յայտնի է. ահա այդ դէպքը [1])։

Ռաքաբիմեան համայնքի սկզբնաւորութիւնից մօտ 300 տարի յետոյ, Յուդայի Յոյակիմ թագաւորի վերջին տարին, երբ Նաբուգոդոնոսորը յարձակուելով Պաղեստինի վերայ պաշարել էր Երուսաղէմը, Ռաքաբիմեանք էլ պարտաւորուեցին քաղաքներումն ապաստանարան որոնել։ Երուսաղէմում գտնուած Ռաքաբիմեաններին Երեմիա մարգարէն բերեց տաճար և նրանց գինի առաջարկեց. նրանք հրաժարուեցին ասելով, որ իրանց համայնքի հիմնադիր Ռեքեբի որդի Յովնադաբը արգելել է այդ։ Այս հանգամանքը յարմար առիթ համարելով՝ Երեմիա մարգարէն յանդիմանեց իսրայէլացիներին, նկատելով, որ Ռաքաբիմեանները իրանց համայնքի հիմնադրի պատուէրը սրբութեամբ պահում են, իսկ իսրայէլացիք Աստուծոյ՝ օրէնքը չեն պահում։

Եղիա մարգարէն [2]) մաքառում էր Աքաաբ թագաւորի ու նրա Յեզաբէլ կնոջ անօրէնութիւնների ու անիրաւութիւնների դէմ. ամենայն եռանդով և համարձակութեամբ կռւում էր իւր ազգի, հրէաների, մոլորութիւնների դէմ. աշխատում էր վերահաստատել ու զօրացնել հաւատքն ու կրօնքը դէպի Աստուած, և պարտաճանաչութեան գիտակցութիւնը՝ դէպի իրանց ազգային ու կրօնական պարտաւորութիւնը։ Եղիան հրէաների, որպէս ազգ, թուլանալն ու տկարանալը համարում էր հետևանք այն անտարբերութեան, որ ցոյց էին տալիս նրանք դէպի իրանց կրօնքն

1.) Երեմ. Լ Ե։

2.) Գ. թագաւ. ԺԷ.—ԺԹ։ Գ. թագաւ. Ա. Բ։

ու ազգային սովորութիւնները։ Իսկապէս այդ անտարբերութեամբ քայքայուած էր նրանց ազգային միութիւնը, վերացուած էր ոգևորութեան այն սրբազան կրակը, որով ազգերն ու մարդիկ հրաշք են գործում իրանց ինքնուրոյնութիւնն ու անկախութիւնը հերոսաբար պաշտպանելով։

Եղիայի հագուստի մասին դիտենք, որ նա մաշկեակ էր կրում, և այդ մաշկեակը որպէս սրբազան աւանդ մնաց նրա աշակերտ Եղիսէին։ Եղիան առանձնացած էր Յորդանանի հանդէպ Քոռաթի հեղեղատի անապատում, կերակրւում էր մի ագռաւի առաւօտ երեկոյ բերած մի մի կտոր հացով ու մսով և իւր ծարաւը յագեցնում էր հեղեղատի ջրով։

Հրէից աւանդութեամբ Եղիան պէտք է յառաջընթաց լինէր Մեսիայի գալստեանը [1]. բայց Եղիայի վերաբերութեամբ մարգարէութիւնն ու աւանդութիւնը Յիսուսի խօսքին համեմատ [2] կատարուեց յանձին Յովհաննէս Մկրտչի։

Յովհաննէս Մկրտիչը [3] յղացաւ ու ծնուեց, որպէս Նազովրեցի—Ուխտաւոր, հրեշտակի աւետիքով։ Հրեշտակը նրա յղացման աւետիսը նրա հօրը, Զաքարիային, տալիս ասաց, որ նրա որդին «Տիրոջ առաջին մեծ կըլինի. դինի, օղի պէտք է չըխմի. սուրբ Հոգւով կըլցուի իւր մօր որովայնից սկսած։ Իսրայէլի որդիներից շատերին կըդարձնի դէպի իրանց Տէր Աստուածը, և ինքն նրա առաջից կըգայ Եղիայի հոգւով ու զօրութեամբ, Տիրոջ համար պատրաստելու ժողովուրդ»։ Զաքարիան իւր զաւակի համար մարգարէաբար ասում է. «Եւ դու, մանուկ, Բարձրեալի մարգարէ կըկոչուես, որովհետև Տիրոջ առաջից պէտք է գնաս, նրա ճանապարհը պատրաստելու։ Մանուկը աճում էր,

---

1) «Եւ ահա ես առաքեմ առ ձեզ զԵղիա Թեզբացի, մինչև եկեալ իցէ օր Տեառն մեծ և երևելի»։ (Մաղաքիա մարգ. Դ. 5)։

2) «Այլ ես ասեմ ձեզ, զի Եղիա եկեալ իսկ է... Յայնժամ իմացան աշակերտքն թէ վասն Յովհաննու Մկրտչի ասաց ցնոսա». (Մատթ. ԺԷ. 12—14)։

3) Մատթ. Գ., Թ. 14., ԺԱ., ԺԴ. 3—13։ Ղուկ. Ա, Ե. 33։

հոգով զօրանում և անապատներումն էր, մինչև Իսրայէլին երևալու օրը» (Ղուկ. ա)։

Անապատում Յովհաննէսի հանդերձը ուղտի ստևից (բուրդ) էր, մէջքին՝ մաշկեղէն գօտի։ Նրա կերակուրը մարախ ու վայրենի մեղր էր։

Նա իւր մօտ եկողներին ու իրան հետևել ուզողներին մկրտում ու ապաշխարութիւն էր քարոզում։ Յովհաննէսը եկել էր Եղիայի հոգով ու զօրութեամբ և նրա պէս էլ աներկիւղ համարձակութեամբ յանդիմանում էր։ Աբրահամի որդի կոչումով պանծացող կեղծաւոր փարիսեցիներից ու սադուկեցիներից շատերին իւր քարոզութիւնը լսելու եկողների մէջ տեսնելով՝ ասաց նրանց. «Իժի ծնունդներ, ձեզ ո՞վ ցոյց տուեց դալիք բարկութիւնից փախչել. այսուհետև ապաշխարութեան արժանի պտուղ տուէք և մի մեծամտէք ձեր անձի մէջ՝ թէ Աբրահամի որդի էք. ասում եմ ձեզ, որ Աստուած կարող է այս քարերից Աբրահամի որդիք յարուցանել (Մատ. Գ.)։ Յովհաննէս Մկրտիչը մաքառում էր Հերովդէսի ու նրա Հերովդիադա կնոջ անիրաւութիւնների ու անօրէնութիւնների դէմ. բանտարկուեց և բանտում էլ գլխատուեց։

Եղիայի և Յովհաննէս Մկրտչի պատմութիւնից տեսնում ենք, որ Ս. Գրքի անապատականների կեանքի էական պայմանն էր արհամարհել աշխարհն ու նրա վայելքները և կռուել մարդկանց մոլութիւնների դէմ՝ նրանց ուղղութեան ու արդարութեան ճանապարհը ցոյց տալով։ Նրանց հանդերձեղէնների մէջ մաշկեղէնը առաջին տեղն էր բռնում. ուտելիքի վերաբերութեամբ վերին աստիճանի սակաւապէտ էին, մարդկանց հետ յարաբերութեան մէջ անաչառ էին, աներկիւղ համարձակութեամբ նրանց երեսին էին տալիս նրանց պակասութիւններն ու ուղղութիւն քարոզում։

Յովհաննէս Մկրտչին անուանեցինք Նազովրեցի-Ուխտաւոր։ Հին Ուխտի մէջ նրանք, որոնց յղութիւնը հրեշտակի աւետիքով էր լինում, որոնք ի ծնէ կոչուած էին աստուածային նախախնամութեամբ մի արտակարգ գործ կատա-

բելու՝ Նազովրեցի կամ հայերէն թարգմանութեամբ՝ Ուխտաւոր, նուիրուած էին կոչուում։ Նազովրեցու գլխին երկաթ պէտք է չըդիպչէր, այսինքն նրա մազերը չըպէտք է խուզուէին. օղի և գինի պէտք է չըխմէր ու անուրբ բան չուտէր։ Ս.յսպիսի Ուխտաւոր կամ Նազովրեցի էր Հին Ուխտի Սամփսոնը, որ կոչուած էր հրէաներին ազատելու փղշտացիներից[1])։ Նման Ուխտաւոր և Նազովրեցի էր Յովհաննէս Մկրտիչը, որ մօր արգանդից կոչուած էր «պատրաստել Տեառն ժողովուրդ կազմեալ». Տիրոջ առաջին մեծ պէտք է լինէր. գինի և օղի պէտք է չըխմէր[2]). Ամենամեծ Նազովրեցի կամ Ուխտաւոր Յիսուս Քրիստոսն էր, որի կոչումն էր փրկել ամբողջ մարդկային ազգը։ Յիսուս Եգիպտոսից վերադառնալիս բնակուեց Գալիլեայի Նազարէթ քաղաքում, որ Նազովրեցի կոչուի[3])։ Յիսուսի Նազովրեցի լինելու նկարագիրը տալիս են Եսայի մարգարէն (գլ. ԺԱ.) և միւս մարգարէները։ Նազովրեցի բառի տակ ի նկատ են առնում այն բոլոր անարգանքները, որ Փրկիչը յանձն առաւ իւր մեծ գործը կատարելու ժամանակ (Եսայի ԾԳ.)։ Յիսուսին հետևողները, որ համարեա աշխարհատեաց առաքելականներ էին, հրէաներից անարգաբար Նազովրեցոց հերձուած էին կոչում[4]։)

Անառաքելականների նման մի ուխտ կարելի է համարել Հեսեաններին։ Յովսէպոս ասում է[5]). որ Օգոստոսի ժամանակ Հրէաստանում երեք աղանդներ կային — Փարիսեցիք, Սադուկեցիք և Հեսեանք. և վերջիններիս հաւատոյն անուանելով՝ երկարօրէն նկարագրում է նրանց ինչութիւնը։ Ըստ Յովսեպոսի Հեսեանք եբրայեցի էին, իրար հետ սիրոյ անխզելի շաղկապով կապուած. խորշում էին կենցաղական հեշտութիւններից՝ որպէս վատթարու-

---

1) Դատաւորք ԺԳ։

2) Ղուկաս աւետ. Ա.

3) Մատթ. Բ. 23։

4) Գործք առաք. ԻԴ. 5։

5) Յովսեպոս տպուած Ս. Էջմիածնում 1787 թուին եր. 140. Բ. դպրութիւն գլ. Թ։

թիւններից. պարկեշտութիւնն ու ցանկութեան չընդունակելը մեծ առաքինութիւն էին համարում։ Իրանց ուխտի մէջ աւելի մանուկներին էին ընդունում, որպէս ճկուն բնաւորութիւն՝ իրանց կանոններով հեշտութեամբ կրթելու։ Որդեծնութեան համար ամուսնութիւնը խոտելի չէր. բայց ժուժկալութեան համար կանանցից խորշում էին։ Արհամարհում էին ստացուածքը, ամեն ինչ հասարակաց էր, որ ոչ աղքատութիւնը արհամարհուի, ոչ էլ հարստութիւնը մեծայարգ երևայ։ Դատապարտում էին փափկակեցութիւնը. յատուկ բնակութեան տեղ չունէին, այլ ամեն տեղ ցրուած էին ապրում. ամեն տեղ էլ մի մի հոգաբարձու էր կարգուած, որը նրանց հագուստն ու պէտքերը հոգում էր։ Սպիտակ հագուստ էին հագնում. կօշիկ ու հանդերձ ամենևին չէին փոխում, մինչև որ հնանալով մաշւում պատառ պատառ էին լինում։ Ում ինչ հարկաւոր էր, առանց փոխարինութեան կարող էր ընկերից առնել։ Աստուածպաշտութեան մեծ փոյթ ունէին։ Ընդհանրապէս լռակեաց էին։

Արևը ծագելուն պէս ամեն ոք, գործակալների կարգադրութեամբ իւր գործին էր գնում։ 5 ժամին (ժամերը հաշւում էին արևածագից) խմբւում էին միասին, զենջակով սփածուած՝ պաղ ջրով լուացւում էին, ժողովւում էին խորհրդարանը, ուր ուխտին չբպատկանողը իրաւունք չունէր մտնել. լռութեամբ բազմում էին. հացաբարը ամեն մէկին հաց էր տալիս և խոհարարն էլ մի ման մի տեսակ կերակուր էր գնում նրանց առաջ։ Քահանան սեղանը օրհնում էր, և ապա սկսւում էր ճաշկերոյթը։ Ճաշից յետոյ գոհութեան մաղթանք էր կատարւում։ Ճաշից առաջ ու յետոյ Աստուծուն, իբրև կերակրողի, փառաբանում էին։ Ճաշից յետոյ սփածանելին իբրև սրբազան ղգեստ հանում էին ու գնում իրանց գործին մինչև երեկոյ։ Երեկոյեանը դարձեալ նոյն կարգով ընթրիքի էին բազմում։ Սեղանի վերայ խորհրդական լռութիւն էր թագաւորում, և մէկը խօսելիս՝ միւսները լռում էին. նոյն կարգը պահւում էր փոքրիկ համախմբումների ժամանակ ևս։ Միայն օդնու-

թիւն անելիս և ողորմութիւն տալիս էին անձնիշխան, կեանքի միւս բոլոր դէպքերում հսկողութեան տակ էին։ Առանց դործակալների հրամանի իրաւունք չունէին իրանց աղդականներին բան տալ։ Բարկութիւնը արդելուած էր. խաղաղութեան պէտք է հնազանդէին. այո՝ այո էր և ոչ՝ ոչ։ Երդումն երդմնազանցութեան չափ դատապարտւում էր։ Գրասէր էին։

Աշակերտ իսկոյն չէին ընդունում. աշակերտել կամ ուխտի անդամ լինել ուզողին՝ մի տարի փորձում և ապա տալիս էին ուրաք, ներքին ծածկոյթ և սպիտակ հանդերձ։ Ուխտի մէջ ընդունելու համար երկու և աւելի տարի փորձում էին, և ապա համաձնակութեան ընդունում։ Նախ քան ուխտի անդամ լինելով սեղանակից լինելը՝ ընծայեալը խիստ երդումն էր տալիս՝ և երդման պայմաններն էին նախ՝ Աստուծուն պաշտել և ապա մարդկանց հետ արդարութիւն պահել. իշխաններին պատուել, որովհետև առանց Աստուծոյ կամքի ոչ ոք կարող էր իշխանութեան հասնել։ Իշխանութեան հասնելիս, իշխանութիւնը ի չարն չգործադրել ի փառս իւր և ի նախատինս հնազանդեալների, և հանդերձով կամ այլ զարդերով չգձգտել մեծ երևալ։ Համախոհներից թաքուն բան չունենալ, և իւրայիններից օտարներին բան չասել, թէև մահ էլ սպառնային իրան։ Այսպիսի երդումից յետոյ նորընծան արդէն ընդունւում էր ուխտի մէջ։

Ցանցաւորներին ուխտից դուրս էին անում. կատարեալ զղջումից յետոյ միայն, և այն էլ մեծ դժուարութեամբ, յետ էին ընդունում. անզեղջ և աններելի յանցաւորներին շատ անգամ սպանում էին։ Դատաստան անելիս՝ շատ արթուն էին. և չէին դատապարտում մէկին՝ մինչև հարիւր հոգի միասին ժողովուած չլինէին և այդպիսի վճիռն էլ անխախտ էր։ Աստուծուց յետոյ մեծ պատիւ ունէր իրանց օրէնսդիրը, որին հայհոյողը մահուան էր դատապարտւում. ծերերին հնազանդում էին. հրէաների պէս և նրանցից էլ աւելի շաբաթը խիստ էին պահում։ Որպէս զի Աստուծոյ արևի ճառագայթները չարատաւորէին,

որովայնի մաքրութեան կարիքը հոգում էին ծածուկ տեղերում, թանձր սաւանով ծածկուած, մի ոտնաչափ խորութեամբ փոսի մէջ, որ նախապէս փորում էին հետները մշտապէս ունեցած ուրաքով. և արտաթորութիւնը ծածկում էին փորուած հողով։ Որովհետև շատ պարկեշտ և ժուժկալ էին, ուստի և շատ երկար և շատերը հարիւր տարուց էլ աւելի էին ապրում։ Իրանց ուխտին և հաւատին շատ պինդ էին, և հռովմայեցոց պատերազմի ժամանակ, իրանց հաւատին հաւատարիմ մնալով՝ շատ չարչարուեցին ու տանջուեցին և շատերն էլ նահատակուեցին։

Մարմինը որպէս ապականացու և ժամանակաւոր բան՝ ոչ ինչ էին համարում, յաւիտենական և անմահ հոգու համար էին հոգում, երանելեաց աշխարհում յաւիտենական հանգիստ վայելելու։

Հեսեանք երկու հերձուածի էին բաժանուած. մի հերձուածը անպայման մերժում էր ամուսնութիւնը, միւս հերձուածը ներելի է համարում այն՝ միայն որդեծնութեան ու մարդկային սեռի աճելութեան համար։ Միւս մնացած բոլոր բաներում երկու հերձուածներն էլ համաձայն էին։ Հեսեանների ուխտի կանոնների մէջ տեսնում ենք քրիստոնեայ վանքերի կանոնների ու սկզբունքների հիմքերը։

Ս. Պօղոս առաքեալը հրէից բարբարներից ու երախտաւորներից ոմանց համառօտ նկարագիրը տալով, մեր առաջն է դնում անապատականների վարքի նկարագիրը, գրելով. «շրջեցան լեշկամաշկօք և մորթովք այծենեօք, կարօտեալք, նեղեալք, չարչարեալք, զորս ոչ արժէ աշխարհս, յանապատի մոլորեալք, և ի լերինս և յայրս և ի փապարս երկրի»[1]։ Եթէ «կրօնաւոր» բառը այժմեան մտքով ճգնաւոր կամ միայնակեաց հասկանանք, Յակովբոս առաքեալը կրօնաւորի համար ասում է[2]. «Եթէ ոք կամիցի կրօնաւոր լինել, և ոչ սանձահարեսցէ զլեզու իւր, այլ զբաղեցուցանիցէ զսիրտն իւր, այնպիսւոյն վայրապար է

1) Առ Եբրայեցիս գ.. ԺԱ. 37, 38։

2) Յակովբոս, թուղթ կաթուղ. գլ. Ա. 26, 27։

կրօնաւորութիւնն։ Կրօնաւորութիւն սուրբ և անարատ առ ի Յաստուծոյ և ի Հօրէ՝ այս է. այցելու լինել որբոց և այրեաց ի նեղութեան իւրեանց. անարատ պահել զանձն յաշխարհէ»։

ԱՆԱՊԱՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՍԿԻԶԲՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Բ.

Եթէ յարերուք ընդ Քրիստոսի, ապա զվերինն խնդրեցէք, ուր Քրիստոսն նստի ընդ աջմէ Աստուծոյ։ Զվերինն խորհեցարուք, մի՛ զայս, որ յերկրի ասա է։ Քանզի մեռարուք և կեանքն ձեր ծածկեալ են ընդ Քրիստոսի Յաստուած։ Իսկ յորժամ Քրիստոս յայտնեսցի կեանքն ձեր, յայնժամ և դուք ընդ նմա յայտնեսջիք փառօք։ Պօղոս առաք. Գ. 1—4.

Պաւղոս միայնակեաց եւ Անտոն անապատական

Ինչպէս ասացինք, քրիստոնեայ եկեղեցին միայն Եղիա մարգարէին ու Յովհաննէս Մկրտչին է ընդունում անապատական. Հեսեանք և Ռաքաբիմեանք մի մի աղանդաւորներ էին, Հեսեանք այս առաւելութեամբ՝ որ կարող են վանական կեանքի նախադաղափարը համարուել իրանց յատկորոշ կանոններով։ Հեսեանց մասին առանձին գլուխ է նուիրել Փիլոն Հեբրայեցին (տպ. Վենետ. 1892)։

Սուրբ Գրքի երկու նշանաւոր անապատականների օրինակին հետևողներ չեն պակասում քրիստոնեայ եկեղեցու մէջ նրա կազմակերպուելու հենց առաջին օրերին։ Եղիայի և Յովհաննէս Մկրտչի խստակրօն կեանքը չէր կարող հրապուրիչ չլինել նորադարձ քրիստոնեաների համար, որոնք նորահաւատներին յատուկ բուռն եռանդով

և անձնուրացութեամբ ջանք էին անում իրանց նոր հաւատի սկզբունքները կատարել տառացի կերպով, մոլեռանդութեամբ ու չափազանցօրէն։

Ճգնաւորական և անապատական կեանքը որոշ կերպարանք ստացաւ երրորդ դարում։ Միայնակեացներն ու անապատականները իրանց նախագաղափար Եղիա մարգարէի ու Յովհաննէս Մկրտչի պէս հագնում էին մաղերէն խարազն ու մաշկերէն. ուտում էին շատ չափաւոր, այնքան, որ քաղցածութիւնից չը մեռնէին։ Քրիստոնեայ միայնակեացների ու անապատականների նշանաբանն էր «մեռնել ըստ աշխարհի» և «մեռուցանել զմեղս ի մարմնի»։ Միայնակեաց անապատականները խոյս էին տալիս աշխարհից և նրա գայթակղութիւններից, և անապատների խաղաղ անդորրութեան մէջ նուիրւում էին խստակեցութեան։

Զ. Ռօբերտսոնը ասում է [1]). «Երկրորդ դարի ընթացքում կազմւում էին մարդկանց ամբողջ խմբակցութիւններ, որոնց ցանկութիւնն էր միասին ապրել և կառավարուել միասին կրօնաւորական մի կանոնով։ Նրանցից ոմանք միաբանական կեանքը չափազանց հաճոյալից և կենցաղական համարելով բոլորովին մեկուսանում էին. և երրորդ դարում այդ տեսակ միայնակեացները մարդաբնակ վայրերից աւելի ևս խուսափում էին, որ իրանց թաղեն ամենավայրի և անմերձենալի անապատներում»։

«Խստակրօն միայնակեացների նախասկիզբն պէտք է համարել Պաւղոս Թեբայիդացուն կամ Աղէքսանդրացուն։ Դեկոս կայսրի հալածանքի ժամանակ, երբ քրիստոնեաները իրանց հաւատը փորձութեան ենթարկելուց և իրանց անձը մահից ազատելու համար առանձնանում էին ծածուկ տեղեր, Պաւղոս Թեբայիդացին էլ իբրև մէկը այդ քրիստոնեաներից առանձնացաւ. և անմերձենալի քարայրի մէջ անյայտանալով առաջին միայնակեաց ճգնաւորը դարձաւ»։

Ս. Պօղոս առաքեալը առ Կողոսացիս թղթի մէջ (գլ. Գ. 1—5) ամեն մի հաւատացեալի ասում էր. «Եթէ Քրիս-

1) Истор. Христ. церк. հատ. I. եր. 163։

տոսի հետ յարութիւն առաք, ուրեմն վերինը որոնեցէք, ուր Քրիստոս նստած է Աստուծոյ աջ կողմը։ Վերինը խորհեցէք և ոչ այն, որ այս երկրի վրայ է։ Որովհետև մեռաք, ձեր կեանքն էլ Քրիստոսի հետ Աստուծոյ մէջ է ծածկուած։ Երբ որ ձեր կեանքն եղող Քրիստոսը յայտնուի, դուք էլ Նրա հետ կը յայտնուէք փառքով»։

Եւ հաւատացեալներից աւելի ջերմեռանդները հետևելով այս ձայնին անապատ էին քաշւում Քրիստոսի հետ իրանց կեանքը Աստուծոյ մէջ ծածկելով, որ Քրիստոսի հետ էլ յայտնուեն փառքով։

Դեկոսի հալածանքը եղաւ նրա թագաւորութեան վերջին տարին, 251 թուին. ուրեմն Պաւղոսը առանձնացաւ 251 թուին։ Պաւղոսը իւր անապատում Եղիայից և Յովհաննէս Մկրտչից աւելի խստակեաց էր. բայց չունէր նրանց առաւելութիւնը, որ էր, աներկիւղ համարձակութեամբ մարդկանց ուղղութիւն քարոզել և աշխարհի անիրաւութիւնների ու անօրէնութիւնների դէմ կռուել։

Պաւղոս բոլորովին մեկուսացած՝ ճգնում էր անյայտութեան մէջ մի ապառաժ լերան քարայրում, որի փոքրիկ դռնակը փակւում էր մի քարով։ Այրի մէջ մի բարեհամ և յստակ աղբիւր յաղեցնում էր նրա ծարաւը. այրի մօտ եղած արմաւենիներն էլ մատակարարում էին նրան սնունդ ու հագուստ։ Նրա ճգնութեան վերջին վաթսուն տարին օրական մի կտոր հաց էլ հասցնում էր նրան մի ագռաւ, ճիշդ այնպէս, ինչպէս Եղիա մարգարէին Քոռաթի հեղեղատի առանձնութեան մէջ։

Պաւղոսի վարքը գրողը [1]) սկսում է նրա վարքագրութիւնը պարզելով տարակուսութիւնը, թէ ո՞վ է ամենից առաջ ընակուել անապատում։ Նա ասում է որ «ոմանք յիշելով Եղիային ու Յովհաննէս Մկրտչին, սրանց են համարում անապատական վարքի սկիզբն։ Սակայն Եղիան

---

1) Վարք Սրբոց հարանց և քաղաքավարութիւնք նոցին, ըստ կրկին թարգմանութեան նախնեաց, հատոր առաջին. ի Վենետիկ. ի տպարանի Սրբոյն Ղազարու յամի 1855, եր. 1—2։

մեծ է միայնակեացներից, իսկ Յովհաննէսը նախ քան իւր ծնունդը մարգարէացաւ։ Ուրիշներն էլ վիճում են, որ Անտոնն է եղել անապատական ուխտի առաջնորդը...բայց նա ոչ թէ ամենից առաջինն է, այլ թէ, նրանով շատերը հրապուրուեցին դէպի անապատական կեանքը։ Նոյն իսկ երանելի Անտոնի Ամատաս ու Մակարիոս աշակերտները ասում ու պնդում են, թէ անապատական վարքի սկիզբն ու առաջնորդը եղել է Թեբայիդացի ոմն Պաւղոս, և մենք էլ այս բանի մէջ հաստատուած ենք»։—Այսպէս ուրեմն, ըստ եկեղեցական աւանդութեան էլ քրիստոնեայ անապատական վարքի սկիզբն ու առաջնորդը եղել է ոմն Պաւղոս Թեբայիդացի։

Ջ. Ղօբերտսոնի ասելով [1]) Պաւղոսը անապատ քաշուեց 23 տարեկան հասակում. անյայտութեան մէջ ճգնեց 107 տարի և վախճանուեց 130 տարեկան, «առանց վայելելու իւր ժամանակին որ և է փառք կամ հռչակ»։ Պաւղոսի թաղողն եղաւ Անտոն անապատականը, որ և իբրև ժառանգ ստացաւ նրա արմաւենու թելերից շինուած զգեստը և նրա վարքը աւանդեց իւր աշակերտներին։ Պաւղոսի վարքը գրեց Հերոնիմոսը, անուանելով նրան առաջին քրիստոնեայ ճգնաւոր։ Ջ. Ղօբերտսոնը տարակուսելի է համարում այդ և ծանօթութեան մէջ ասում է [2]). «Սակայն տարակուսելի է, արդեօք Պաւղոսն էր, որ քրիստոնեաների մէջ մուծեց միայնակեցական և կրօնաւորական կեանքը»։ Մեզ այնպէս է թւում, որ Ղօբերտսոնը կարծում է թէ միայնակեցութեան ներմուծումն Պաւղոսից աւելի վաղ է եղել. և այդպէս էլ է։ Հակառակ դէպքում նա ինքն հակասած կը լինէր իրան. նա գրելով թէ «երկրորդ դարի ընթացքում կազմուած էին մարդկանց ամբողջ խմբակցութիւններ,...» ինչպէս վերը տեսանք, չի կարող Պաւղոսին համարել միայնակեացների նախասկիզբն։ Պաւղոսը, ըստիս, անապատականների մէջ իւր խստակրօնութեամբն է առաջին միայնակեացը, ինչպէս

---

1) Ист. Христ. церк. հատ. I. եր. 294։

2) Նոյն. հատ. I. եր. 88. ծանօթ. 4։

և Անտոնը իւր հետևողներով։ Ս. Գրքի անապատականները միայնակեաց չէին. Եղիան ունէր իրան աշակերտ ու ընկերակից—Եղիսէին (Դ. թագ. Ա. Բ.), Յովհաննէս Մկրտիչը նոյնպէս աշակերտներ ունէր (Մատթ. Թ.։ Ղուկ. Է. 18—34)։ Անշուշտ, որանց հետևողներն էլ կունենային իրանց աշակերտները, միայնակեաց չէին լինի։

Զ. Բօլերտսոնի հաշիւը Պաւղոսի կեանքի մասին չէ համապատասխանում իրականութեան։ Նրա հաշուով Պաւղոսը 251 թուին 23 տարեկան էր երբ քաշուեց անապատ. և ապրեց 130 տարի. այս հաշուով Պաւղոսի ծնունդը դալիս է 228 թուին, ապրեց 130 տարի, ուրեմն վախճանուեց 358 թուին։ Անտոն անապատականի համար նոյն Բօլերտսոնը գրում է. «Նրա (Պաւղոսի) առանձնանալու տարին, 251 թուին քրիստոնեայ ծնողներից ծնուեց Թեբայիդի գիւղերից մէկում—Կոմում—աւելի հռչակ ունեցող Անտոնը [1]) ... «որը ապրեց 105 տարի և 356 թուին, Աթանասի անապատականների մէջ ապաստանարան որոնելուց մի քանի օր առաջ, վախճանուեց»[2])։—Արդ, 356 թուին վախճանուած Անտոնը կարող էր իրանից երկու տարի յետոյ (358 թուին) վախճանող Պաւղոսին թաղել, ի հարկէ ոչ։

Հայերէն աղբիւրները [3]) լուծում են այս տարակուսանքը յայտնելով, թէ Պաւղոս որ «ուսեալ էր զհելլենական և զեգիպտական դպրութիւն», Դեկոսի հալածանքի տարին (251 թ.) 16 տարեկան քաշուեց անապատ։ Այս հաշուով ուրեմն ծնուել է Պաւղոսը 235 թուին. ապրել է 113 տարի, ուրեմն վախճանուել է 348 թուին, այսինքն, Անտոնից 8 տարի առաջ։

Պաւղոսը իւր 97 ամեայ ճգնութեան մէջ աշխարհից բոլորովին կտրուած էր։ Նա որպէս իսկական միայնակեաց՝ աշակերտ և ընակակից չունէր։ Նրա գոյութիւնը հրաշքով

1) Ист. Христ. церк. հատ. I. եր. 294—5։

2) Նոյնը եր. 297—98։

3) Յայտնութիւնք Դիոնեմբերոս. և Տրէի գ. կից՝ «տոն է Նաւումայ մարգարէին». Վարք հարանց եր. 1—16։

յայտնուեց Անտոնին, որ մեծ դժուարութեամբ նրա քարայրը գտնելով, փոքրիկ դուռը փակուած գտաւ։ Պաւղոսը չէր կամենում ընդունել մինչև անդամ, իբրև ճգնաւոր մեծ հռչակ ստացած, Անտոնին էլ, որը թախանձելով բաղխում էր նրա դուռն ու ասում. «Ես գիտեմ, զի ոչ եմ արժանի տեսլեան քո. բայց եթէ ոչ տեսցէ, ոչ երթայց ասի։ Զգաղանս ընդունիս, զմարդ զիմիրդ ոչ տեսանես»։ Պաւղոսը մեծ դժուարութեամբ Անտոնին ընդունելուց յետոյ, 97 տարի բոլորովին կտրուած լինելով աշխարհից, անտեղեակ անցած դարձածներին, հարցնում է, «զիմիրդ կան ազգք մարդկան և ո՞րպէս են թագաւորք երկրի» (Յայտաւուրք)։ —Ներկոսի հալածանքի ժամանակ, 251 թուին, Պաւղոսը հեռացած լինելով աշխարհից՝ նա 348 թուին չը գիտէր թէ մարդիկ քրիստոնեայ են դարձել, քրիստոնէութիւնը համաշխարհային կրօն է, և թագաւորք երկրի իբրև քրիստոնեայ՝ քրիստոնէութեան պաշտպան են. միայն եկեղեցին վրդովուած էր ներքին երկպառակութեամբ հերձուածների ու հերետիկոսների պատճառով։

Մեծ Սոկրատը Պաւղոսի մասին ոչինչ չէ գրում, իսկ Փոքր Սոկրատը Ամմոնի պատմութիւնը անելիս՝ փակագծի մէջ ասում է. «որ (անապատաւորք) թերևս նախաակիզբն առեալ ի Պաւղոսէ և յԱնտոնէ, որոց և պատմութիւնք իբրեանց բացատրեն, զոր երանելին Աթանաս ճառէ»[1])։

Ս. Պաւղոս միայնակեցի յիշատակը ոտնում է մեր ս. եկեղեցին Դեկտեմբերի սկզբներին՝ «Սրբոց հարցն Եգիպտացւոց» ոտնին։ Շարական երգւում է ս. Անտոն անապատականի կանոնը։

Գէորգ—Մորից Էբէրս գերմանացի եգիպտաբանը Homo Sum—Մարդ եմ—վերնագրով մի վէպի մէջ նկարագրում է ճգնաւորական կեանքը սկսելով այսպէս. «Մենք մեր ընթերցողներին տանում ենք չորրորդ դարի երևանա-

1) Սոկրատայ Սքոլաստիկոսի եկեղեցական պատմութիւն... աշխատասիրութեամբ Մեսրոպ վարդապետի Տէր Մովսիսեան, միաբանի Ս. Էջմիածնի Վաղարշապատ 1897։ Մեծ Սոկր. եր. 328։ Փոքր Սոկր. եր. 65։

կան թուականների սկիզբները Քրիստի ծննդից յետոյ, դէպի Սինայի լեռը, որի նուիրական հողի վերայ մի քանի տարուց վեր առանձին առանձին բնակութիւն են հաստատել աշխարհից ձանձրացած, ապաշխարութեան նուիրուած անապատականներ, դեռ առանց կարգ ու կանոնի, առանց կապակցութեան միմեանց հետ» (թարգմ. Ստ. Մալխասեանց, Թիֆլիս 1898)։ Վէպի հերոսն է Պաւղոսը, երիտասարդութեան ժամանակ լաւ կրթութիւն ստացած, Աղէքսանդրիայի կրթուած երիտասարդութեան ծաղիկը։ Պաւղոսը հանդիսացրած է ճգնաւորների ամենալաւ տիպ. նրա մէջ մարմնացած են անկեղծաւոր աստուածպաշտութիւնը, կարօտեալներին օգնելու անձնուիրութիւնը և ընկերի փոխարէն անարդուելու, տանջուելու ու հալածուելու անձնուրացութիւնը։

Պաւղոսը իսկապէս միայնակեաց ճգնաւորի ամենահամակրելի տիպ է։ Հեռի է նա ցուցամոլութիւնից և բոլորովին նուիրուած Աստուծուն։ Աշխարհը նրա համար գոյութիւն չունէր։ Նա, ճշմարիտ է, մարդկանց ուղղութեան համար, ըստ եկեղեցական աւանդութեան, բան չէ արել, բայց և չէ շահագործել դիւրահաւան ժողովրդի հաւատը։ Պաւղոսից յետոյ անապատականների մէջ երկրորդ տեղը բռնում է Անտոն անապատականը, որ աւելի հռչակ ունէր, որովհետև բոլորովին կտրուած չէր աշխարհից։ Նա, Պաւղոսի պէս խստակրօն ճգնութեամբ բնակուելով անապատում, Եղիայի ու Յովհաննէս Մկրտչի նման աշակերտ ու հետևողներ ունէր. և հարկաւոր դէպքում անապատի խորքից իւր ազդարար ձայնը լսեցնում էր աշխարհում։

Անտոնը [1]) դեռ տղայ հասակից մտախոհ էր և կրօնական բնաւորութիւն էր ցոյց տալիս. նա միայն իւր մայրենի կոպտական կամ եգիպտական լեզուով կարդալ գրել

---

1. Ջ. Ֆօքերտսոն Ист. Христ. Церк. հատ I. եր. 294—300։ Վարք հարանց եր. 17—80։ Լիակատար վարք Սրբոց հատ. II. եր. 57—102։ Յայտմաւուրք Յունվ. ԺԷ. և Արաց Ժ. «Վարք և հանգիստ մեծ հօրն ամենայն հարանց»...

սովորեց. յունարէնի այբ-բենն էլ չէր ճանաչում և յունարէն չը գիտէր խօսել։ Դեռ 20 տարեկան չը կար, որ ծնողները մեռան և բաւական նշանաւոր ժառանգութիւն ստացաւ։ Սակայն եկեղեցում միանգամ երիտասարդ հարուստի մասին աւետարանի ընթերցմունքը լսելով՝ իւր հողերը բաժանեց համագիւղացիներին, գոյքն ու կայքը ծախեց, դրամի մի փոքր մասը տալով քրոջը նրա ապրուստի համար, մնացածը բաժանեց աղքատներին և հեռացաւ ոկզբում՝ մօտաւոր անապատ ճգնաւորական կեանք վարելու։ Նա այցելում էր հռչակ ունեցող ճգնաւորներին և լուրացնում նրանց առանձնայատուկ առաքինութիւնները,

Անտոնը 275—305 թիւը, 30 տարի բոլորովին անյայտ մնաց Կարմիր ծովի ափին մի աւերակ ամրոցում իւր դադարի մէջ։ 305 թուին սկսեց արդէն աշակերտներ ընդունել։ 312 թուին Մաքսիմինի հալածանքի ժամանակ շտապեց Ալէքսանդրիա հալածուած քրիստոնեաներին սիրտ տալու, կարօտեալներին օգնելու և թերևս մարտիրոսական պսակին արժանանալու, բայց նրա վերջին ցանկութիւնը չը կատարուեց և նա աւելի ևս հեռաւոր անապատ քաշուեց։ Առանձնացաւ մի բարձր տարի լանջին մի այրի մէջ, որի մօտ կային մի պաղ և վճիտ աղբիւր և մի քանի արմաւենիներ։ Եւ որպէս զի ուրիշների վատակով չապրի ու միևնոյն ժամանակ էլ թէ զբաղմունք ունենայ և թէ իրան ացելողներին կերակրել կարողանայ՝ մի փոքրիկ տարածութեան վրայ ցորեան ու կանաչեղէն էր ցանում ու մշակում։ «Անապատի գազանները աղիւրից ջուր խմելու գալով՝ վշացնում էին նրա ցանքը, ուստի մի անգամ բռնեց մէկին և գուրգուրալով ասաց. երբ ես ձեզ նեղութիւն չեմ տալիս, դուք ինձ ինչո՞ւ էք վնասում։ Հեռացէք, և, ի սէր Աստուծոյ, այլևս մի գաք[1]»։

Անտոնը որքան հեռանում էր աշխարհից, աշխարհը այնքան ներմուծանդութեամբ հետևում էր նրան։ Անտոնը անապատականների այն լաւագոյն տիպերից էր, որոնք

1, Զ. Գրիգորաս Ист. Христ. Церк. հատ. I. եր. 296։

իրանց հոգու փրկութիւնը հոգալով՝ ուրիշներին անտես չեն անում։ Նա բազմաթիւ հետևողներ ու աշակերտներ ունէր։ Հաշտեցնում էր թշնամիներին, միխիթարում էր վշտացածներին, կրօնական խնդիրներում ներդործական դեր էր կատարում և խորհուրդներ տալիս. տկարների իրաւունքները պաշտպանելու համար միջնորդութիւն էր անում հզօրների և դատաւորների առաջ։ Հարատահարուածները Անտոնի միջնորդութեան էին դիմում և նրա միջնորդութիւնը զուր չէր անցնում։ Սմեն անգամ, երբ այսպիսի մի դործ հարկադրում էր նրան հեռանալ իւր ճգնարանից, վերադառնալիս առաջին խօսքը լինում էր. «կրօնաւորը առանց մենակութեան այնպէս է՝ ինչպէս ձուկը առանց ջրի»։ Նմանօրինակ մի առած էլ ունի հայ կրօնաւորութիւնը, «վանք՝ վարդապետի կեանք»։ Անտոնի համբաւը տարածուած էր աշխարհէ աշխարհ։

Կոստանդին մեծն ու իւր որդիքը թուղթ դրեցին Անտոնին խնդրելով՝ որ գնայ արքունիք։ Բայց Անտոնը չը հրապուրուեց, և իւր աշակերտներին ասաց. «մի զարմանաք, որ կայսրը մեզ դիր է ուղարկում. նա էլ մեր պէս մարդ է։ Այն բանին զարմացէք, որ Աստուած մարդկանց համար գրելով իւր օրէնքը՝ աւանդեց մեզ իւր Որդու ձեռքով»։

Յայսմաւուրքին [1]) համեմատ Անտոնը մերժեց Կոստանդին մեծի հրաւէրը ասելով իւր աշակերտներին. «Եթէ երթամ, լինեմ տէր Անտոն, և եթէ չերթամ, ես իցեմ աբեղայ Անտոն։ Վա՜յ մարդոյն, որոյ անունն մեծ է քան զգործն»։ Եւ յիրաւի, Անտոնը չը դնաց կայսրի մօտ, փոքր անունով բայց մեծ գործով՝ մեծ հանդիսացաւ ու այդպիսի փառքով էլ վախճանուեց, ինչպէս ասացինք, 105 տարեկան, 356 թուին, այն ժամանակ, երբ Աթանասը ապաստան էր որոնում անապատի կրօնաւորների մէջ։ Անտոնի մահը անապատականները ողբացին հեռաւոր արտայայտութեամբ։ «Մեծ բարեխօս կորոյս աշխարհս և մեծ մարդ ընկալան

1. Յայսմաւուրք, Յունվար ԺԷ. և Սրաց Ժ.

երկինք։ Եգիտ վերինն, զոր խնդրէր և կորոյս ներքինս, զոր ունէր [1])»։

Ս. Անտոն Անապատականի յիշատակը տօնում է եկեղեցին Յունվար ամսին։ Ս. Անտոնին նուիրուած շարականի [2]) մէջ կոչուած է նա «նախատակիզքն միանձանց».

Արիոսական վէճերի ժամանակ Ս. Անտոնն ու իւր հետևողները ուղղափառութեան տօկուն և հզօր պաշտպանները դարձան։ Որքան և խստակրօն լինէր Անտոնը, այնուամենայնիւ հեռի էր այն ծայրահեղութիւններից, որ ունէին նրա հետևողները։ Նա լաւ էր հասկացել թէ ինչ բաներն վտանգ են սպառնում անապատական կեանքին, ուստի և եռանդով զգուշացնում էր անապատականներին, որ իրանց բոլոր յոյսերը չդնեն կրօնաւորական արտաքին ձևերի վրայ։

Ոչ Պաւղոս միայնակեացը և ոչ էլ Անտոն անապատականը՝ իրանց հետևողների համար որոշ կանոն և հանրակենցաղան կամ միաբանական ուխտ չհաստատեցին. անապատականները ապրում էին ցաք ու ցրիւ առանց որոշ ուղղութեան և գործում էին ու ապրում ով ինչպէս կամենում էր, կանոն ընդունելով խստակրօնութիւնը, մշտամուն աղօթքն ու պահեցողութիւնը։

---

1. Վարք հարանց հատ. ա. եր. 81։ Թուղթ Սելատիոնի առ Մակար և Ամատաս։

2. Կանոն Անտոնի անապատականի, ԺԵ.

Գ.

Պախոմ հիմնադիր վանքերի եւ վանական կեանքի. Անապատականների հակումները: Կրօնաւորները որպէս զէնք իրանց մեծաւորների ձեռքին: Կրօնաւորների մոլութիւնները.

Վանական կեանքի կանոն սահմանողն է Թեբայիդացի Պախոմը, որ ծնուեց 292 թուին։ Մեր եկեղեցին չէ ոչնում Պախոմի յիշատակը, սակայն մեր հոգևոր գրքերի մէջ[1]), բաւական տեղեկութիւն ունենք Պախոմի մասին։ Վարք Հարանցը տալիս է մեզ Պախոմի ուղղութեան մասին մի քանի տեղեկութիւններ, մէջ բերելով նրա տաժնները կամ վճիռները կրօնաւորական կեանքի երևոյթների մասին. նրա կենսագրութեան մասին տեղեկութիւն ստանում ենք Յայսմաւուրքից և Վարք Սրբոցի 12-րդ. հատորից։

Պախոմը, (Պախոմէոս կամ Պաքոմէոս, Պաքումէոս Պաքմէոսը) հեթանոս ծնողների զաւակ էր, սկզբում՝ զինուոր. հաւատաց Քրիստոսին և դեռ չմկրտուած բանտարկուեց. Կոստանդիանոսի ժամանակ, հալածանքը դադարելիս՝ ազատուեց բանտից, գնաց անապատ և ծաղկեցրեց կրօնաւորութեան կարգը Նեղոսի ափին Տաբենայի մեծ վանք շինելով։ Նա ուսանելով հրեշտակից՝ իւր միաբաններին գրաւոր կանոն տուեց և վախճանուեց 348 թ.։ Պախոմի քոյրն էլ միայնակեաց կոյսերի համար վանք շինեց։

Ջ. Բօքերտսոնը, ազբիւր ունենալով նոյն հոգևոր գիրքերը, ասում է[2]), որ Պախոմը վանական կեանքի կանոնները ստացաւ հրեշտակի ձեռքով պղնձի վրայ փորագրուած 24 յօդուածով։ Նա Նեղոս գետի մի կղզի վերայ հիմնեց Տաբեննայի վանքը։ Վանքի միաբանութիւնը

---

1), Յայսմաւուրք Ապրիլի ԻԸ. Մայիսի ԻԱ. բ կցորդ։ Բ. Վարք հարանց Ա. հատ. 92—93 453, 647։ Նոյն Բ. հատ. 167, 398, 407, 422, 476. 490։ Գ. Լիակատար Վարք Սրբոց հատ 12-որդ.

2), Ист. Христ. Церк. I. հատ. Монашество եր. 294—323։

այնքան ընդարձակուեց, որ մինչև հիմնադրի մահը նրանից ութ վանք գոյացաւ 3000 միաբաններով, որոնցից 1400-ը գլխաւոր վանքումն էին ապրում։ Հետևեալ դարի սկզբին կրօնաւորների թիւը հասնում էր 5000-ի։ Այսպէս, կրօնաւորութիւնը, որ սկիզբն առաւ միայնակեաց անապատական ճգնաւորներից, Պախոմի ձեռքով արդէն եղբայրութիւն կամ միաբանութիւն դարձաւ և առանձին, անմարդաբնակ անապատների քարանձաւների տեղ վանքեր գոյացան։

Վանականները ապրում էին իւրաքանչիւր խցում երեք երեք հոգի միասին, և գտնւում էին մի մեծաւորի իշխանութեան տակ, որ ասորերէն կոչւում էր ապբա (հայր), իսկ յունարէն՝ արքիմանդրիտ (փարախապետ)։ Ամեն բան հասարակաց էր, և կարգի խանգարումն էր համարւում ասելը. «իմ վերարկուն կամ գիրքը կամ գրիչը»։ Վանականները զբաղւում էին երկրագործութեամբ, կողմներ ու պարաններ հիւսելով, և այլ նման արհեստներով. արտադրութիւնները նաւակով տանում էին Աղեքսանդրիա, և վաճառում էին այնտեղ, որով ոչ միայն հոգացւում էին վանքերի պէտքերը, այլ դեռ մի գումար էլ ստանւում ու ծախսւում էր բարեգործութեան համար։

Վանականները օրը մի քանի անգամ աղօթում էին. շաբաթուայ չորրորդ ու վեցերորդ օրերը, այսինքն, չորեքշաբթի և ուրբաթ պաս էին պահում. հաղորդւում էին շաբաթ ու կիրակի օրերը։ Նրանք միասին էին ճաշում, և սեղանը սկսւում էր ու վերջանում աղօթքով ու սաղմոսերգութեամբ։ Լռութեամբ ու դէմքերը ծածկած էին ճաշում. (վեղարի կամ կնգուղի ծածկոյթը փակելով դէմքի մեծ մասը, հնարաւորութիւն չէր տալիս տեսնել հանդէպը և ոչ ու ձախ նստողներին) և բացի առաջնորդը դրած կերակրից ուրիշ բան կամ իրանց սեղանակիցներին չէին տեսնում։ Կանոնը չէր սահմանափակում կերակրի քանակութիւնը. ամեն ոք իւր աշխատանքի վաստակն էր ուտում հասարակաց սեղանից։ Մեծ հոգածութեամբ խնամում էին հիւանդներին։ Վանական կրօնաւորները

ինքնատիպ զգեստ էին հագնում, որոնց մէջ առաջին տեղը բռնում էր այծի մորթը.—այս բանում հետևում էին անապատական կեանքի հայր Եղիա Մարգարէին։—Նրանք միշտ գոտեպինդ պէտք է լինէին. միայն Ս. Հաղորդութիւն ընդունելու ժամանակ թոյլատրուած էր գոտին արձակել։ Հագնուած էին քնում այն էլ մի տեսակ աթոռների վրայ. իսկ աթոռները այնպէս էին յարմարացրած, որ նրանք քնած ժամանակն էլ կանգնած դրութեան մէջ էին լինում։

Հարանց վարքում (Հատ. Բ. եր. 479). կարդում ենք... «յայտնեցաւ նմա (Պաքմէի) հրեշտակ Աստուծոյ և ասէ... զքո ճանապարհդ ուղղեցեր. եկ այժմ յայրէդ և ժողովեա զմիայնակեացս և ընակեա ընդ նոսա. և որպէս ուսուցից քեզ, այնպէս խրատեա զնոսա։ Եւ գրեաց տախտակ մի հրեշտակն և ետ ծերոյն, և այս էին սկիզբն գրոյն. շնորհեացես իւրաքանչիւր ըստ զօրութեան ուտել և ըմպել և ըստ զօրութեան իւրաքանչիւր գործ գիցես. և մի արդելուցուս՝ որք պահեն, և մի, որք ուտեն. և արա զօրն ի գործ մշակութեան նոցա և աղօթք նոցա՝ անձանձրոյթք։ Իսկ աւագացն. որք ծերքն են, արասցես խրճիթս և արկցես ի նեղքս երիս երիս, և կերակուրք նոցա զինչ և խնդրեսցեն. նստել և ուտել և բաղմել, և աղօթք նոցա անձանձրոյթք. և ադանելիք նոցա ցերեկն մաշկեայս և գիշերն այծեայս. և առնուլ նոցա օրէնս զուրբաթ, և զշաբաթ և զկիւրակէ. և ի ժամ օրինացն գոտեալծք եղիցին. և այս նշան կնգղաց նոցա, զի եղիցի նա առանց խաւու և խաչ ծիրանի յաջակողմանն։ Եւ արար Պաքմէոս որպէս և հրամայեաց հրեշտակ տեառն. շինեաց վանս և ժողովեաց ի նմա եղբարս իբրև եօթն հազարս, ուր են մինչև ցայսօր, ուր և մեռաւ երանելին Պաքմէոս»։

Կանանց կամ կուսանաց վանքերի հիմնադիրն էլ Պախոմն է։—Մի անգամ Պախոմի քոյրը եկաւ նրան տեսնելու. Պախոմը նրան չընդունեց, միայն դռնապանի միջոցով յայտնեց՝ որ ինքն առողջ է։ Պախոմը իմանալով, որ

քոյրն էլ ցանկութիւն ունի վանք քաշուել, իւր միաբան-ների ձեռքով նրա համար մի առանձին վանք շինեց, ուր հաւաքուեցին հաւատաւոր կանայք կամ միաձնուհիք. նրանց վանականը կարգուեց Պախոմի քոյրը։

Ինչ ասել կուզի, որ կրօնաւորները ամուսնանալ չէին կարող և կապուած չէին ամուսնական կեանքով։ Հեռ-սեանց ուխտի և Պախոմի վանական կանոնների մէջ բա-ւական նմանութիւն կայ։

Երբ Պախոմը Տաբեննայի վանքն էր հիմնում՝ նոյն ժամանակին Մակար աւագը տեղափոխւում է Եգիպտոսի Լիբիական սահմանին մօտ Սկիտէի անապատը և Ամոնն էլ՝ Նիտրիական լեռը։ Շուտով որանց մօտ խմբւում են կրօնաւորներ, որոնք ապրում էին կամ առանձին խցե-րում՝ որպէս միայնակեացներ և կամ մի հանրա-կացարանում, որ Լավրա էր կոչւում։ Միայնակեացները շաբաթուայ վերջին և առաջին օրերին, այն է, շաբաթ և կիւրակէ, հաւաքւում էին ժամասացութեան ներկայ լինե-լու։ Եթէ մէկը բացակայում էր, խմանում էին որ հիւանդ է. իսկոյն նրա խուցը մարդ էին ուղարկում նրան այցե-լելու։ Բացի այս դէպքից նրանք ամենևին չէին խօսում իրար հետ։ Դ. դարի վերջին Նիտրիական լեռան կրօնա-ւորների թիւը մօտ 5000 էր։ Պախոմի կանոնով, որ ուրիշ միաբանական ուխտեր էլ ընդունել էին, երեքամեայ փոր-ձից յետոյ կարելի էր նորընծային աբեղայական կամ կրօնաւորական աստիճան տալ [1])։

Կրօնաւորների առաջին պարտքերն էին աղօթքն ու պահեցողութիւնը. կային էլ, ինչպէս Մակար ծերն էր [2]), որոնց քերանը ամբողջ մեծ պասին ոչ հաց և ոչ ջուր էր մտնում. միայն կիւրակէից կիւրակէ կաղամբակուրծ (երևի մախոխ) էին ուտում։ և աշխատելիս էլ, ձեռքերով գործում, բե-րանով աղօթում էին։ Նրանց կենցաղավարութեան մասին գաղափար կազմելու համար պէտք է կարդալ նրանց վարքը,

---

1), Ист. Христ. Церк. հատ. I. եր. 298—302

2). Վարք Հարանց- հատ. I. վարք. Մակարայ. եր. 92—93.

և Նեղոսի խրատները [1]։ Կրօնաւորութեան հիմնադիրներն ու հայրերը խոստովանում էին, որ մի յաջողուչ զբաղմունք էլ անհրաժեշտ է։ Յայտնի առած կար. «զբաղուած կրօնաւորը մի դեւով էր պաշարուում, իսկ անգործը՝ ամբողջ լեգէօնով։ Կրօնաւորների զբաղմունքը ընդհանրապէս ֆիզիկական էր. նրանցից շատ քչերն էին գրագիտութեամբ զբաղւում։ Երբ մի փիլիսոփայ հարցրեց Անտոնից, թէ նա ինչպէս է առանց գրքի օր անցկացնում. Անտոնը պատասխանեց. իմ համար աշխարհը այնպիսի գիրք է, որ միշտ էլ ձեռքի տակ ունեմ և նրա մէջ կարդում եմ Աստուծոյ խօսքը կարդալ՝ երբ էլ կամենամ։ Յայտաւորքը այս դէպքը հետեւալ կերպով է աւանդում. «Եւ այլք ոմանք յիմաստնոց գնացին առ Անտոն և ասեն. «Որպէս կարես միայն կեալ յանապատս առանց գրոց։ Եհարց ցնոսա Անտոն. Ասացէք ինձ, եթէ ո՞ր լաւ պատճառք են մարդկան, գիրն, եթէ միտք։ Ասեն նոքա. Միտքն։ Ասէ Անտոն. ապա ողջամտացն գրոց պէտք ոչ են»։

«Կրօնաւորները կամ անապատականները շատ ոգէոր էին. և շատերն իսկ հազիւ կարողանում էին կարդալ։ Տգիտութիւնը, որ աշխարհիկ հոգևորականութեան մէջ արհամարհուած էր, անապատականների մէջ փառաւորւում էր որպէս սրբութեան յատկանիշ։ Իրանց ոգիութեամբ հեշտօրէն հպատակում էին նրան, ով նրանց մտքի վերայ ազդում էր և տոկուն յամառութեամբ պաշտպանում նրանց հայեացքները։ Այսպէսի կրօնաւորները լաւ զէնք էին իրանց մեծաւորների հրամանները կատարելու։ Դրանք շատ անգամ իրանց շուրջը եպիսկոպոսներին դահընկէց էին անում և ուզածին էլ ընտրում։ Նրանց այս գործունէութեան ապացոյցն է արիոսական վէճերի ժամանակ Անտոնի ղեկավարութեամբ նրանց կատարած դերը ուղղափառութեան յաղթանակի համար։ Կրօնաւորները խուսափում էին հոգևոր աստիճաններից։ Կրօնաւորութեան կանոններ սահմանող Պախոմը պատուիրում էր

---

1), Վարք Հարանց Բ. հատ.

խուսափել ձեռնադրութիւնից՝ ինչպէս ծուղակից։ Եգիպտոսում սովորական դարձուածք էր. «Կրօնաւորը պէտք է փախչի եպիսկոպոսից ու կանանցից, որովհետև նրանցից ոչ մէկն էլ հնար չի տայ կրօնաւորին իւր խցում հանգիստ մնալու և «զվերինն խորհելու»։

Անապատականների մէջ կային կրօնաւորներ էլ, որոնք արտաքուստ կրելով Պաւղոսի ու Անտոնի ձևերը, չունէին ոչ առաջինի անկեղծ խստաբերութիւնն ու աշխարհատեցութիւնը և ոչ երկրորդի անկեղծ խստաբերութեան ու աշխարհատեցութեան միացած մարդասիրութիւնն ու անձնուրացութիւնը։

Ջ. Բօբերտսոնը [1]) այսպէս է ընդունում այդ տեսակ ճգնաւորներին. «սէրը դէպի երկրայինը, որը, անապատականութիւն կամ ճգնաւորութիւն ընդունելով, ըստ երևոյթին յաղթուած էր կարծուում, վերակենդանանում էր նոր, աւելի գծուծ կերպով։ Պատմում են, որ շատերը հարստութիւնից ու ճոխութիւնից հրաժարուած լինելով մի որևէ դանակի, բեւեռի, առեղի կամ դրչի համար դողդողում էին ու չափազանց ժլատութիւն ցոյց տալիս, ոչ ոքի չը թոյլնելով մօտենալ մինչև անգամ իրանց գրքերին. և այդ տեսակ դատարկ բաների համար սաստիկ վրդովւում էին։

Ժամանակի ընթացքում կրօնաւորները մոռանալով իրանց ուխտի սկզբնական նպատակը, սկսեցին քաղաքներում թափառել նուէր հանգանակելու պատրուակով։ Դարտաւորները, կրօնաւորների թափառումների մէջ, արդարադատութեան գործերին խառնուելու միտումն նկատելով՝ ներշնչեցին Թէոդոսին 390 թուի օրէնքով արգելել այդ բանը։ Սակայն երկու տարուց յետոյ օրէնքը այնքան թուլացաւ, որ կրօնաւորները սկսեցին դարձեալ յաճախել քաղաքները իրանց դէմ եղած անարդարութիւնների ու զրկանքների համար պաշտպանութիւն որոնելու պատրուակով։

---

1), Ист. Христ. ст. церк. հատ. I. եր. 318։

«Տարօրինակ հագուստներով ու տարօրինակ կերպարանքով երևցող կեղծաւոր կրօնաւորները շահագործում էին ժողովրդի դիւրահաւանութիւնն ու առատաձեռնութիւնը. նրանք ծանր շղթաներով կաշկանդուած՝ կասկածելի մասունքներ էին մանածում, սարսափելի առասպելներ պատմում այն արկածների ու փորձութիւնների մասին, որոնց, որպէս թէ, ենթարկւում էին նրանք չար ոգիների կողմից. մինչդեռ դաղտուկ շռայլ և սանձարձակ կեանք էին վարում։ Լիբանիոսը նրանց նմանեցնում է մերձաւորներից անգործներին, որոնք ուրիշների հաշուին ճոխ ապրում են։ Յուլիանոս ուրացող կայսրը ցինիկներին կծու բան ասած լինելու համար կրկնում էր. «ցինիկները նման են դալիլեացիներից այն հերձուածներին, որոնք հրաժարւում են իրանց պատկանած հնչին ստացուածների տիրապետութիւնից, որ հարստութիւն և դիրք ձեռք բերեն»։ Եւնապիոսը ասում է. «կրօնաւորները խոզի կեանք են վարում. նա է կարող մեծ իշխանութիւն ձեռք բերել՝ ով դերադասում է սև հագնելը և արհամարհում է ընդհանուր բարեվայելչութիւնը»։—Որքան և քրիստոնէութեան թշնամիներից չափազանցօրէն լինեն դատափետուած կրօնաւորները, բայց անկարելի է չընդունել, որ նրանց մէջ որոշ ճշմարտութիւն կայ։

Գրիգոր աստուածաբանը (Նազիանզացի), թէև ինքն խստակրօն, բայց խստութեամբ դատապարտում էր մոնոզոնների կամ վանական կրօնաւորների զանազան կեղծաւոր ձևերն ու ասում [1]). «Կրօնաւորներից շատերը հրեշտակ են թւում այն պատճառով, որ կոպտաբար են խօսում և երկար մազեր կրում. բայց իսկապէս նրանք ամեն տեսակ արատներով զեղծուած յանցաւորներ են։

---

1), Жизнь и Труды Свв. Отцовъ. и Учителей церкви հեղ. Ֆարրարի, թարգմ. Ռուս А. П. Лопухинъ. Ս. Պ. Բուրգ.

Դ.

Կրօնաւորական եւ վանական կեանքի տարածուելը Եգիպտոսի սահմանից դուրս՝ Պաղեստինում, Ասորիքում (Սիրիա), Հայաստանում եւ Պոնտական գաւառներում: Կրօնաւորութեան այլափոխումն: Խոտանարակներ (воскн): Սինակեացներ: Գրի մէջ նգնողներ:

Կրօնաւորական և վանական կեանքը Եգիպտոսից արագութեամբ տարածուեց նրա սահմաններից դուրս։ Վանական կեանքը Պաղեստին ներմուծողն էր Անտոնի աշակերտ և նրան հետևող Իլլարիոնը, որ 50 տարի ապրեց (306—356 թիւ) Գազայի մօտի անապատում։ Ս. Եփրեմի հանճարի ու բարեպաշտութեան շնորհիւ անապատական կեանքը Միջագետքում շատ համակրութեամբ ընդունուեց, մեծ ծաւալ դտաւ և առանձին փայլ ստացաւ։

Սեբաստիայի Եւստաթէոս հայ եպիսկոպոսը վանքեր հիմնեց Հայաստանում, իսկ Ս. Բասիլը վանական միաբանութիւններ հաստատեց Հայաստանին սահմանակից Պոնտոսում և Կապադովկիայում[1]։ *Եւստաթէոսը հրապուրուած անապատական կեանքով և խստաբերութեամբ՝ ապրում էր նրանց պէս. իւր եպիսկոպոսական աստիճանին հակառակ, որ բարեվայելչութիւն է պահանջում, անապատականների պէս խարտեղ ու մաշկեղէն էր հագնում, որի համար բանադրուեց իւր հօրից—Կեսարիայի Եւլալիոս եպիսկոպոսից, և նրա տեղ եպիսկոպոս կարգուեց Մելիտոսը։ Եւստաթէոսը իբրև արդէն բանադրուած, չհրաւիրուեց Պեփղագոնիայի Գանգրա քաղաքի ժողովին, որը առանց նրա պատասխանը կանխապէս լսելու՝ նզովեց նրան։ Գանգրայի ժողովը եղաւ ըստ Ջ. Բօլերտսոնի*[2]) *325—328 թ. ուրեմն Եւստաթէոսը այդ թուից առաջ յարած լինելով կրօնաւորութեան՝ նոյն կարգը ներմուծել էր և Հայաստան.*

---

1), Ист. Христ Церк. հատ. I. եր. 301։

2), Ист. Христ. Церк. հատ I. եր. 1072.

Սոկրատը, որի այս մասին գրածը թարգմանաբար մէջ ենք բերում, ասում է [1]), որ Եւստաթէոսը նրա համար Գանգրայում կազմուած ժողովում դատապարտուեց, որովհետև Կեսարիայի ժողովից բանադրուելուց յետոյ էլ չէր դադարում եկեղեցական կարգերը փոփոխել։ Արգելում էր ամուսնութիւնը, պատուիրում էր մեղէն կերակուրներ չուտել՝ միսը պիղծ համարելով. մսակերներից և օրինաւորապէս ամուսնացածներից շատերին մերժում էր, կամ ամուսնացածներին իրարից բաժանում։ Թողած եկեղեցին՝ եկեղեցական խորհուրդները և ս. Հաղորդութիւնը տներումն էր կատարել տալիս։ Ատուածպաշտութեան պատրուակով ծառաներին իրանց տէրերից հանում էր։ Իմաստասէրի, այսինքն մոնոզոնի աքեմ էր հագնում [2]) և իրան հետևողներին էլ օտարոտի պարեգօտ հագնել թելադրում։ Կանանց մազերը կտրում էր. խախտում էր յայտնի պասերը և պատուիրում էր տէրունական օրերին պաս պահել։ Թոյլ չէր տալիս ամուսնացածների տներն օրհնել. սովորական կարգով ամուսնացած քահանաներին օրհնութիւնից ու հաղորդութիւնից զրկում էր՝ պիղծ համարելով նրանց։ Այդպիսի շատ խստութիւն էր անում ու սովորեցնում։

Մեծն Բասեղ, որ Եւստաթէոսի խստակրօնութեան հետևող էր, Պոնտոսի մի առանձնացած տեղում սկսեց կրօնաւորական կեանք վարել, նոյն բանին յորդորելով և իւր դպրոցական ընկեր Գրիգոր Նազիանզացուն. բայց վերջինս, Բասեղի անապատական խուցը առնէտի բոյն անուանելով՝ գրում է նրան. «Ով դուք պոնտական քիմմերցիներ [3]),

---

1), Մեծ Սոկրատ եկեղ. պատմ. եր. 205. գլ. ԽԳ. Փոքր— Սոկրատ գլ. ԺԱ. եր. 39։

2), Жизнь и Труды Свв. Отцовъ и Учителей церкви. հեղ. Ֆարրարի թարգմ. А. П. Лопухинъ Ս. Պետերբուրգ. 1891 թ. ր. Св. Василій Великій եր. 460.

1), Քիմմերեանք յունական առասպելաբանութեան համեմատ Սկիւթացոց աշխարհի ամենհիւսիսային սահմանում յաւիտենական խաւարի մէջ ապրող մի ժողովուրդ էին։

անարև մարդիկ, դուք դատապարտուած էք, ինչպէս կասեն, ոչ թէ միայն վեց ամսեայ դիշերների, այլ ձեր կեանքի մի մասն էլ ազատ չէ ստուերից, որովհետև ձեր ամբողջ կեանքը միմիայն դիշեր է. և ս. Գրքի ասածին համեմատ, յիրաւի, մահուան ստուերն։ Գովում եմ այդ նեղ ու ապառաժուտ շաւիղը, թէև չըդիտեմ այն դէպի Աստուծոյ արքայութիւնն է տանում, թէ դէպի դժոխք, սակայն կըցանկայի, որ քեզ դէպի արքայութիւն տանէր [1])։

Կրօնաւորների կանոններն ու սովորութիւնները, ասում է Ջ. Ռօբերտսոն [2]), նայելով հանգամանքներին և հիմնադիրների հայեացքներին, տարբեր էին։ Արևելքում նրանք զբաղւում էին արդիւնաբերական զանազան ձեռնարկութիւններով, օրինակ, դաշտային աշխատանքներով, հիւանդութեամբ, ստայնանկութեամբ, երկաթագործութեամբ, կոշով հիւսելով և փայտեայ հողաթափներ շինելով։ Եւ, երանելի Աւգուստինը, այն կրօնաւորների դէմ, որոնք ցանկանում էին այդ տեսակ զբաղմունքներից խուսափել, խրատներ դրեց։ «Մի վանք կար, ուր 1300 կրօնաւորներ էին ապրում, ասում է Մակարը [3]), ես այդ վանքը տեսայ, նրա մէջ 15 կարկատիչ, 20 թափիչ, 5 հիւսն, 10 դարբին, 7 ուղտապան և 40 էլ աշխատաւոր կային, որոնք աշխատելով թէ իրանց պէտքերն էին լցնում և թէ բանտերին ու աղքատներին մատ հանում»։ Ընդ հակառակն Ս. Մարտինը այդ տեսակ զբաղմունքը արդելք է համարում բարեպաշտութեան. և երիտասարդ կրօնաւորներին, բացի գրքեր արտագրելուց՝ ուրիշ ոչ մի զբաղմունք չէր թոյլ տալիս։ Գաղղիայի կրօնաւորները, որոնք բարբարոսների կռապաշտութեան և սնապաշտութեան դէմ կռուելու գործում մեծ ջանք էին թափում, իրանց ազատ ժամերը այնպէս չէին գործադրում, ինչպէս Եգիպտոսի ու Ասորիքի անապատականներն ու վանականները։

---

1), Жизнь и Труды Свв. Отц, —Св. Григорій Назіанзинъ, եր. 397.

2), Ист. Христ. Церкви հատ. I. եր. 302.

3), Վարք հարանց. հատ. Բ. եր. 475—476.

Հագնելիքի և ուտելիքի վերաբերութեամբ ինկատ էր առնում նաև տեղական կլիման։ Մարտինի վարքը գլողը ասում է. «Ցոյներն ունեն ուտելու մեծ ախորժակ, իսկ գաղղիացիք՝ բնական գործ»։

«Պախոմը պահանջում էր երեքամեայ փորձից յետոյ միայն կրօնաւոր ընդունել։ Ս. Բասեղը պահանջում էր, որ կրօնաւորութեան մէջ մտնել ցանկացողը որոշեալ կարգով խոստովանուի. կրօնաւորութիւնից հեռացումն ապաշխարութեան էր ենթարկւում, բայց կրօնաւորութիւն ընդունելը անդարձ չէր. և մի քանի դէպքերում հեռացումն մինչև անգամ քաջալերւում էր, որպէս լաւագոյն միջոց դժուարութիւններից դուրս գալու համար։

Անապատականութիւնն ու կրօնաւորութիւնը որքան հեռանում էին իրանց հիմնադիրներից թէ ժամանակով և թէ տեղի դրութեամբ, այնքան այլափոխւում էին։ Ջ. Բօլերտսոնը նկարագրելով այդ այլափոխութիւնը, ասում է[1]). «Կրօնաւորութեան սգին երբեմն երևան էր գալիս տքնութեան անսովոր ձևերով։ Այսպէս, Ոսկի (Воски)[2]) կամ խոտաճարակ տեսակը յառաջ եկաւ Միջագետքում, բայց յետոյ Պաղեստինումն էլ հետևողներ ունեցաւ. ապրում էին նրանք լեռներում բացօթեայ, համարեա բոլորովին մերկ թէ ամառուայ խորշակին և թէ ձմռան սառնամանիքներին, կերակրւում էին արմատներով ու խոտերով. այնպէս այլակերպւում էին, որ հոգով ու մարմնով կորցնում էին մարդկային կերպարանքը։

---

1). Ист. Христ. церкв. հատ. I. եր. 319.

2). Ջ. Բօլերտսոն առնելով Սոզոմենոսից (IV, 33) և Եւագրից(I, 21) ասանդում է խոտաճարակների կամ Ոսկի-ների (воски) ճգնութեան պատկերը։ Ի՞նչ առընչութիւն կայ մեր Ոսկեանց և Միջագետքի воски-ների մէջ, կաշխատենք պարզել յետոյ։ Մեր յարգելի բարեկամ Դոկտոր պ. Մկրտիչ Ղազարեանը, որին դիմել էինք խնդրելով պարզել Ոսկի կամ воски բառի ծագումն, յայտնեց մեզ որ Ուասկա հին պարսկերէն ծառայ կընչանակի (Բրօկիլման բառարան). դրա ասորերէնը Աբդա է, որ դարձեալ ծառայ է նշանակում եւ կրօնաւորի մտքով ևս գործածւած է (Ասորերէն բառարան)։

Խոտաճարակների տիպ կարելի է համարել Մարիամ Եգիպտացուն [1]), որ Եգիպտոսի Աղէքսանդրիա քաղաքից մի պոռնիկ կին էր։ Ս. Խաչի ոգնի առիթով ուխտաւորների հետ գնաց Երուսաղէմ՝ աշխարհախուզք բաղմութեան մէջ իւր խառնադնաց կեանքով փող վաստակելու. բայց ոգնի փառաւոր պաշտամունքը տեսնելով՝ զղջաց, անապատ քաշուեց՝ հետը միայն երեք նկանակ ունենալով և Յորդանանի այն կողմը, խորին անյայտութեան մէջ 47 տարի ճգնեց։ Նա իւր ճգնաւորական բոլոր կեանքում դալար խոտ էր ուտում անասունի պէս երեսը դեռնին քսելով և ճարակելով։ Զոսիմոս ճգնաւորը այդ անապատում մարդ գտնելու նպատակով քսան օր թափառելուց յետոյ, նկատում է ասուերի նման մի մարդկային կերպարանք արևի խորշակից և ցրտի սառնամանիքից բոլորովին սևացած և ծածկուած մազերով, որ տարի պէս ապիտակ էին։ Այդ Մարիամ Եգիպտացին էր, որ հաղորդուեց, վախճանուեց և թաղուեց Զոսիմոսի ձեռքով։

Այս քրիստոնեայ ճգնաւորներից ոմանք էլ մարդկային զգայմունքից դերազանցող կատարելութեան հասնելու ձգտմամբ տարօրինակ վարքով և այլանդակ կերպարանքով աքանչացնում էին քաղաքների բնակիչներին. դրանց նպատակն էր արհամարհանք ցոյց տալ դէպի երկրաւոր վայելչութիւնը։ Ե. դարի սկզբին յայտնուեցին նոր տեսակի ճգնաւորներ, որոնք Սիւնակեաց էին կոչւում։

Այս տեսակ Սիւնակեացներից առաջինն էր Սիմէօնը, Ասորիքի և Կիլիկիայի սահմանի վերայ եղած գաւառից։ Նա տղայ ժամանակ արածում էր իւր հօր ոչխարները. յաճախելով եկեղեցի, հրապուրուեց կրօնաւորութեամբ և 14 տարեկան հասակում մտաւ խստակրօն կրօնաւորների մի վանք։ Նա իւր համբերութեամբ և իւր անձը խոշտանգելու արտակարգ միջոցներով զարմացրեց և հիացրեց վանականներին։ Մի անգամ ջրի ուղարկուած լինե-

---

1), Վարք Հարանց հատ. I. եր. 287—319։ Ցայսմաւ. Ապրելի Ա. և Արեգի ԻԳ. վարք Մարիամու Եգիպտացւոյն։

լով՝ առաւ արմաւենու կոշտ պարանը, որով ջուր էին քաշում հորից, պինդ փաթաթեց իրան՝ և յայտնեց, որ կորցրել է պարանը։ Երկու շաբաթից յետոյ դաղտնիքը բացուեց. կոշտ պարանը մտել էր նրա մարմնի մէջ և հոսող արիւնի կաթիլները յայտնեցին դաղտնիքը։ Քննութիւնից երևաց, որ պարանը այնպէս էր մտել նրա մարմնի մէջ, որ հաղիւ էր նկատուում։ Պարանը դուրս կորզելու ժամանակ Սիմէօնը ամենևին ցոյց չտուաց, որ ցաւ է զգում, և թոյլ չտուաց, որ վէրքերի վերայ դեղ դնեն։ Վանահայրը հարկադրուեց նրան հեռացնել վանքից, որ նրա խստակեցութիւնը նախանձորդներ չբյարուցանի վանքում, որը աւելի թոյլ միաբաններին համար կարող էր վտանգաւոր լինել։ Գեռանի երևին ոգնութիւնները բաւական չըհամարելով՝ նա սիւներ էր շինում և նրանցից բարձրագունի վերայ ամառ ձմեռ դիշեր ցերեկ ոգնում էր։ Հեռադեռէ սիւները բարձրացնում էր. վերջին սիւնը քառասուն կանգուն բարձրութիւն ունէր։ Սիմէօնը պարանոցին կրում էր ծանր շղթայ և անդադար ծունր էր դնում. մի ակամատեռ կարողացել է մինչև 1240-ը հաշուել, այնուհետև կորցրել է ծնրադրութեան հաշիւը։ Նա շատ քիչ բան էր ուտում և ամբողջ մեծ պասին ծոմ էր մնում. մարդաբէութիւն էր անում և հրաշքներ գործում։ Նրա հետ յարաբերութիւն էին պահում կայսրներ, թագաւորներ, եպիսկոպոսներ և շատ նշանաւոր մարդիկ։

«Սիմէօնը քրիստոնեայ աշխարհում համաշխարհային հռչակ ստացաւ։ Շատերը Պարսկաստանից, Եթովպիայից, Սպանիայից, Գաղղիայից և Բրիտանիայից գալիս էին նրան տեսնելու։ Դեռ նրա կենդանութեան ժամանակ Հռովմի արհեստանոցում նկարում էին նրա պատկերը, համարելով այն դիւահալած։ Սիմէօնը վախճանուեց 460 թուին 72 տարեկան հասակում, 47 տարի սիւնի վերայ ճգնելով։

Մեր հոդևոր դրքերում ևս [1]) գտնում ենք Սիմէօն Սիւնակեցի վարքը պատմուած այնպէս, ինչպէս Բոլերտա-

---

1), Յայտնաւ. Սեպտեմբերի ԺԱ. և Նաւասարդի ԻԲ։ Լիակատար Վարք Սրբոց հատ. Զ. 25։ Վարք հարանց Ա. հատ. 324—326.

անն է աւանդում, բայց ծննդավայրի որոշ ցուցմամբ։ Յայտաւուրքը գրում է, որ Սիմէոնը Կիլիկիայի Սիսան գիւղաքաղաքից էր. «ի ժամանակս բարեպաշտ կայսերն Լևոնի մեծի և Մարտիրոս պատրիարքի»։ Լևոն Ա. թագաւորում էր 457—474 թ. իսկ Վարք Հարանցը Սիմէոնին Անտիոքացի է համարում, երևի Անտիոքին մօտ ճգնելուն համար։

Սիմէոնին յաջորդեց Դանիէլ Միջագետացին, որ շարունակեց սիւնի վերայ ճգնութիւնը 461—494 թիւը։ Սիւնակեացներին թէև սակաւ, բայց հետևողներ եղան Յունաստանում և Ասորիքում։

Եթէ սիւնի վերայ ճգնողներ կային, կային և գբի մէջ ճգնողներ, որոնց գլխաւորն էր Յովհան գբնեցին [1])։ Սա Փիւնիկէի Կեսարիա քաղաքից էր, քրիստոնեայ բարեպաշտ մի այրի կնոջ զաւակ։ Հալածանքի ժամանակ Յովհաննու մայրը, որի անունն էր Յուլիա, թողնում է իւր ապարանքը և ապաստանում մի աննշան խրճիթում, ու այնտեղ ապրում թաքուն։ Այդ ժամանակ Յովհանը 15 տարեկան էր և միշտ եկեղեցի էր յաճախում սովորական ժամերին։ Եկեղեցում մի մարդ նրա ջերմեռանդութիւնը տեսնելով խորհուրդ տուեց անապատ գնալ և ճգնել։ Յովհանը հետևեց այս խորհրդին. առաւ մօր օրհնութիւնը, հրաժեշտ տուեց մօրն ու միակ փոքրիկ քրոջը, դուրս եկաւ տանից և գնաց Յայնկոյս - Յորդանանի անապատը։ Առաջին գիշերը նա մի եգիպտացի անապատականի մօտ անցրեց և ուզեց նրա մօտ մնալ անապատական կարգերը սովորելու համար։ Եօթներորդ օրը ասուածային աղդեցութեամբ Յովհանը թողեց անապատականին և աւելի խոր անապատ քաշուեց։ Հրեշտակի ուղղեկցութեամբ մի օր ճանապարհ գնալուց յետոյ Յովհանը մի գուբ դտաւ, աղօթեց և ընկաւ մէջը. նա խնդրեց Աստուծուց, որ իրան այնտեղ կերակրի և ուխտեց՝ որ մինչև մահ այնտեղից դուրս չըգայ։ Գբի մէջ ճգնելիս՝ սովորական փորձութեան ենթարկուեց և յաղթող հանդիսացաւ։ Տասն տարի գբի

2), Վարք Հարանց հատ. Ա. եր. 113—125.

մէջ մնաց, վախճանուեց 25 տարեկան հասակում և թաղուեց Կրիտոս անապատականի ձեռքով, որը և Յովհաննու վարքը գրել տուեց մի եկեղեցական պաշտօնեայի։ Խուսիան անապատական ծերն էլ հրեշտակի ազդմամբ գրեց Յովհաննու վարքը, որ համեմատ գտնուեց Կրիտոսի գրել տուածին [1])։

Մ. Վ. Աւգերեանը [2]) արդի քննիչներից և Բոլլանդեաններից առնելով ասում է, որ Յովհան գրնեցին հայ էր, Փոքր—Հայոց Կատառնիա քաղաքից, Դ. դարում. թէև Յայսմաւուրքը ասորի է անուանում և Գ. դարում ապրած։

Յովհան գրնեցին տօնւում է սրբոց հարցն եգիպտացւոց հետ դեկտեմբերի ութիզքներում։

Սիմէօն սինակեացը տօնւում է Վարագայ Խաչի պահոց բշ. օրը սեպտեմբերի վերջերին։

Յոյն—Ռուս եկեղեցին Մարիամ եգիպտացու յիշատակը տօնում է ապրելի 1-ին, իսկ հայ եկեղեցին չի տօնում։

---

1), Վարք Սրբոց հատ. Թ. եր. 268—273։
2), Նոյն։

Ե.

Ամփոփումն—Անապատականներ, Սկիտէ, Վանք եւ վանականներ: Այլափոխուած Անապատականներ—խոտաճարակներ, սիւնակեացներ, գրնեցիներ: Վանքերը որպէս անհրաժեշտ հաստատութիւն: Աշխարհիկ հոգեւորականութիւն. Հոգեւորականների զգեստը. Փիլոն եւ Վեղար.

Անապատական կեանքի զարգացման պատմութիւնը մեր առաջն է դնում հետևեալ դատողութիւնը.

1 *Միայնակեաց անապատականներ. սրանք նախագաղափար ունենալով ս. Եղիա մարգարէին և Յովհաննէս Մկրտչին, ապրում էին անապատում միայնութեան մէջ քրիստոնէութեան դէմ եղած հալածանքից զերծ մնալու և աշխարհի գայթակղութեան չենթարկուելու համար։ Այսպէս էր Պաւղոս Թեբայիդացին Գ. դարի վերջին և Դ. դարի առաջին կիսին։*

2. *Երբ քրիստոնէութեան դէմ հալածանքը մեղմացաւ, մարդիկ անապատ էին քաշւում, առանձնութեան մէջ գլխովին Աստուծուն նուիրուելու և աշխարհի գայթակղութիւնից հեռու լինելու համար։ Սրանք ոչ խորին անյայտութեան մէջ և ոչ էլ բոլորովին միայնակ էին ապրում, այլ փոքրիկ խմբերով իրար մօտիկ խրճիթների կամ այրերի մէջ, որ սկիտէ կամ սկիւթէ կոչւում։ Այս անապատականները բոլորովին կտրուած չէին աշխարհից, նրանք հարկաւոր ժամանակին երևում էին քաղաքներում և գիւղերում և հաւատացեալների բարոյական—կրօնական զարգացման վերայ մեծ ազդեցութիւն ունէին։ Սրանք դատական և վարչական խնդիրների մէջ էլ ազդեցիկ դեր էին կատարում։ Այս տեսակ անապատականութեան նախակիզբ ներակայացուցիչն էր Անտոն—Անապատականը. որի մահը անապատականները ողբացին հետևեալ նշանաւոր և խորիմաստ արտայայտութեամբ. «Աշխարհս մեծ բաբելոն կորցրեց և երկինքը մեծ մարդ ընդունեց. վե-*

ընը գտաւ այն՝ ինչ որ որոնում էր, և ներքինս կորցրեց՝ ինչ որ ունէր [1]).

Անապատականութիւնը, եթէ չը հաշուենք Եղիա մարգարէին ու Յովհաննէս Մկրտչին՝ սկսուեց ու զարգացաւ Եգիպտոսի անապատներում, կամաց կամաց շարժուեց դէպի Պաղեստին, Ասորիք, Միջագետք և Հայաստան.

3. Դ. դարում անապատականներից աւելի խստակրոնները մեծ առաքինութիւն էին համարում իրանց անձը տանջել զանազան մտացածին միջոցներով և ուտելիքի վերաբերութեամբ զրկանքներով։ Այդ անապատականութեան այլափոխութիւնն էր և վախճանից առաջ՝ վերջին ճիգը։ Այլափոխուած անապատականներից ոմանք ամառ ձմեռ մերկ ապրում էին անմարդաբնակ տեղերում. նրանք, որոնք խոտ էին ճարակում, կոչւում էին Խոտաճարակներ կամ ոսկի (ВОСКИ)՝ որպիսի էր Մարիամ Եգիպտացին, որոնք սիւների վերայ էին ճգնում, կոչւում էին Սիւնակեացներ, որպիսի էր Սիմէոն Սիւնակեացը, և որոնք գբի մէջ էին ճգնում՝ կոչւում էին Գբնեցիներ, որպիսի էր Յովհան Գբնեցի։

Այս տեսակ ճգնաւորական կեանքը երկար չը շարունակուեց և չէր քաջալերւում եկեղեցու ողջամիտ հայրերից, որոնք թէև դատապարտում էին եպիսկոպոսների և աշխարհիկ հոգևորականների պճնասիրութիւնը, ունայնութիւնը, ցուցամոլութիւնն ու աշխարհիկ ձևերը, բայց այդ հոգևորականներից ոմանց գծուծ մուրացկանի և կեղծաւոր կրօնաւորութեան հագուստն և նիստ ու կացն էլ չէին քաջալերում՝ անպատշաճ բան համարելով այն։ Կեղեստինոս պապը (423—432) իւր նամակով դէպի դաղիացի եպիսկոպոսները յանդիմանում է նրանց, որ, հագուստով կամենալով ցոյց տալ, թէ խստակրոն են, կրօնաւորների պէս կարճ պարեգօտ (պալլի) և կաշէ կօտի էին հագնում

---

1. «Մեծ բարեխօս կորոյս աշխարհս, և մեծ մարդ ընկալան երկինք։ Եգիտ վերինն՝ զոր խնդրէր և կորոյս ներքինս՝ զոր ունէր»... Վարք Հարանց հատ. Ա. եր. 81. Թուղթ Սերապիոնի սուրբ հօրն առ աշակերտս երանելւոյն Անտոնի առ Մակար և Ամատաս։

եկեղեցում [1])։

4. Եգիպտոսի անապատականների իրար մոտիկ խրճիթներում և այրերում բնակութիւնը, որ սկիտէ կամ սկիւթ էր կոչւում և համապատասխանում է հայ մենաստան բառին, Դ. դարի վերջերին աւելի որոշ կերպարանք ստացաւ և սկիզբն դարձաւ վանքերի գոյութեան։ Վանքերում անապատականները պէտք է ապրէին խմբուած մի որոշ շրջանակի մէջ. այդպիսի խմբական կենակցութիւնը պէտք ունէր որոշ կարգ կանոնի։ Ինչպէս տեսանք, Պախոմը, (հայ տառադարձութեամբ Պաքմէոս, Պաքումէոս) այդպիսի մի համախմբուած անապատականների մեծաւոր կամ առաջնորդ դառնալով՝ սահմանեց որոշ կանոններ, որ ըստ աւանդութեան՝ հրեշտակի ձեռքով էր ստացել։ Վայրը, ուր խմբուած էին անապատականները, կոչուեց վանք կամ փարախ. մեծաւորը՝ առաջնորդ, վանահայր կամ ասորերէն՝ աբբա, որ նշանակում է հայր և յունարէն արքիմանդրիտ, որ նշանակում է փարախապետ։ Վանքերում բնակուողները այլևս անապատական չէին կոչւում այլ կրօնաւոր, վանական, մոնոզոն։ Այր մարդկանց վանքերից յետոյ անմիջապէս սկիզբն առաւ կանանց վանքը, որը հաստատուեց դարձեալ Պախոմի ձեռքով. և կանանց այդ առաջին վանքի մայրապետ դարձաւ Պախոմի քոյրը։

Դ. դարի սկզբում վանական հաստատութիւնները Եգիպտոսից տարածւում են Իլլարիոնի ձեռքով Պաղեստին, Ասորիք, Հայաստան, և շրջակայ երկրները։ Ինչպէս անապատականները, նոյնպէս և վանականները ամուրի էին։ Վանքերի հաստատութեամբ անապատականութիւնը կորցրեց իւր նշանակութիւնը և այլափոխուեց։ Եկեղեցու պայծառութեան համար վանքերը անհրաժեշտ հաստատութիւն դարձան։

Ճգնաւոր անապատականներից ու վանականներից բոլորովին տարբերւում էր աշխարհիկ հոգևորականութիւնը,

---

1) Христіанское чтеніе. 1898 թ. հատ. CCVI մասն առաջին. «О времени происхожденія церковнаго облаченія» եր. 145—175։

որ բաղկացած էր եպիսկոպոսներից, քահանաներից և եկեղեցական ստորին պաշտօնեաներից։ Եպիսկոպոսները կառավարում էին եկեղեցու վարչական գործերն ու ձեռնադրութիւն անում. եկեղեցական վարչութեան մէջ դրանք իշխաններ էին։ Քահանաները եկեղեցական ստորին պաշտօնեաների սպասաւորութեամբ հաւատացեալներին մատակարարում էին եկեղեցու խորհուրդները (մկրտութիւն, ապաշխարութիւն կամ խոստովանութիւն, հաղորդութիւն, ամուսնութիւն) և կատարում արարողութիւններն ու հանապազօրեայ ժամերգութիւնը։ Թէ եպիսկոպոսները և թէ քահանաները մինչև Դ. դարի երկրորդ կէսը ամուսնացած էին։ Այդ ժամանակին արևելեան եկեղեցում սահմանուեց, որ աշխարհիկ հոգևորականութեան այն մասը, որը քահանայ կոչմամբ ժողովրդի մէջ էր լինելու իբրև խոստովանահայր և սուրբ խորհուրդների մատակարարող՝ ըստ հնարաւն ամուսնացած լինի. իսկ այն մասը, որ յանձին շրջիկ քարոզիչների և եկեղեցին կառավարող եպիսկոպոսների ժողովրդի հետ անմիջական յարաբերութիւն և մշտական կայեան պէտք է չունենար, իբրև հոգևոր զինուորութիւն՝ ամուրի լինի, հիմք ունենալով Պօղոս առաքեալի խօսքը թէ. «զի որ անկինն է, հոգայ զՏեառն, թէ որպէս հաճոյ լիցի Տեառն. և որ կանամբին է, հոգայ զաշխարհիս՝ թէ որպէս հաճոյ լիցի կնոջ իւրում»[1]։ Զափաւորութիւնը թէ հագուստի և թէ կենցաղավարութեան վերաբերութեամբ այդ հոգևորականների պարտաւորական պարտքն էր. բայց Բիւզանդիայում և Հռոմում արքունի ճոխութիւնը ազդեց այդ տեղերի հոգևորականութեան կենցաղի վերայ։ Եպիսկոպոսները հագնում և ապրում էին սենատորներին հաւասար ճոխութեամբ ու փարթամութեամբ և պալատականների կարգումն էին[2]։ «Եկեղեցու դէմ հալածանքը դադարելուց յետոյ հոգևորականութիւնը պատուաւոր տեղ գրաւեց և համարում

1) Ա. Կորնթացւոց Է. 32—33։

2) Христ. чтеніе. նոյն. եր. 161—162.

էր պետական բարձրաստիճան պաշտօնեաներին հաւասար, և դրա համար էլ շատ բնական է, որ պալատական աստիճանաւորների պատուոյ նշանները, որոնց հետ և ժապաւէնը (ուրար) նրանց էլ անցնէր»[1]։ Գրիգոր Աստուածաբանը Կ. Պոլսում տեսնելով մայրաքաղաքի բնակիչներին դատարկութեան և զուարճութեան մատնուած, ասաց[2]. «ժողովուրդը ապրում է միայն հացով և խաղերով»։ Եւ գանգատում էր, թէ. «Կ. Պոլիսը քաղաքներից առաջինն է, որ գտնւում է դերասան դառնալու վտանգի մէջ։ Այս նկատողութեան Ֆարրարն աւելացնում է հոգևորականութեան նկարագրութիւնը, գրելով. «Այս չարիքի աւելի վատ երևոյթը այն էր, որ դէպի թատրոնական տեսարանները համաճարակ մոլութեան պատճառով եկեղեցական պաշտամունքները և քարոզիչների ճառերը սկսել էին աւելի և աւելի թատրոնական դառնալ։ Երէցի պաշտօն ստանձնում էին ոչ թէ նրա համար, որ պարզ Քրիստոսին քարոզեն պարզ ժողովրդին, այլ որ հնարաւորութիւն ունենան յափրանալ այն արբեցուցիչ ծափահարութիւնների դղրդիւնով, որով օգտւում էին դերասաններն ու կառարշաները»։ Ս. Գրիգոր Աստուածաբանը դառնութեամբ ասում է[3]), «Մենք մեր բարեկեցութեամբ խորտակեցինք այն փառքն ու զօրութիւնը, որը ձեռք էինք բերել հալածանքի ու թշուառութեան ժամանակ ...»։ Ես չը գիտէի, ասում է նա, որ ինձնից կը պահանջեն մրցել կոնսուլների, պրեֆեկտների և նշանաւոր զօրապետների հետ, որոնք չը գիտեն ինչպէս ազատուեն զեղխութիւնից. չը գիտէի, որ աղքատներին պատկանող դոյքերը պէտք է վատնեմ կերակուրների և ճոխութեան համար. պէտք է նժոյգ ձիերով շրջեմ, կառքերով ման գամ. ի ցոյց մեծութեանս՝ հանդիսաւոր գնացքներ սարքեմ, յառաջընթաց ունենալով «զգրոյշ, զգրոյշ»

---

1) Նոյն եր. 159.

2) Жизнь и труды свв. Отцовъ. Св. Григоріи Назіанзинъ եր. 421.

3) Նոյն եր. 405.

գոչող ազգարարներ, որի ժամանակ ամեն ոք պարտաւոր լինէր ճանապարհ տալ շտապաւ մի կողմ քաշուելով, որպէս թէ մենք որ և է վայրենի դազան լինէինք, և մեր գնացքը պէտք է անպատճառ հեռուից նկատուէր»։ Այնուհետև մեղադրելով հոգևորականներին և հարուածելով նրանց թոյլ կողմերը՝ ժողովրդի համար ասում է. «Նրանք իրանց համար փնդռում են ոչ թէ քահանայ, այլ հռետոր. ոչ թէ հոգիների, այլ դրամների պահապան. ոչ թէ անարիւն զոհ (ս. պատարագ) մատուցանողներ, այլ հզօր ըմբշամարտներ։ Ես պատրաստ եմ այդ բանի համար նրանց (ժողովրդին) ներել. մենք ենք նրանց դաստիարակել այդպէս. մենք աշխատում ենք ամենքին դիւր դալ, ամենքի համար ամեն բան դառնալ, բայց չըգիտեմ դրանով նրանց (ժողովրդին) կըփրկենք թէ կըկորցնենք [1])։

Եթէ անապատականները այլափոխուել էին. վանական կրօնաւորներն էլ կեղծաւոր ձևերով շահագործում էին հաւատացեալների դիւրահաւանութիւնը. ինչպէս տեսանք եկեղեցու մեծ վարդապետների և հայրերի վկայութիւններից՝ աշխարհիկ հոգևորականութիւնն ևս, թէև անհամեմատ գիտուն, բայց իւր կոչման բարձրութեան վրայ չէր։ Սակաւ բացառութեամբ այսպէս էր աշխարհիկ հոգևորականութիւնը Դ. դարի երկրորդ կիսին. այսինքն քրիստոնէութիւնը Կոստանդին Մեծից չարգելուած կրօն հրատարակուելուց միայն յիսուն տարի յետոյ։

Վանական կրօնաւորներին անհրաժեշտ մաղեղէն փիլոնը [2]) փոխարինում էր Եղիայի մաշկեակին [3]), ծածկում էր նրանց մերկութիւնը, համարւում էր մեռելութեան վերարկու, խոնարհութեան ու աշխարհուրացութեան նշան [4])։

---

1) Նոյն եր. 437—38։

2) Վարք Հարանց. հատ. Ա. եր. 289. Մարիամ Եգիպտացու վարքի մէջ տեսնում ենք, որ փիլոնը մաղեղէն էր։

3) Մաշտոց ձեռնադրութեան կղերիկոսաց ևն. տպ. Ս. Էջմիածին 1870 թ. եր. 51. «Օրհնեա՛ Տէր զզգեստ և զպատմուճան սորա, որպէս օրհնեցեր զմաշկեակն Եղիայի»։

4) Նոյն Մաշտոց. Կանոն օրհնութեան աբեղայի. եր. 63, վերջին

Աշխարհիկ հոգևորականութիւնը (եպիսկոպոս, վարդապետ, քահանայ) այդ փիլոնը իւրացրեց և հետ զհետէ ճոխացնելով՝ դարձրեց պատուոյ պարգև և բարձր աստիճանի յատկանիշ։ Օրթոդոքս եկեղեցում եպիսկոպոսները մաղեղէն փիլոնը մետաքսեայ գունաւոր մանտիա դարձրին և յատկացրին եպիսկոպոսական աստիճան ունեցողներին. իսկ հայ եկեղեցում սև մաղեղէն փիլոնը դարձաւ մետաքսեայ, գունագեղ և ծաղկենկար փիլոն, որ, «խառայ փիլոն» ընդհանուր անուամբ, եկեղեցու բարձրաստիճան պաշտօնեաները (կաթուղիկոս, եպիսկոպոս) իրանց սեպհականելով, որպէս պատուոյ պարգև շնորհում էին վարդապետներին ու քահանաներին՝ նրանց բազմամեայ և արդիւնաւոր պաշտօնավարութիւնը վարձատրելով։

Փիլոնի սկզբնական համեստ ձևն ու նպատակը այնքան փոխուեց, որ եկեղեցական միւս զգեստների հետ նրա ծագման մասին էլ տարակոյս առաջացաւ [1]), թէ արդեօք հայ «խառայ փիլոնը» կամ օրթոդոքս «մանտիան» կրօնաւորների մաղեղէն փիլոնն է, թէ Հռովմայ և Բիւզանդիայի սինատորների ծիրանին, կամ հին Հռովմայեցիների տոգան, որ կրում էին պետական բարձրագիր անձինք։

Նոյնը կասենք վեղարի համար էլ. վեղարը փիլոնի անբաժան մասն էր. եթէ փիլոնը ըստ աշխարհի մեռելութեան պատանն էր, վեղարն էլ վարշամակն էր։ Վեղարը կամ կնգուղը վանական կրօնաւորների անհրաժեշտ հագուստի մասն էր. վեղարը պատրաստուում էր թանձր խարդնից, սրածայր գլխով, որ քանի վայր էր իջնում այնքան լայնանում էր։ Վեղարը առաջի կողմից իջնում էր մինչև երեսի կէսը՝ ծածկելով ունքերը աչքերը և դէմքի վերին մասը, իսկ ետևի կողմից՝ իջնում էր մինչև գօտին և աւելի

աղօթքի առաջի մասն. «Աղաչեմք զքեզ, Տէր Յիսուս, զվերարկու մեռելութեան մերոյ, որով և դու ծածկեցար խոնարհութեամբ և զձև զգեստուս, զոր ետուն մեզ հարքն մեր ի ցոյցս խոնարհութեան և ուրացութեան աշխարհի, որով և ինքեանք կերպարանակեցան...։

1) Христ. чтеніе. 1898 թ. հատ. CCVI. часть I. о врем. происх. церк. облач. եր. 146—175։

ցած։ Վեղարը պատապարում էր կրող կրօնաւորի դլուխը, պարանոց, թիկունքնու ուսերը ձմեռուայ ցրտից և ամառուայ խորշակից։ Վեղարաւորը կարողանում էր տեսնել միայն իւր առաջը. վեղարով նրա տեսութեան հորիզոնը շատ փոքրանում էր։ Ըստ աւանդութեան՝ [1]) Կնդուղի կամ վեղարի համար հրեշտակը Պախոմին պատուիրում է. «Եւ այս նշանակ կնդղաց նոցա, զի եղիցի նա առանց խաւու և խաչ Ծիրանի յաջակողմանն»։

Գ. դարի Բ. կիսին, երբ սահմանուեց, որ եպիսկոպոսներն ու եպիսկոպոսութեան թեկնածուները ամուսի լինեն, դրանք վանական կրօնաւորներից իւրացրին վեղարն էլ։ Օրթոդոքս եկեղեցու մէջ դարերի ընթացքում վեղարը բոլորովին կերպարանափոխուեց, սատցաւ կամիլաւկայի ձև, դլուխը տափակ, առաջը բոլորովին քաց. միայն եռևի կողմից սև կերպասեայ շղարշով։ Արքեպիսկոպոսներին, որպէս պարդև, իրաւունք է տրուում սպիտակ վեղար կրել։ Հայ հոգևորականութիւնը պահելով վեղարի հին սրադլուխ ձևը, ժամանակի ընթացքում որոշ բարեձևութեան վերածեց. խարազնի տեղ վեղարը մետաքսեայ սև շղարշով է սքողւում. այդ շղարշը առաջի կողմից մինչև ունքերն անգամ չէ հասնում, այնպէս որ վեղարաւորը դիմացը տեսութեան ընդարձակ հորիզոն է ունենում, միայն աջ և ձախ կողմերից բաւական սահմանափակուում է հորիզոնը. վեղարի շղարշը եռևի կողմից ուսերի վերայով վայր է իջնում շատ անգամ մինչև ծնկների ծալքը։ Ինչ կասկած, որ վեղարից Ծիրանի խաչը յապաւուեց, որովհետև այն կը խանգարէր վեղարի բարեվայելչութեանը։ Ծիրանի խաչի տեղ այժմ, որպէս բարձրագոյն պարդև, շնորհւում է եկեղեցու բարձրաստիճան պաշտօնեաներին ադամանդեայ խաչ՝ վեղարի ճակատին կրելու։

Վանական կրօնաւորների զգեստն էր կնդուղ, աքեմ և գօտի. և Պաքմէոսը վախճանուելիս պատուէր է տալիս իւր աշակերտներին ու ասում, «Կնդուղն օրինակ է անմե-

---

1) Վարք հարանց. Բ. հատ. եր. 476։

զութեան և սքեմն՝ օրինակ խաչի. իսկ գօտին արիութեան և քաջութեան նշան է։ Սրդ, մենք քաղաքավարեսցուք ըստ կերպի մերոյ և զամենայն փութապէս գործեսցուք, զի մի գտցուք զօտար կերպ զգեցեալ»[1])։

Աշխարհիկ հոգևորականներից կրօնաւորական կամ աբեղայական ձևի զգեստ գործածողներից առաջինն էր, ինչպէս տեսանք, Սեբաստիայի Եւստաթէոս հայ եպիսկոպոսը, որ իւր այդ նորաձևութեան համար բանադրուեց Կեսարիայի Եւլալիոս եպիսկոպոսից և ապա Գանգրայի ժողովից[2]) դատապարտուեց դաւանական խնդիրներում իւր տատամսութեան և դէպի հերետիկոսները հակամիտութեան պատճառով։ Թէև ուղղափառ եկեղեցին հալածում էր Եւստաթէոսին, բայց նա իւր կրօնական խորին հմտութեամբ և խստակրօն մաքուր վարքով ակնածելի էր. նրան յարգում և նրա վարքին հետևում էին ողջամիտներից շատերը, որոնց մէջն էր Բարսեղ Մեծն[3])։

---

1) Վարք հարանց Ա. հատ. եր. 454։

2) Գանգրայի ժողովը ըստ Հ. Ֆօրբերտոնի (եկեղ. պատմ. հատ. I. եր. 1072) եղել է 325—341 թ. ըստ Ֆարրարի (Жизнь и труды свв. отцовъ եր. 477) 358 թ. ըստ Սեսրոպ վարդապետ Տէր Մովսէսեանի (Սոկրատ եր. 206) մօտաւորապէս 361—362 թ.

3) Жизнь и Труды свв. отцовъ. Св. Василій Великій.

2.

Մեծն Բասեղի եւ Գրիգոր Աստուածաբանի կրթութիւնը: Բասեղը ուսումնասիրում է արեւելքի կրօնաւորական եւ անապատական կեանքը: Նա Պոնտոսում հիմնում է վանքեր եւ Գրիգոր Աստուածաբանի հետ կրօնաւորական կեանք վարում. Նրանց եւ վանականների զբաղմունքները: Անախորեցներ եւ կինովիտներ. Վանական դառնալու հրապոյրը ընդհանրապէս. Բասեղը Կեսարիայի արքեպիսկոպոս. Գրիգորի դժգոհութիւնը Բասեղից: Գրիգորը Կ. Պոլսում. Երկու մեծ բարեկամների ազդեցութիւնը արեւելեան եկեղեցում. Բասեղի եւ Գրիգորի մահը: .

Բասեղ Մեծն ու Գրիգոր Աստուածաբանը դեռ պատանեկան հասակում, իրանց հայրենիքում — Կապադովկիայում, որ Սեբաստիայից հեռու չէր, Եւստաթէոսի խստակրօնութեան համբաւը լսած լինելով անտարբեր չէին դէպի նա և դէպի կրօնաւորութիւնը: Ըստ Ֆարրարի նրանք [1]) Աթէնքում, իրանց ուսանողութեան ժամանակ, համարեա կրօնաւորի կեանք էին վարում. նրանք յատկապէս Պրոերեսիոս քրիստոնեայ հայ ուսուցչապետի ազդեցութեան տակ քրիստոնէական հոգով կրթուելով մեծ յառաջադիմութիւն գործեցին հռետորութեան մէջ: Բասեղի և Գրիգորի դասընկերների մէջ էր նաև Յուլիանոսը, որ յետոյ կայսր դարձաւ Ուրացող յորջորջմամբ:

Բասեղը ծնուեց 326 թուին քրիստոնեայ ծնողներից. նրա բարեպաշտական զգացումների վերայ մեծ ազդեցութիւն ունեցան նրա մայրը՝ Էմմելիան և քոյրը՝ Մակրինան: Հնգամեայ ուսանողութիւնից յետոյ (351—355 թ.) նա Կ. Պոլսի վերայով վերադարձաւ իւր հայրենի Կեսարիա քաղաքը, ուր սկզբում սկսեց փաստաբանութեամբ պարապել և կենցաղասէր կեանք էր վարում. դեռ 22 տարեկան

---

1). Բասեղ մեծի և Գրիգոր Աստուածաբանի մասին մեր գլխաւոր աղբիւրն է Ֆարրարի Жизнь и Труды Свв. Отцовъ.

գեղեցկակազմ, բարձրահասակ և քաջ հուեռորի համբաւ վայելող Բարսեղը հեռի չէր երիտասարդական հասակին յատուկ ցուցամոլութիւնից. բայց երբ իւր մօր և քրոջ ազդեցութեան տակ սկսեց աւետարան կարդալ՝ զարթեց նրա մէջ կրօնաւորական կեանքով ապրելու իղձ, մըկրտուեց և, տեղումը կամենալով ուսումնասիրել անապատական և վանական կեանքը, այցելեց Եգիպտոսի, Պաղեստինի, Ասորիքի և Միջագետքի անապատներին ու վանքերին, որոնք շատ խոր տպաւորութիւն թողին իւր վերայ։ Բարսեղը խօսելով իւր տեսած անապատականների ու վանականների մասին՝ ասում է. «Ես երկիւղածութեամբ եմ յիշում նրանց չափաւորութիւնը ուտելիքի վերաբերութեամբ. աշխատանքի մէջ նրանց տոկունութեան վերայ հիացել էի. սքանչացել էի աղօթքի մէջ նրանց ջանասիրութեան վերայ. զարմացած էի թէ նրանք ինչպէս յաղթում են քնին. չէին ընկճւում ոչ մի մարմնական կարիքի առաջ, միշտ հոգու արիութիւն էին պահում քաղցի, ծարաւի, ցրտի և մերկութեան մէջ։... Նրանք, յիրաւի, ցոյց էին տալիս թէ ինչ է նշանակում ապրել որպէս երկնաքաղաքացի՝ արհամարհելով աղցաւոր աշխարհը»։

Բարսեղը բոլորովին հրապուրած այս հրեշտակային կեանքով, և 'ի նկատի ունենալով, որ իւր հայրենակիցներից շատերն են նախանձաւոր այս կեանքին, մտքումը դրեց իւր հայրենիքում ևս նոյնպիսի կրօնաւորական կեանքի հիմք դնել։ Եւ երիտասարդ հասակում թողնելով աշխարհը իւր հրապոյրներով՝ քաշւում է դէպի անտառախիտ և լեռնոտ Պոնտոսը. Իրիս գետի մօտ, Անիսայում, սկսում է կրօնաւորական կեանք։ Բարսեղը դէպի արևելք արած իւր ճանապարհորդութիւնից երկու արդասաւոր համոզում էր բերել—ա. թէ մարդիկ չըպէտք է անպայման միայնութեան մէջ ապրեն, բ. թէ անձնուրացութեան ու անձնաչարչար լինելու չափաղանցութիւններին վերջ դնելու համար պէտք են կանոններ։

Բարսեղից անբաժան էր նրա դասընկեր Գրիգոր Աստուածաբանը։ Նրան հետևեց նրա մայր Էմմիլիան, որ երկու

արժանաւոր կրօնաւորների կեանքը քաղցրացնում էր իւր մայրական խնամքով։ Գրիգոր Աստուածաբանը կամ Նազիանզացին Պոնտոսի լեռներում իրանց վարած անապատական կեանքի մասին գրում է Բասիլին. «Ցիշում եմ այդ հացերն ու չըլպուրները և միշտ էլ պէտք է յիշեմ. որովհետև այդ քառթու հացերը ծամելիս առաւներս սոթ էին տալիս, և կարծես խիճ ծամելիս լինէի։... Եթէ թշուառներին մեծահոգութեամբ կերակրող քո մայրը չազատէր մեզ այդ դրութիւնից, քո մայրը, որը երևեց մեզ, նաև պէս ալեկոծուողներիս, որպէս անփոյթ նաւահանգիստ՝ վազուց մեռած կըլինէինք, Պոնտոսին մեր հաւատարմութեան համար ոչ այնքան գովասանքի, որքան ափսոսանքի արժանանալով»։

Բասիլը շատ խստամբեր կեանք էր վարում. իւր երկրաւոր գոյքերից միայն իւր վերայի հագուստն էր վերառել։ Եւ, «գիշերը երբ թաքչում էր մարդկանց հայեացքից, հագնում էր կոշտ մագեղէն։ Միայն ցերեկն էր հագնում պարեգօտ և վերարկու։ Նրա անկողինը չոր գետնի վերայ էր գտնուում. և գիշերները շատ անգամ հսկումներով էր անցկացնում։ Նրա ըմպելին պարզ ջուր էր, ուտելիքը՝ ցամաք հաց և աղ։ Այնուամենայնիւ նա անձնատուր էր մարմնական և մտաւոր աշխատանքի։

Պոնտական այս առանձնութեան մէջ Բասիլի և Գրիգորի կեանքը լծորդուած էր հետևեալ դժուարութիւնների հետ։ «Նրանց խրճիթը առանց տանիքի էր ու առանց դռան. վառարանը առանց կրակի ու ծխի. պատերը խորշակից այնքան չորացել էին ու ճաքճաքել, որ նրա մէջ բնակողները կաթիլքի և անձրևի ժամանակ չէին կարողանում ցեխոտ կաթիլներից պատսպարուել։ Նրանք այնտեղ կենում էին տանտալոսին դատապարտուածների պէս՝ ջրի մէջ ծարաւից տանջուելով։ Մենք տեսանք թէ ինչ հաց էին ուտում նրանք և նրանց կեանքը մահից ազատել էր Բասիլի մայրը. սակայն Բասիլը ողևորութեամբ յիշելով այդ կեանքը անուանում է նրան «Մամբրէի կաղնի, դէպի երկինք բարձրացնող սանդուղ, Մաքանայեմի կայարան, Եղիա մարգարէի Կարմելոս, Յովհաննէս Մկրտչի

անապատ և Զիթենեաց սար»։

Բարսեղն ու Գրիգորը իրանց անապատական տաժանելի կեանքը քաղցրացնում էին պահքով, ժուժկալութեամբ, աղօթքով և ֆիզիքական ու մտաւոր պարապմունքներով։ Նրանք զբաղւում էին Ս. Գրքի ուսումնասիրութեամբ և Որոգինէսից ծաղկաքաղներ կազմելով, որ Ֆիլօկալիա է կոչւում։ Բարսեղը այդ տեղ գրեց իւր «Բարոյագիտութիւնը (Нравоученіе)» և բազմաթիւ թղթերը։ Այդպիսի բազմազբաղ մարդը հազիւ թէ միջոց ունենար աշխարհի մասին մտածելու և նրա գայթակղութիւններով հրապուրուելու.—դատարկութիւնն ու անգործութիւնն են մեղսագործութեան մայրերը։ Գերագոյնով զբաղուած միտքը ժամանակ չի գտնի ստորայիններով զառածուելու. գործող ձեռքը և աշխատող անձը ապահովուած են յանցանքներից և արատներից։

«Կրօնաւորական կեանքի նպատակն էր ձեռք բերել հոգու անդորրութիւն՝ հոգու հայեացքը միայն մի անհրաժեշտ առարկայի վերայ ուղղելով, փոխանակ աշխարհային հազարաւոր հոգսերի. որոնք են. ամուսնական հոգս, աղգականների հոգս, ստրուկների հոգս, հասարակութեան թեթեւամիտ վերաբերմունք և ամեն տեսակ կենցաղական ունայնութիւն»։

Բարսեղին հետեւող «կրօնաւորները ման էին դալիս համեստութեամբ, գլուխները քաշ, հասարակ հագուստով, չլսանրած մազերով, սգաւորների պէս։ Նրանք ծանր քայլերով էին շրջում. միաժում էին և օրուայ 24 ժամերից միայն մէկն էին նուիրում ճաշի, որ կազմուած էր լինում ամենահասարակ և անհրաժեշտ կերակուրներից։ Զը «գիտեմ ինչ եմ անում այս առանձնութեան մէջ, գրում է Բարսեղը Գրիգորին, ասելն էլ ամաչում եմ. թողնելով ամեն չարիքի պատճառ քաղաքային կեանքը՝ ես մինչև այսօր չկարողացայ ինձ էլ թողնել։ Ես նման եմ ծովային հիւանդութեամբ բռնուած նաւորդի, և կարծելով թէ նաւն է ալեկոծութեան պատճառը, անդադար երթևեկում եմ մէկ դէպի նաւի ցռուկն՝ մէկ դէպի ղեկը։

Այսպէս է իմ դրութիւնը. որովհետև կրելով մէջս իմ ներքին հակումները, ես ամեն տեղ էլ նոյն ալեկոծութեան մէջ եմ գտնուում. այնպէս, որ այս մեկուսացած կեանքից աչքի ընկնող մի շահ չըստացայ»։ «Աւազ. աւելացնում է Ֆարրարը, Բարսեղի փորձը հաստատում է հազարաւոր ուրիշ մարդկանց փորձերով։ Մարդ կարող է փոխել հագուստը, իւր նիստ ու կացը, իւր բնակավայրը, բայց ամեն տեղ էլ նա կը կրի իւր հետ իւր սեպհական եսը»։

«Կրօնաւորութեան վերաբերութեամբ Բարսեղի հայեացքը քիչ տարբերւում էր եգիպտացի իւր ժամանակակիցների հայեացքից. այս երևում է այն կանոններից, որ նա գրեց Գրիգորի օգնութեամբ։ Այդ կանոնները օրինակ դարձան ասիական բազմաթիւ վանքերի։ Գրիգոր Նազիանզացին երկու տողով բնորոշում է իւր գաղափարը այդ մասին»։ «Ես ման էի գալիս, ասում է նա, անախորեանների (ճգնաւոր) և կինովիտների (վանական) միջև եղած շաւղով և գիտում էի մէկի հոգեզմայլ վերացականութիւնը և միւսի օգտաւէտութիւնը»։

«Բարսեղը շատ էլ չէր քաջալերում միանձնական ճգնաւորութիւնը. նա կարծում էր, որ ճգնաւորները չափազանց անձնատուր լինելով վերացականութեան, էլ միջոց չեն ունենում քրիստոնէական սէրը վերակենդանացնելու, ուստի և վանական կամ միաբանական կեանքի առաջին հիմնադիրը դարձաւ Պոնտոսում և Կապադովկիայում։ Սեբաստիայի աթոռադուրկ հայ Եւստաթէոսը, (որ յայտնի էր դաւանական խնդիրներում իւր տատանումներով, և որի հետ Բարսեղը բարեկամութիւն էր վարում յարգանքով վերաբերուելով դէպի նրա խստակրօնութիւնը), թէև շատ հետևողներ ունէր, սակայն նրանք, ինչպէս երևում է, ոչ միայնակեաց ճգնաւորներ էին, ոչ վանական, և ոչ շրջիկ կրօնաւոր. ապրում էին քաղաքներում և գիւղերում երկ-երկու կամ երեք-երեք միասին։ Բարսեղը շրջում էր ամեն տեղ և վանքեր հաստատում, կրօնական վէճերի ժամանակ էլ անգործ չէր մնում։

«Վանքեր հաստատելու և վանականներ գտնելու մի

առանձին դժուարութիւն չէկար։ Ծանր և սարսափելի ժամանակներ էին. զինուորական ծառայութիւնը լծորդուած էր անտանելի նեղութիւնների հետ։ Երկրագործների և քաղաքացի արհեստաւորների մէջ տիրում էր սաստիկ աղքատութիւն. որբերին ու անտէր երեխաներին նրանց ազգականները բերում էին այս առանձնութեան խիստ և սրբազան վայրերը ուսման համար։ Տէրերը թոյլ էին տալիս իրանց սորուկներին վանք մտնել։ Համոզումն էր կազմուել, թէ ամուսնութիւնը ըստինքեան բարեպաշտական և ցանկալի չէ, և այդ համոզումը դրդում էր շատ ամուսնական զոյգերի բաժանուել իրարից և հեռանալ աշխարհից։ Ոգևորուած պատանիներին շատ անգամ ընկերանում էին հասակաւորներ էլ»։

Ուրեմն, միայն հոգևորական կեանքի հրապոյրը չէր, որ մարդկանց դէպի անապատներն ու վանքերն էր գրաւում. աշխարհի դառնութիւններն ու նեղութիւններն էլ հարթում էին ճանապարհը դէպի վանք ու անապատ։ Եգիպտոսի սահմաններում Պախոմի կազմակերպած վանականութիւնը Դ. դարի սկզբում շուտով ընդարձակ ծաւալ ստացաւ Պաղեստինում Իլարիոնի ձեռքով, Ասորիքում՝ Եփրեմ Խուրու ձեռքով, Փոքր—Հայքում՝ Եւստաթէոսի ձեռքով, Կապադովկիայում ու Պոնտոսում Բարսեղ մեծի ձեռքով։

Որքան զօրանում էր վանական միաբանական կեանքը, այնքան թուլանում էր ճգնաւորական միայնակեցականը. և վանքերը քրիստոնէական եկեղեցում կարևոր հաստատութիւն դառնալով՝ տարածուեցին ամենուրեք։ Վանականութիւնը երկար ժամանակ քրիստոնեայ եկեղեցու նիւթական և բարոյական զարգացման համար հոգևոր զինուորութիւն էր. բայց դարերի ընթացքում որքան վանքերն ընդարձակուեցին ու ճոխացան, ժամանակով որքան հեռացան հիմնարկութեան օրից, այնքան էլ հեռացան հիմնադիրների պարզ և մաքուր դաղափարից. որքան ճոխացան վանքերը, այնքան էլ յղփացան վանականները և, սակաւ բացառութեամբ, մաքուր սկզբունքին ծառայելու տեղ սկսեցին անձնական հաճոյքի ու վայելքի ետևից ընկնել.

ցաւ՝ ի սիրտ պէտք է խոստովանել որ վանքերը իրանց աշխարհասէր վանականներով հաւատի և քրիստոնէական առաքինութեան գործում այժմ, եթէ ոչ ապարդիւն՝ գոնէ էլ շահաւէտ հաստատութիւն չեն համարւում շատ տեղ։ Դրա համար էլ վանքերը սկսում են անչքանալ. իսկ վանականները, որ վանքերում իրանց գործով զբաղուելով, Քրիստոսի եկեղեցու բարոյական շինութեան անկեան քարը պէտք է լինէին, քաղաքների փողոցներն ընկած՝ դառնում են վէմ գլորման և քար գայթակղութեան։

Ջ. Ոօբերտսոնը ասում է [1]). «Նա (Բարսեղը) հինգ տարով (357—362 թ.) հեռացաւ Պոնտոսի անապատը, որտեղ հիմնեց վանական միաբանութիւններ. որովհետև վանականութիւնը դեռ նոր էր ներմուծուել այս կողմերը Սեբաստիայի Եւստաթէոս եպիսկոպոսի ձեռքով։ Բարսեղի սահմանած կրօնաւորական կարգը կոչւում էր կինովական (միաբանական), որը նրա կարծիքով բարեգործութեան ու առաքինութեան մէջ մարզուելու համար աւելի նպատակայարմար էր քան Եգիպտոսում գերադաս համարուած միայնակեցութիւնը։ «Աստուած, ասում էր նա, ստեղծեց մեզ մարմնի անդամների պէս, որ կարօտ ենք իրար օգնութեան. վանդի չի կարող խոնարհութեան, առաքինութեան և համբերութեան մարզութիւն լինել այնտեղ, ուր չկայ մէկը, դէպի որը կարողանայիր կատարել այդ առաքինութիւնները։ Ո՞ւմ ոտները լուանաս. ո՞ւմ ծառայես։ Ինչպէս կարողանաս ամենից յետինը լինել՝ երբ մենակ ես ապրում»։

«Բարսեղի կանոններով կրօնական տքնութիւնների պէտք է միացած լինէր գործնական արդիւնաբերութիւնը և նրա աբեղաների աշխատութեան շնորհիւ առապարվայրը մշակուելով բերրի դարձաւ։ Բարսեղը Պոնտոսի վանական առանձնութիւնից Կեսարիա վերադարձաւ 362 թուին, քահանայ ձեռնադրուեց Եւսեբիոս եպիսկոպոսից բայց և շուտով անապատ քաշուեց իւր հռչակին նախան-

1) Ист. Христ. церк. I. հատ. եր. 24։

ձող իւր եպիսկոպոսի ատելութիւնից խուսափելով. նա մնաց անապատում երեք տարի եւս։ Գրիգորը հաշտեցրեց Բասիլին Եւսեբիոսի հետ, և վերջինիս մահից յետոյ 370 կամ 371 թուին յաջողեցրեց իւր բարեկամ Բասիլին բարձրանալ Կեսարիայի եպիսկոպոսական աթոռը, որի նուիրապետութեան տակ էր Փոքր—Ասիայի մեծ մասը։

Մանկութիւնից սկսուած սերտ բարեկամութիւնը Բասիլի և Գրիգորի մէջ քիչ մնաց, որ խզուէր։ Գրիգորը իւր եպիսկոպոս հօր և նրա հօտի միջև ծագած խռովութիւնը դադարացնելու համար Նազիանզ գնացած լինելով, հակառակ իւր կամքին՝ իւր հօրից քահանայ էր ձեռնադրուել մի քանի տարի առաջ, Բասիլը Կեսարիայի արքեպիսկոպոսական աթոռը բարձրանալով, սահմանակից եպիսկոպոսների ոտնձգութիւնների դէմ իւր իշխանութիւնը զօրացնելու համար, Գրիգորին, հակառակ նրա կամքի, համարեա բռնի Սասիմա քաղաքի եպիսկոպոս ձեռնադրեց։ Գրիգորը որքան և ճկուն ու թոյլ բնաւորութեան տէր լինէր, խորապէս վիրաւորուեց իւր բարեկամի այդ բռնութիւնից. ճշմարիտ է, նա ընկճուելով իւր բարեկամի ուժեղ բնաւորութեան ազդեցութիւնից և իւր ծերունի հօր թախանձանքից, ձեռնադրուեց, բայց չէր դադարում գանգատել յիշելով դէպի Բասիլն իւր լաւութիւնները և նրանից, ընդհակառակն, անարգանք կրելը. նա իւր այս գանգատների մէջ աւաղում էր իւր վանական, թէև չարքաշ, բայց անդորը կեանքը։—Գանգատը թոյլ բնաւորութիւնների միակ զէնքն է՝ չեմ կարող ճշտիւ որոշ ասել մխիթարուելու, թէ իրանց հասած զրկանքների յիշողութեամբ իրանց կեանքը աւելի եւս դառնացնելու համար։ Գրիգորը երկար ժամանակ չըմնաց Սասիմում, տեղափոխուեց Նազիանզ և 374 թուին, իւր հօր մահից յետոյ սկսեց կառավարել թեմի հոգևոր գործերը։ Բայց տեսնելով, որ զուր են անցնում իւր ջանքերը Նազիանզի մշտական եպիսկոպոս հաստատուելու վերաբերութեամբ, գնաց Սելևկիա և այնտեղ երեք, չորս տարի մնաց առանձութեան մէջ։

Երկու բարեկամների միջև պառակտումն բարեբաղ-

դաբար երկար չըտևեց։ Արիոսական կռիւների թունդ ժամանակ, Վաղենտի մահից յետոյ, 380 թուին Կ. Պոլիս եկաւ ուղափառութեան կոմնակից Թէոդոս կայսրը։ Այս բանը բարեյաջող դէպք համարելով՝ Բասիլեն և ուրիշ ազդեցիկ անձինք Գրիգորին ուղարկեցին մայրաքաղաք՝ արիոսականութեան դէմ մաքառելու։ Մայրաքաղաքում Գրիգորը իջևանեց իւր բարեկամներից մէկի տանը. այդտեղ նա իւր մօտ եկողներին քարոզում էր ճշմարիտ հաւատքը. հետևողների թիւը մեծացաւ. այն սենեակը, ուր նա քարոզում էր, մատուռի փոխուեց և ինչպէս յարութիւն առնող ուղղափառութեան՝ Յարութիւն կամ Անաստասիա կոչուեց, իսկ ինքն, Ս. Գրիգորը Ս. Երրորդութեան մասին յաճախ քարոզելուն համար աստուածաբան մակդիրն ստացաւ։ Սոսիմայի համեստ ճգնաւոր եպիսկոպոսը մայրաքաղաքում հռչակուեց որպէս անբասիր հոգևորական և ուղղափառ քարոզիչ, Տեղափոխուեց Կ. Պոլսոյ մայր եկեղեցին ու բազմեց պատրիարքական գահի վերայ։

Յիրաւի, Գրիգորը անբասիր հոգևորական էր և լաւ քարոզիչ, բայց որպէս վարչական մարդ՝ չունէր տոկունութիւն և կամքի ոյժ, որը երևեց 381 թուին գումարուած Կ. Պոլսոյ Ս. Տիեզերական ժողովում, ուր նա որպէս պատրիարք պէտք է նախագահէր։ Գրիգորը ստիպուած եղաւ հրաժարուել պատրիարքութիւնից և նրան յաջորդեց կայսրի կամքով, որպէս պատրիարք և ժողովի նախագահ՝ սենատոր Նեքտարիոսը՝ ընդունելով հոգևոր կոչումն։ Գրիգորի հակառակորդները նրան հեգնաբար անուանում էին եռեպիսկոպոս [1]) որովհետև ձեռնադրուել էր Սոսիմայի վերայ, պաշտօն էր վարել Նազիանզում և Կ, Պոլսում։ Գրիգորը նորից վերադարձաւ Նազիանզ՝ կառավարելու իւր հօր թեմը. իւր կեանքի վերջին տարիները նա անցկացրեց առանձնութեան մէջ ու տառնաւորներ էր գրում։ Գրիգորը վախճանուեց 389 կամ 390 թուին։ Բասիլը արդէն մօտ տաս տարի առաջ, Գրիգորի՝ Կ. Պո-

1). Վարք Սրբոց ա. հատ. եր. 321

ղիս մեկնելուց անմիջապէս յետոյ. 380 թուին էր վախճանուել։

Քրիստոնէական կրօնի ուղղափառութեան համար Փոքր-Ասիան Դ. դարում մեծ դեր էր կատարում։—Գրիգոր Աստուածաբանը, Բարսեղ մեծը և նրա եղբայր Գրիգոր Նիւսացին հանդիսանում են ուղղափառ հաւատի ախոյեան և եկեղեցու միութեան չատագով։ Ս. Բարսեղ Մեծի ջանքով կրօնաւորութիւնը Փոքր—Ասիայում ընդունում է բոլորովին այլ կերպարանք. Եգիպտոսի միայնակեաց անապատականների, Ասորիքի խոտաճարակների ու սիւնակեացների և Պաղեստինի գբնեցիների տեղ ծաղկում է Վանական միաբանական կարգը։

Նախնական դարերում հաւատացեալները շատ ուշ էին մկրտւում, և այդ այն ժամանակ՝ երբ արդէն չափահաս դարձած՝ կամենում էին բոլորովին նուիրուել իրանց հոգու փրկութեանը։ Բարսեղն ու Գրիգորը իրանց Աթէնքի ուսանողութիւնից յետոյ մկրտուեցին [1]), թէև ոչ միայն բաբեպաշտ քրիստոնեաների զաւակներ էին, այլ վերջինս մինչև անգամ եպիսկոպոսի որդի էր, որովհետև Գրիգորի հայրը Նազիանզի եպիսկոպոսն էր դարձեալ Գրիգոր կամ Գրիգորիոս անուամբ։

Մեր եկեղեցին Կեսարիայի աթոռի հետ շատ սերտ յարաբերութեան մէջ էր։—Ս. Լուսաւորիչը այնտեղ ստացաւ ձեռնադրութիւն. այսպիսով ոչ միայն Կեսարիան իւր եպիսկոպոսական աթոռով, այլ և իւր դպրոցով, ուր կրթւում էին հայ պատանիները, մի տեսակ հեղինակութիւն էր վայելում։ Բարսեղը այդ հեղինակաւոր աթոռի ամենանշանաւոր աթոռակալն էր։ Մեր վանքերը հետևում են Բարսեղի հաստատած կանոններին, որ շեշտուած է պետական օրէնքների հաւաքածոյի մէջ ևս [2])։ Մեր եկեղեցին ամենասուրբ Երորդութեան մասին այն ուղղափառ հաւատքն է դաւանում, որ քարոզում ու վարդապետում էր Ս. Գրի-

---

1), Жизнь и Труды Свв. Отцовъ. Св. Григорій Назіанзинъ եր. 383. Ист. Христ. церк. հատ. I. 241.

2). Сводъ законовъ. томъ одинадцатый, часть I. յօդ 1196.

գոր Աստուածաբանը։ Մեծն Բասեղի և Ս. Գրիգոր Աստուածաբանի գործունէութեան շրջանը մեր երկրին կից էր թէ Կեսարիայում և թէ Ցունաստանում նրանց դասընկերների մէջ ուրիշ հայ պատանիների [1]) հետ էր անկասկած և Մեծն Ներսէս. և նրանք բոլորն էլ կրթուել էին հայ ուսուցչապետ Պրոէրեսիոսի [2]) ղեկավարութեամբ ու քրիստոնէական հոգւով։

Թէ Ս. Գրիգոր Աստուածաբանը և թէ Ս. Բասեղ Մեծը մեր եկեղեցու ոսկեղեցու սրբերի կարգումն են. նրանց նուիրուած շարականների մէջ [3]) բնորոշուած է նրանց գործունէութիւնը՝—Ս. Բասեղին համարելով կրօնաւոր, վանքերի կազմակերպող, (վանականներին քրիստոսազօր զինուոր անուանելով), քարոզիչ և կանոնադիր, իսկ Ս. Գրիգոր Աստուածաբանին լուսաւոր վարդապետութեամբ անգիտութեան խաւարը հալածող, միասնական Սուրբ Երրորդութեան համագոյ բնութիւնը քարոզող, և Փրկչի մարդեղութեան վերաբերութեամբ ուղիղ վարդապետութիւնը ճեպակերպող, այն է. «մի յերկուց՝ նոր խառնումն աքանչելի»։

Է.

Հոգեորականների ամուրի լինելու խնդիրը. Եպիսկոպոսների ամուրիութիւնը արեւելքում. Հոգեոր կեանքի կազմակերպութիւնը Դ. դարի վերջում. Կանոններ կրօնաւորների մասին: Տրդատեան ժողով:

Թէև խստակրօնութեան ու ամուրիութեան մեծ կարևորութիւն էր տրւում սկսած երկրորդ դարից և ամուրիութիւնը գերադասւում էր ամուսնացած լինելուց, սակայն հոգևորականութիւնը, որ կազմուած էր եպիսկո-

1). Жизнь и труды Свв. отцовъ, Св. Григорій Назіанзинъ եր. 387.

2). Նոյնը եր. 384

3). Շարական Սրբոյն Բասեղի հայրապետին. և շարական Սրբոյ Գրիգորի Աստուածաբանին. (տես ի կարգի յատուկ մանկանց)։

պոններից, քահանաներից և սարկաւագներից՝ արևելեան եկեղեցում մինչև Դ. դարի վերջը ամուսնացած էր. քչերն էին ամուրի և դրանք էլ չէին մերժում կամ արհամարհում ամուսնացածներին։ Միայն Եւստաթէոսը սկսեց արհամարհաբար վարուել ամուսնացած հոգևորականների հետ, նա մերժում էր նրանց և չէր ընդունում նրանց կատարած եկեղեցական խորհուրդները։ Եթէ Գանգրայի ժողովում դատապարտուեց Եւստաթէոսը, հաւատոյ խնդրում մոլորութիւնների հետ ի նկատի էր առնուած և նրա, եպիսկոպոսի կոչման անվայել, կրօնաւորական գծուծ նիստ ու կացն ու արհամարհանքը դէպի ամուսնացած հոգևորականները։ Սակայն կրօնաւորական հոգու ազդեցութեամբ, ասում է Ջ. Բոբերտսոնը [1]), առաջ եկաւ հոգևորականների ամուրի լինելու ձգտումը, որը հետզհետէ սովորութիւն և անհրաժեշտութիւն դարձաւ։ Կարծիք կայ, թէ մինչև անգամ 325 թուին Նիկիայի Առաջին Տիեզերական ժողովում խնդիր է եղել, որ եպիսկոպոսները, քահանաները ու սարկաւագները պարտաւորուած լինեն զգուշանալ իրանց կանանց հետ յարաբերութիւն ունենալուց, այսինքն խզեն իրանց ամուսնական կապը. բայց այս բանին դէմ է կացել Եգիպտոսի Պաֆնուտիոս կամ Պափնոտիոս եպիսկոպոսը։ Նա ամուսնութիւնը ջատագովելիս հիմքն է ունեցել այն սկզբունքը, թէ քրիստոնէական ամուսնութիւնը սուրբ է. պէտք չէ հոգևորականութեան վերայ այնպիսի լուծ դնել, որ շատերը անկարող լինեն տանել և մեղքի մէջ ընկնեն ի վնաս եկեղեցու։ Պափնոտիոսի առաջարկութիւնը ընդունուեց առանց հակաճառութեան, նրա անձնական հեղինակութեան պատճառով. որովհետև նա յարգուում էր որպէս խոստովանող, հրաշագործ և սուրբ մարդ։ Պափնոտիոսը [2]) Անտոն անապատականի աշակերտներից էր և երևելի ճգնաւոր։ Նա Թեբայիդի եպիսկոպոս դառնալով խոստովանող անուն ժառանգեց, որովհետև Մաքսիմիանոսի հալածանքի

---

1) Истор. Христ. церк. հատ. I. եր. 163—164։
2) Նոյնը. 293—294.

ժամանակ նրա աչ աչքը բրել էին և ձախ ոտքը խորտակելով՝ ուրուր էին ուղարկել տաժանակիր աշխատութեան. Նիկիոյ և Տիւրոսի ժողովներում ս. Աթանասի ջատագովը էր նա և արիոսականների բուռն հակառակորդը։

Հոգևորականների ամուսնութեան դէմ լինելու համար Եւստաթէոսին դատապարտելու հիմքերից մէկն էլ, երևի, Նիկիայի ժողովի այս որոշումն էր։ Սակայն այս՝ Դ. դարի առաջին կէսին էր. նոյն դարի Բ. կէսին հոգևորականների ամուրի լինելը ոչ միայն չէր դատապարտւում, այլ մինչև անգամ քաջալերւում էր։ Եկեղեցու լուսագոյն հայրերն ու վարդապետները, որպիսի էին Ս. Գրիգոր Աստուածաբանն ու Ս. Բասեղ Մեծը կրօնաւորական կարգից ամուրի հոգևորական դարձան, համարելով, որ եկեղեցու պաշտօնեաները մի միայն եկեղեցուն ծառայելու համար պէտք է ընտանեկան կապերով կաշկանդուած չլինեն։ Ս.յսպէս եկեղեցու մէջ վարչական իշխանութեան կոչուած հոգևորականների ամուրի լինելու հակումն սովորութիւն դարձաւ, ու սովորութիւնն էլ օրէնք, թէև մինչև Դ. դարի վերջը բացառութիւններ կային։

Արևելեան եկեղեցում եպիսկոպոսները՝ քանի որ ամուսնացած, ընտանիքի տէր մարդիկ էին, ապրում էին քաղաքներում միւս քաղաքացիների շարքում, իսկ երբ նրանք իբրև ամուրի՝ վանականներով ու կրօնաւորներով շրջապատուեցին, այլևս անյարմար եղաւ քաղաքի մէջ քաղաքացիների հետ ապրել. ուստի և եպիսկոպոսական աթոռները տեղափոխուեցին քաղաքից դուրս, բայց ոչ շատ հեռու վանքի մէջ, կամ թեմի մի կենդրոնական վանք, այդ տեսակ վանքերը սկսեցին լավրա կամ հայերէն մայրավանք, մայրաքաղաք վանք կոչուել, իսկ եպիսկոպոսները՝ Լավրայի առաջնորդ, վանահայր, մեծաւոր։ Եպիսկոպոս առաջնորդը տնօրինում ու հոգում էր թեմի հոգևոր պէտքերը և թեմականների հոգևոր տուրքերով էլ կառավարում էր լավրան կամ մայրավանքը։

Ժամանակի ընթացքում եպիսկոպոսները ամուրի մնալով հանդերձ՝ դարձեալ քաղաք տեղափոխուեցին, հեռա-

ցան վանքերից ու վանականներից և աշխարհիկ հոգևորականության մասն կազմելով՝ սկսեցին ապրել յատուկ շէնքերում, որ եպիսկոպոսարան է կոչւում։

Եպիսկոպոսների վանքերում բնակուելու և իրանց բնակած վանքերի առաջնորդ կոչուելու սովորութիւնը մի քանի տեղ դեռ կայ. օրինակ, Կիեվի մետրապոլիտ արքեպիսկոպոսը կրում է Կիեվոպեչերեան լավրայի առաջնորդ, վանահայր կոչումն, Մոսկվայի Մետրապոլիտը՝ Ս. Սերգէի լավրայի, Պետերբուրգինը՝ Ս. Ալէքսանդր Նևացու։

Հայերիս մասին, իբր տեղում։

Արևմտեան եկեղեցում Սիրիցիոս պապը [1]) ամուրիութեան վերաբերութեամբ 385 թուին վճռական քայլ արեց իւր կանոնական կոնդակով առ Տարրագոնիայի Հեմերիոս եպիսկոպոսը։ Այս թղթով ի միջի այլոց արգելւում է այրիների հետ ամուսնացածներին և երկրորդ անգամ պսակուածներին հոգևոր կոչման մէջ մտնել։ Էական իշխանութիւն կազմող հոգևորականներին ամուրի լինել օրինադրող կարգադրութեան պատճառն այն էր, որ հոգևորականները իրանց զաւակների ու ընտանիքի համար էին մտածում միայն։ Սակայն օրինաւոր ամուսնութիւնը արգելուելով՝ հոգևորականներից շատերը սկսեցին իրանց տներում ծանօթ կանայք և աղախիններ ընդունել։ Այս դայթակղութեան առաջքը առնելու համար էլ Նիկիայի ժողովը սահմանել էր, որ հոգևորականները ծանօթ կամ աղախին անունով կանայք չպահեն իրանց բնակարաններում՝ բացառութեամբ շատ մօտիկ ազգականների և. ծերունի կանանց, որոնց ներկայութիւնը որ և է կասկածի տեղիք չէր կարող տալ։

Ե. Դարի վերջին հոգևոր կեանքը հետևեալ կազմակերպութիւնն ունէր. անապատական միանձն ճգնաւորները, խոտաճարակները, սիւնեակեացներն ու գբնեցիներ սկսել էին հազուագիւտ դառնալ. ընդհակառակն վանքերի գոյութեամբ և շատանալովը սկսեց զօրանալ վանական միաբանական կեանքը։

1). Նոյն և Վալրք Սրբոց հատ. 12. եր. 318—319.

Վանականները պատկանելով որ և է վանքի միաբանութեան՝ այդ վանքերումն էլ բնակում էին. դրանք իրաւունք չունէին քաղաքներում ու գիւղերում դիշերել. եթէ չըկարողանային իրանց վանքը հասնել, պէտք է ճանապարհին պատահած մի որ և է վանքում մնային. իրաւունք չունէին պսակ կամ մկրտութիւն անել կամ կանանց հաղորդութիւն տալ, օրէնք կատարել.—«Ուխտաւոր մի ճանապարհ ունիցի ի մարմնաւոր կանայս վասն սիրոյ և մի տեսցէ զպսակեալս, և մի ինքն դիցէ պսակ կամ առնիցէ մկրտութիւն կամ օրէնս տալ կանանց, այլ ի մտանել արեգականն երթան ի տեղիս իւրեանց. և եթէ յանդգնին, նզովեալ եղիցին ի Քրիստոսէ [1])»։

Վանականների և կրօնաւորների համար Ներսէս Բ. կաթուղիկոսի գահերեցութեամբ 527 թուին Դունի Բ. ժողովի կանոնները [2]) աւելի որոշ են. դրանց համառօտութիւնն է.

«ԼԳ. Կով կթելու կամ հաց թխելու կամ որ և է գործի համար կին չըմտնի աբեղաների վանքը»։

«ԼԴ. Անապատականները արևի մտնելուց առաջ վերադառնան իրանց անապատը.

«ԼԵ. Վանականները աշխարհականների տանը չըկենան, և եթէ մօտիկ վանք չըկայ, աւագերէցի տանը կենան։

«ԼԶ. Վանականները չըհամարձակուեն վաճառականութիւն անել և առանձին ձի կամ այլ ինչ պահել։

Ա. Վանականները երկու կարգ էին բաժանուում, «սրբաղնագործներ, որ քահանայի աստիճան ունէին և աքեմաւորներ, որոնք միայն վանականի տարազ կրելով վանքերումն էին ապրում, դրանք մեր գրականութեան մէջ յայտնի են մոնոզոն, պարեգօտաւոր անունով և վանքի մէջ ծառայական ու մշակական գործերն էին վարում կրելով միաբան կոչումն։ Սրանք համարեա անդրագէտ մարդիկ էին։

---

1) Կանոն ի։ Բարսղի Բ-դ. Կանոնգիրք Մատ. Մայր Աթոռոյ թ. 766. եր. 241.

2) Եկեղ. պատմ. Ցուսիկ վարդապետի (մեր) 1884 թ. Վաղարշապատ. եր. 120։

Բ. Կրօնաւորներ. սրանք չընպատականելով որ և է վանական միաբանութեան թափառաշրջիկ կեանք էին վարում, ապրում էին հաւատացեալներից ժողոված նուէրներով. սրանցից աւելի առաքինիները նուէրների սակաւ մասը իրանց անհրաժեշտ պէտքերին գործադրելով, մեծագոյն մասը բաժանում էին աղքատներին ու կարօտներին. իբրև թափառական մոնելով ամեն տեղ՝ միխիթարում էին և կազդուրում հաւատացեալների հաւատը հոգեշահ զրոյցներով ու կրօնական խօսակցութիւններով։

Գ. Աշխարհիկ հոգևորականութիւնը բաժանուած էր երկու կարգ՝ ամուրի և ամուսնացած։

1. Ամուրի էին եպիսկոպոսները և քահանայի աստիճան ունեցող վեղարաւորները, որոնց հայերէն սովորութիւն է կոչել վարդապետ, աբեղայ. սրանցից առաջինը համապատասխան է արքիմանդրիտ՝ և երկրորդը յերոմոնախ բառերին։ Սրանք նուիրուած էին եկեղեցու վարչական գործերը կատարելու իրաքանչիւրը /ւր աստիճանին համեմատ. և կրելով վանականի վեղար ու սքեմ՝ ապրում էին ժողովրդի մէջ իբրև հոգևոր իշխան և քարոզիչ։

2. Ամուսնացած էին քահաններն ու սարկաւագները, որոնք ժողովրդի մէջ եկեղեցական խորհուրդներն էին կատարում, քահանաները որպէս սրբազնագործ, իսկ սարկաւագները որպէս սպասաւոր պաշտօնեայ։

Տրուլլեան ժողովը [1]) մօտաւորապէս 691 թուին եկեղեցականների ամուսնութեան վերաբերութեամբ կարևոր որոշումներ ունի. այդ ժողովը ընդունում է որպէս կանոն, որ քահանաները, սարկաւագներն ու կիսասարկաւագները ամուսնացած լինեն. հոգևորական չէին կարող լինել այրիների հետ ամուսնացածները, երկրորդ անգամ պսակուածները. իրաւունք չունէին ձեռնադրուելուց յետոյ պսակուել. այրիացած քահանաները պսակուելով՝ կարդընկէց պէտք է լինէին. եթէ երկրորդ կինը մեռնէր, կամ քահանան հեռնար իւր երկրորդ կնոջից, կարող էր իւր

1) Ист. Христ. церк. հատ. I. եր. 715—716.

աստիճանի մէջ մնալ, բայց իրաւունք չունէր քահանայագործութիւն անել. եթէ քահանան սարկաւագը և կիսասարկաւագը ամուսնանար այրու հետ, պարտաւոր էր բաժանուել կնոջից, արգելուել ու զրկուել հետևեալ աստիճանները ստանալու իրաւունքից։ Ժողովը կարգալոյծ անելու սպառնալիքով արգելում է Աֆրիկէի և Լիբիայի եպիսկոպոսների սովորութիւնը, որով նրանք շարունակում էին իրանց կանանց հետ կենակցութիւնը. եպիսկոպոսի կնոջը պատուիրւում էր բաժանուել իւր ամուսնուց և վանք մտնել։ Ժողովը խստելի է համարում հայերի սովորութիւնը, որանք պահանջում էին, որ հոգևորականները ծագած լինեն քահանայական ընտանիքներից [2]). և թոյլ էին տալիս որ, հոգևորական ծագումից եղողները առանց հոգևոր կոչման ստորին աստիճանները ստացած լինելու (առանց հատման հերաց) սպասաւորեն որպէս սաղմոսասաց և ընթերցող։ Հռովմայ եկեղեցին պահանջում էր. որ քահանայ կամ սարկաւագ ձեռնադրուածները բաժանուեն իրանց կանանցից. սակայն Տրուլլի ժողովը հետևելով առաքելական կանոններին իւր 13-րդ կանոնով ընդհակառակն սահմանեց, որ քահանաներն ու սարկաւագները պէտք է անբաժան մնան իրանց ամուսիններից. թէև Սէրգիոս Ա. պապը չընդունեց Տրուլլեան ժողովը, սակայն այդ ժողովի կանոնները պահպանում են արևելեան եկեղեցում։

Պէտք է գիտենալ, որ ոչ միայն ամուրիներն ու այրիացածներն էին վանական կամ եպիսկոպոս դառնում, այլ երբեմն ժամանակ կարող էին ամուսնացածներն էլ վանական և եպիսկոպոս դառնալ՝ նախապէս իրանց կանանց հետ համաձայնութեան գալով. այս կարգի մարդկանցից էին Աֆրիկայի և Լիբիայի եպիսկոպոսները, և սրանց համար էին Տրուլլեան ժողովի որոշումները։

---

2), Թէև Ս. Գրիգոր Լուսաւորիչը առաւելապէս քրմերի որդիքը հաւաքեց հոգևորական պատրաստելու համար, սակայն այդ մի անհրաժեշտութիւն էր իւր ժամանակին՝ քրմական դասը չը գրգռելու համար։ Մեր եկեղեցու կանոնները չեն արգելում հոգևոր ծագում չունեցողներին հոգևորական լինել։

Ը.

Աշխարհիկ հոգեւորականների ամուսնութիւնը Արեւմուտքում. Կանոնիկներ եւ նրանց նոր նշանակութիւնը. Սիմոնականութիւն. Գրիգոր Է. պապի ջանքը Սիմոնականութիւնն ու հոգեւորականների ամուսնութիւնը վերացնելու։—Ամուրիութիւն—Ցելիբատ: Տրիդենտեան ժողով: Հայ կաթոլիկ եկեղեցի։ Հռովմէական եկեղեցուց հերձուածները:

Արեւմտեան եկեղեցին այս շրջանում շատ անգամ է կանոններ սահմանել, որ աշխարհիկ հոգեւորականները ամուսին լինեն. սակայն նրանք մեծ մասամբ կին էին պահում, մանաւանդ այն տեղերում, ինչպէս էր Լոմբարդիան, Սպանիան, և Գաղղիայի ու Գերմանիայի մի քանի մասերը՝ ուր պապի իշխանութիւնը ամուր կռուան չունէր։ Գրիտոնում Կուրիենայի եպիսկոպոսական գահը ժառանգական էր եպիսկոպոսների ընտանիքի մէջ, որոնք հոգեւոր իշխանութեան հետ միացրել էին քաղաքական վարչութիւնն էլ. «Դրանցից (եպիսկոպոսներից) մէկի կինը է. դարի կէսի մօտերքին, հաւատիպդրեր ստորագրելիս՝ անուանում էր իրան «episcopa» կամ «antistita Curiensis», և եպիսկոպոսների այս ամուսնութիւնը ցոյց է տալիս, որ հոգեւորականութիւնն ամուսնական կեանք վարելու ազատութիւն ունէր [1]։ «Ամուսնութեան վերաբերութեամբ անգլիական եկեղեցին պէտք է վարուէր Հռովմի օրէնքներով. սակայն Աւգուստինի՝ Գրիգոր Մեծին ուղած հարցերից մէկը ցոյց է տալիս՝ որ ամուսնութիւնը սովորական էր անգլիական հոգեւորականութեան մէջ. հոգեւորականների պսակները չէին ջնջւում, և երեխայքը ապօրինի չէին համարւում մինչև ԺԲ. դարը»։

Եկեղեցին խիստ օրէնքներ էր դնում հոգեւորական-

---

1), Ист. Хрис. Церк. հատ. I. іерархія, Управленіе Церкви, Монашество.

ների ամուսնությունը ջնջելու և ապօրինի կնապահության վախճան դնելու։ Տոլեդեան 4-րդ ժողովը (633 թ.) վերահաստատում է նախկին ժողովների որոշումը, որով հոգևորականների ապօրինի կանանց պէտք է վաճառէին։ Նոյն քաղաքի 9-րդ ժողովը (655 թ.) աւելացնում է, թէ նրանց զաւակները պէտք է եկեղեցու ստրուկներ դառնան։ Այդ կանոնները արգելում են մինչև անգամ Նիկիայի ժողովի թոյլատրած մերձաւոր ազգական կանանց ընդունելը, այն առարկութեամբ, թէ ազգականուհու անուամբ յաճախ ուրիշներն էին ընդունւում և մինչև անգամ բնութեան օրէնքների դէմ էլ մեղանչումներ էին լինում։

Առաջ, ամեն մի հոգևորական, որ եկեղեցիների ցուցակումն էր գրուած և իրաւունք ունէր եկեղեցական գումարների հաշուով ապրելու՝ կոչւում էր կանոնիկ, բայց 760 թուին կանոնիկ բառը ուրիշ նշանակութիւն ստացաւ և կանոնիկ կոչուել սկսեցին նրանք, որոնք վանական միաբանութիւնների նման սկսեցին կառավարուել առանձին կանոններով։ Այդ տեսակ հիմնարկութեան միտքը նոր չէր, որովհետև առաջուց էլ Երանելի Օգոստինոսն և ուրիշները իրանց հոգևորականների հետ խմբական (միաբանական) կեանքի օրինակ էին տուել. և աւելի մօտիկ ժամանակներում նման սովորութիւն գոյութիւն ունէր վանական միաբանութիւնների մէջ, ուր եպիսկոպոսը ընթերականերով (շտատ), հոգևորականներով ու աբեղաներով էր ապրում։ Այժմ այդ սովորութիւնը կանոնաւոր կարգի վերածուեց Պիպինի եղբօրորդի Ֆրոնեգանդի և Մեցի արքեպիսկոպոսի ձեռքով։ Այսպէս կազմակերպուած հոգևորականութիւնը իւր կեանքի զանազան պարագաներում առաջնորդւում էր Բենեդիկտեան կանոններով։ Եպիսկոպոսը բռնում էր Բենեդիկեան աբբատին համապատասխան տեղ. աւագսարկաւագը համապատասխանում էր վանահօր. աւագագոյները երկու կարգի մէջ էլ միևնոյն դիրքն ունէին։

Կանոնիկ հաստատութեան վանահայրը Բենեդիկտի պէս սահմանում էր հանրակեցարան, միանման հանդերձ, հասարակաց սեղան, հասարակաց ննջարան. միայն եպիսկո-

պոսը՝ ուր հարկաւոր չէր համարում, բացառութիւնը թոյլ էր տալիս։ Հոգևորականներից պահանջւում էր, որ նրանք ամեն օր որոշուած ժամերգութիւններին ներկայ լինեն։ Այդ հոգևորականութիւնը ամեն օր պարտաւոր էր պարապել ձեռքի աշխատանքով և իւր ժամանակի որոշեալ ժամերն էլ նուիրել գիտութիւններին։ Կրտսերները պարտաւոր էին յարգել աւագներին. օրինակ. նրանց անցնելիս՝ ոտքի պէտք է կանգնէին, նրանց օրհնութիւնը խնդրէին և նրանց ներկայութեանը կանգնած մնային՝ եթէ նստելու թոյլտուութիւն չլինէր։ Մեծ Պասին և աշնանը պարտաւոր էին եպիսկոպոսների մօտ խոստովանել. ուրիշի մօտ խոստովանելու գնալը արգելուած էր և այս բանում զանցառուները ենթարկւում էին մտրակի հարուածների կամ բանտարկութեան։ Ամեն կիւրակէ և տօն օրերին բոլորն էլ պարտաւոր էին հաղորդուել, բացի նրանցից. որոնց խոստովանահայրը նրանց մեղքի ծանրութեան պատճառով արգելում էր։ Որոշեալ ժամանակին հանդերձ էր տրւում. այդ ժամանակ աւագագոյնները պարտաւոր էին իրանց հնոտիները կրտսերներին տալ։ Տան ծառայութիւնները բոլորը պէտք է կարգով կատարէին. ամեն մէկը հերթով պէտք է խոհանոցում մի շաբաթ զբաղուէր, բացառութեամբ միայն աւագ սարկաւագի (վանահօր) և մատակարարի։ Աշխարհականները միայն որոշ նպատակի համար էին ներս թողնւում, օրինակ, խոհանոցում օգնելու. գործը վերջացնելուց յետոյ պարտաւոր էին հեռանալ։

Ուտելիքի վերաբերութեամբ կանոնիկների կարգերը Բենեդիկտեանների չափ խիստ չէին. կանոնիկները բացի պասից և ապաշխարութեան օրերից կարող էին միս ուտել։ Նրանց աստիճանի և իւրաքանչիւրի ցանկութեան համեմատ տրւում էր ամեն մէկին մի բաժին գինի կամ գարեջուր, քահանաներին և սարկաւագներին՝ երեքական գաւաթ ճաշի ժամանակ և երկուական գաւաթ՝ ընթրիքին. կիսասարկաւագներին՝ ամեն անգամ երկուական գաւաթ, իսկ ստորին աստիճանաւորներին՝ ճաշին երկուական, և ընթրիքին՝ մի մի գաւաթ։

«Սեղանատանը եօթ սեղան էր դրուած լինում. եպիսկոպոսի, կանոնիկների զանազան աստիճանաւորութիւնների, քահանաների ու սարկաւագների, կիսասարկաւագների և սովորական աստիճանաւորների, օտարականների, և քաղաքային հոգևորականութեան համար առանձին առանձին։ Քաղաքի հոգևորականութիւնը կիւրակէ և տօն օրերին այդտեղ էր ճաշում և մասնակցում էր կանոնիկոսներին խօսուած խրատական քարոզներին, որ այդպիսի օրերը սովորաբար տեղի էր ունենում կանոնիկների եկեղեցում, որ Կապիտուլում էր կոչւում։ Ճաշի ժամանակ կարդացւում էին խրատական գրքեր. և ընթերցուածքը լսելու համար խոր լռութիւն էր պահւում. «Որովհետև անհրաժեշտ է, որ մրամնաւոր կերակուր ընդունելիս հոգին էլ զօրանար հոգևոր կերակրով»։

Կանոնիկները Բենեդիկտեաններից տարբերւում էին նրանով, որ կանոնիկներին թոյլատրուած էր անձնական սեպհականութիւն ունենալ։ Բայց այդ սեպհականութիւնը ժառանգական լինէր, թէ նուէրներից ու օրինակաւորութիւնից կազմուած՝ մեռնելիս կանոնիկը պէտք է թողնէր իւր միաբանութեանը։

Կանոնիկների այս կարգը Մեցից շուտով ուրիշ քաղաքներ էլ տարածուեց. և Կարլոս Մեծը շատ ցանկանում էր պարտաւորական դարձնել այն բոլոր հոգևորականութեան համար, թէև նրա ջանքը չարդիւնաւորուեց.—հոգևորականների մեծագոյն մասը ապրում էր դարձեալ աշխարհային կեանքով։ Կանոնիկների կանոնադրութիւնը քաջալերութիւն գտաւ Էլաշապելեան մեծ ժողովում, Լիւդովիկոս բարեպաշտի ժամանակ 816 թուին և թ. դարի կէսերին ներմուծուեց Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի և հուսկ ուրեմն Անգլիայի համարեա բոլոր եպիսկոպոսանիստ աւագ եկեղեցիներում։

Այս նոր կարգի արտաքին խստութեամբ հոգևորականութիւնը կարողացաւ նորից արժանանալ այն յարգանքի մի մասին, որից զրկուած էր, և որը լիուլի վայելում էին կրօնաւորներն ու աբեղաները. Այս խստակրօնութեան

և հոգևորականին վայել կենցաղավարության պատճառով կանոնիկների միաբանություններին մեծ նուիրաբերություններ էին անում։ Եպիսկոպոսանիստ տաճարի կանոնիկ միաբանությունը հարստացաւ, ազդեցություն ձեռք բերեց և հետամուտ եղաւ գործել որպէս եպիսկոպոսի խորհուրդ, ձգտելով միջամտել եպիսկոպոսի թեմական գործերի կառավարության էլ, հակառակ Ռավեննայի ժողովին՝ որ գումարուեց Յովհաննէս Ը.— պապի ժամանակ 877 թուին։[1]).

Եպիսկոպոսները առանց պաշտօնավարության տեղը յատկացնելու, սիմոնականությամբ քահանաներ էին ձեռնադրում. հոգևորականները ամեն կերպ շատ ընկած էին։ Գրիգոր Է. պապը սիմոնականություն էր համարում աշխարհականների միջամտելն էլ եկեղեցիներին արած իրանց նուէրները կառավարելուն։ Նա աշխատում էր ամուրիությունը պարտաւորական դարձնել հոգևորականության համար, մասամբ այն պատճառով, որ ինքն վանական խստակրոն կեանք էր վարել և սովոր էր այդ կեանքին և մասամբ էլ՝ քաղաքական հաշիւներ ի նկատի ունենալով։ Նա ամուրիությունը պարտաւորական դարձնելով՝ յոյս ունէր դրանով ա. խզել հոգևորականների կապերը հարազատների և հասարակության հետ, բ. ջնջել հոգևորականության մէջ ազգային զգացումն ու նրանից կազմել մի պապական կորպորացիա. գ. այդ կորպորացիան աւելի հզու դարձնել պապին քան քաղաքական իշխանության. և այսպէս, եկեղեցական իշխանության ձեռքում պահել այն հարստությունը, որ այլ կերպ ընտանեկան ու ազգակցական կապերի շնորհիւ կարող էր օտարանալ։ Գրիգոր Է.-ի ժամանակ, 1074 թուի Մեծ պասին կազմուած ժողովում Սիմոնականությունն և հոգևորականների ամուսնությունը արգելող կանոններ սահմանուեցին, որոնցով օրինազանց հոգևորականները զրկուում էին եկեղեցում քահանայագործելու իրաւունքից, աշխարհականներն էլ պարտաւորուում էին հրաժարուել նրանց օրինակատարություններից։ Յայտա-

1). Ист. Христ. Церк. հատ. I. եր. 1011.

բարուած էր, որ այդպիսի հոգևորականների օրհնությունը անէծք է, նրանց աղօթքը՝ մեղք, և թէ, այս որոշման չը-հնազանդելը՝ կռապաշտություն ու հեթանոսություն։

Այս կարգադրությունը բաւական աղմուկ հանեց. հակառակորդները առարկում էին թէ, սրբազնագործությունը ըստ հին կանոնաց, կապ չունի գործողի արժանաւոր կամ անարժան լինելու հետ, բաւական է, որ սրբազնագործողը ձեռնադրությամբ իրաւունք ստացած լինի. թէ, պապը հոգևորականներին պարտաւորացնելով հրեշտակային կեանքով ապրել՝ ամեն տեսակ գայթակղության դուռ է բաց բանում նրանց առաջ. և թէ, նրանք աւելի կընախադասէին քահանայությունից զրկուել, քան իրանց կանանցից։ Տարաձայնությունը ամուրիության վերաբերմամբ տևեց մինչև ԺԶ. դարը, մինչև Տրիդենտեան ժողովը, որը 1542-ին սկսուեց և տասնեակ տարիներով շարունակուեց [1])։

Արևմտեան եկեղեցում վանականներն ու կրօնաւորները ամուրի են և բազմաթիւ կարգերի կամ օրդեններին են բաժանուում, ամեն մի օրդենը ունի իւր որոշ նպատակն ու կանոնադրությունը։ Վանականներն ու կրօնաւորները ըստ վարչականին ենթարկուում էին իրանց թեմի եպիսկոպոսի իրաւասությանը։ Թեմական եպիսկոպոսների աղդեցությունը, նայելով ժամանակի հանգամանքին, երբեմն զօրանում, երբեմն էլ թուլանում էր։ Եպիսկոպոսները ձգտում էին վանքերը միշտ իրանց ձեռքին պահել, իսկ վանքերը աշխատում էին որքան կարելի է ազատուել եպիսկոպոսների ճնշումներից. եպիսկոպոսները զանազան պատրուակով մեծ գումարներ էին կորզում վանքերից, և իրանց անկարևոր այցելությունների պատճառով մեծ ծախքերի պատճառ դառնում։

Վանահայրերի ընտրությունը, ըստ հին սովորության և եկեղեցական կանոնների, վերապահուած էր վանականներին. եպիսկոպոսները շատ անգամ զրկում էին վա-

---

1), Ист. Христ Церк. հատ. II. եր. 15, 176,840—855։

նականներին նրանց այս իրաւունքից. վանականների այս մասին բողոքները շատ անգամ էին հասնում ժողովներին, և եպիսկոպոս ժողովականները ստիպուած էին լինում դատապարտել այդ բռնութիւնները և արգելել. վանքերը մինչև անգամ իրաւունք ստացան, իրանց եպիսկոպոսների բռնութիւնների ու ապօրինութիւնների դէպքում դուրս գալ նրանց իրաւասութիւնից [1]) և ուրիշի իրաւասութեան տակ մտնել։ Եպիսկոպոսների գործը պէտք է լինէր հսկել վանքերի կրօնական—բարոյական զարգացման և վանքերի նիւթականի բարւոքման վերայ և ոչ թէ հարստահարել նրանց։

Երբ ինքն հոգևոր բարձր իշխանութիւնը զեղխ, զեղծ, անբարոյական կեանք էր վարում և հարստահարում իւր ստորադրեալներին, չէր կարող պահանջել, որ ստորադրեալները, աշխարհիկ հոգևորական թէ կրօնաւոր վանական, լինէին պարտաճանաչ, չափաւոր, զգաստ և բարոյական։

Ամենալաւ սկզբունքը հետզհետէ հեռանալով իւր սկզբնական նպատակից, և միայն արտաքին ձևը պահելով, յեղափոխւում է և աղաւաղւում, և, փոխանակ բարոյական շինութեան՝ գայթակղութեան առիթ դառնում, «Աբբաներն՝ ինչպէս և եպիսկոպոսները անձնատուր էին եղած պատերազմի, որսորդութեան, խաղամոլութեան. սիրում էին երգիչների ու ծաղրածուների շրջանում ժամանակ անցկացնել։ Այսպիսի անկարգութիւնների դէմ շատ կանոններ են դրուել, որոնցից մի մասն էլ վերաբերում է մայրապետներին. երկու սեռի կրօնաւորի անբարոյականութեան մասին էլ լսւում էին տրտունջներ և լինում էին ջանքեր՝ չարիքը խափանելու համար [2]»։ Լաւ սկզբունքը աղաւաղուելով՝ նսեմանում էր, բայց չէր դադարում սիրելի ու համակրելի մնալ. աղաւաղումն որպէս ժամանակաւոր չարիք ընդհանուր զայրոյթ էր առաջ բերում, ընդ-

---

1), Ист. Христ. Церк. հատ. I. եր. 721—722. Монашество.
2), Նոյն եր. 726։

նմին և եռանդ՝ մաքառել չարիքի դէմ և վերացնել նրան։

Սկսած Գրիգոր Է-ից՝ պապերը ձգտումն են ունեցել սահմանափակելով իրաւատէր եպիսկոպոսների իշխանութիւնը՝ վանքերին որոշ ազատութիւն և անկախութիւն տալ, որպէս զի պապական աթոռի հետ անմիջական յարաբերութեան մէջ պահելով վանքերը՝ իրանց ազդեցութիւնը զօրացնելու պատրաստի զէնք դարձնեն կրօնաւորներին. և այս յաջողել է նրանց ի վնաս տեղական իշխանութիւններին, լինեն այդ իշխանութիւնները հոգևորական թէ աշխարհական. այս հանգամանքին պէտք է վերագրել վերջին ժամանակներս սպանական ժողովրդի զայրոյթը և ֆրանսական կառավարութեան գործ դրած միջոցները վանական հաստատութիւնների և կրօնաւորների դէմ։

Այժմ յայտնի է, որ կաթոլիկ եկեղեցին ամուրիութիւնը պարտաւորական է դարձրել բոլոր հոգևորականների համար, առանց բացառութեան։ Այնտեղ թէ աշխարհիկ հոգևորականները, որպիսի են ծխատէր քահանաները, և թէ կրօնաւորներն ու վանականները ամուրի են. ամուրիութիւնը ցելիբատ, ցելիբատութիւն անունով ամբողջ դարերի ընթացքում խորհրդակցութիւնների առարկայ լինելով Տրինդենդեան ժողովում վերջնական դրական ելք ունեցաւ։ Արևելեան եկեղեցիներից հատուածները, օրինակ հայ կաթոլիկները, կաթոլիկ եկեղեցուն միանալով հանդերձ՝ դարերի ընթացքում կառավարւում էին իրանց մայր եկեղեցու կարգով ու կանոններով և ծխատէր քահանայքն էլ ամուսնացած էին. ԺԹ. դարի վերջին քառորդին այդ հատուածներն էլ հարկադրուած եղան իրանց մի քանի ազգային եկեղեցական կարգերի փոփոխուելը տեսնել յօգուտ լատին կաթոլիկութեան. ամուսնացած հին քահանաները մնալով իրանց պաշտօնի մէջ՝ նորերի վերաբերութեամբ պարտաւորական դարձաւ ամուրի լինել և ամուրի ձեռնադրուել։

1870 թուի Վատիկանի ժողովի որոշումներից ու կանոններից անբաւական կաթոլիկներից շատերը, պահելով կաթոլիկ կոչումն, բաժանուեցին լատին հռոմէական եկեղեցուց,

նրա սահմանած նոր վարդապետութեան պատճառով անուանելով նրան նոր կաթոլիկական կամ հերետիկոս եկեղեցի իսկ իրանց՝ հին կաթոլիկ։ Այս «հին կաթոլիկները» պարբերաբար ժողովներ կամ սինոդներ են անում եւրոպայի զանազան քաղաքներում. նրանք հինգերորդ ժողովում կամ Սինոդում 1878 թուին 75 ձայնով 22 դէմ որոշեցին փոխել հոգեւորականների ամուրիութեան վերաբերեալ օրէնքը [1]), բայց որոշումն անգործադրելի մնաց, որովհետեւ մտքերը այդ բանին դեռ պատրաստուած չէին և շատերը չէին կարողանում հաշտ աչքով նայել մի արմատացած սովորութեան այդպէս շտապ փոփոխութեան վերայ։

Կաթոլիկական եկեղեցուց դարերով առաջ անջատուած այնքմեծ մասը, որ յայտնի է «Բողոքական» անուամբ, ամուրիութեան կամ ցելիբատի խնդիրը շատ վաղուց, համարեա իւր սկզբնաւորութեան օրից, վճռել է բացասաբար. այնտեղ հոգեւորականութիւնը ամուսնացած է։ Բողոքական եկեղեցում, բացի Անգլիական եկեղեցուց, չկայ յերարխիայ, չկան վանքեր և կրօնաւորներ. չկան հոգեւոր դասակարգութիւններ։ Բողոքականութեան անթիւ հերձուածների պատճառը հոգեւոր յերարխիայի բացակայութիւնն ու հովիւների կամ պաստորների ուսուցանելու և քարոզելու մէջ որոշ ազատութիւնն է եղել։

---

1). Ист. Христ. Церк. հատ I. եր. 1248.

նմին և եռանդ՝ մաքառել չարիքի դէմ և վերացնել նրան։

Սկսած Գրիգոր Է-ից՝ պապերը ձգտումն են ունեցել սահմանափակելով իրաւատէր եպիսկոպոսների իշխանութիւնը՝ վանքերին որոշ ազատութիւն և անկախութիւն տալ, որպէս զի պապական աթոռի հետ անմիջական յարաբերութեան մէջ պահելով վանքերը՝ իրանց ազդեցութիւնը զօրացնելու պատրաստի զէնք դարձնեն կրօնաւորներին. և այս յաջողել է նրանց ի վնաս տեղական իշխանութիւններին, լինեն այդ իշխանութիւնները հոգևորական թէ աշխարհական. այս հանգամանքին պէտք է վերագրել վերջին ժամանակներս սպանական ժողովրդի զայրոյթը և ֆրանսական կառավարութեան գործ դրած միջոցները վանական հաստատութիւնների և կրօնաւորների դէմ։

Այժմ յայտնի է, որ կաթոլիկ եկեղեցին ամուրիութիւնը պարտաւորական է դարձրել բոլոր հոգևորականների համար, առանց բացառութեան։ Այնտեղ թէ աշխարհիկ հոգևորականները, որպիսի են ծխատէր քահանաները, և թէ կրօնաւորներն ու վանականները ամուրի են. ամուրիութիւնը ցելիբատ, ցելիբատութիւն անունով ամբողջ դարերի ընթացքում խորհրդակցութիւնների առարկայ լինելով Տրինդենդեան ժողովում վերջնական դրական եզք ունեցաւ։ Արևելեան եկեղեցիներից հատուածները, օրինակ հայ կաթոլիկները, կաթոլիկ եկեղեցուն միանալով հանդերձ՝ դարերի ընթացքում կառավարւում էին իրանց մայր եկեղեցու կարգով ու կանոններով և ծխատէր քահանայքն էլ ամուսնացած էին. ԺԹ. դարի վերջին քառորդին այդ հատուածներն էլ հարկադրուած եղան իրանց մի քանի ազգային եկեղեցական կարգերի փոփոխուելը տեսնել յօգուտ լատին կաթոլիկութեան. ամուսնացած հին քահանաները մնալով իրանց պաշտօնի մէջ՝ նորերի վերաբերութեամբ պարտաւորական դարձաւ ամուրի լինել և ամուրի ձեռնադրուել։

1870 թուի Վատիկանի ժողովի որոշումներից ու կանոններից անբաւական կաթոլիկներից շատերը, պահելով կաթոլիկ կոչումն, բաժանուեցին լատին հռոմէական եկեղեցուց,

նրա սահմանած նոր վարդապետութեան պատճառով անուանելով նրան նոր կաթոլիկական կամ հերետիկոս եկեղեցի իսկ իրանց՝ հին կաթոլիկ։ Այս «հին կաթոլիկները» պարբերաբար ժողովներ կամ սինոդներ են անում եւրոպայի զանազան քաղաքներում. նրանք հինգերորդ ժողովում կամ Սինոդում 1878 թուին 75 ձայնով 22 դէմ որոշեցին փոխել հոգեւորականների ամուրիութեան վերաբերեալ օրէնքը [1]), բայց որոշումն անգործադրելի մնաց, որովհետեւ մտքերը այդ բանին դեռ պատրաստուած չէին և շատերը չէին կարողանում հաշտ աչքով նայել մի արմատացած սովորութեան այդպէս շտապ փոփոխութեան վերայ։

Կաթոլիկական եկեղեցուց դարերով առաջ անջատուած այնքան մեծ մասը, որ յայտնի է «Բողոքական» անուամբ, ամուրիութեան կամ Ցելիբատի խնդիրը շատ վաղուց, համարեա իւր սկզբնաւորութեան օրից, վճռել է բացասաբար. այնտեղ հոգեւորականութիւնը ամուսնացած է։ Բողոքական եկեղեցում, բացի Անգլիական եկեղեցուց, չըկայ յերարխիայ, չըկան վանքեր և կրօնաւորներ. չըկան հոգեւոր դասակարգութիւններ։ Բողոքականութեան անթիւ հերձուածների պատճառը հոգեւոր յերարխիայի բացակայութիւնն ու հովիւների կամ պաստորների ուսուցանելու և քարոզելու մէջ որոշ ազատութիւնն է եղել։

---

1), Ист. Христ. Церк. հատ I. եր. 1248.

ՄԱՍՆ Բ.

Գոչեմք առ ձեզ, սուրբ նահատակք,
Հողանութեայ մարմնով հրեշտակք,
Մարտիրոսք սուրբք և վկայք՝
Որք սրոյ մահուամբ կատարեցայք,
Յորդոր տօնիս ձեր յիշատակ,
Արեան սրբոյ հեղման վտակք
Առ Տէր լիցի սուրբ պատարագ
Պահել զմեզ միշտ անվտանգ։

Շարական եօթն խոտանարակաց.

Ա.

Անապատականները ու վանականությունը Հայաստանում: Ս. Ոսկեանի եւ Սուքիասեանի. եկեղեցական աւանդությունը նրանց մասին: Նրանց բնակութեան վայրերը— Ծաղկէոյ եւ Սուկաւ—Սուկաւէտ լեռները:—Ոսկեանց եւ Սուքիասանց ժամանակի մասին տարակոյսներ: Ոսկեանց եւ Սուքիասանց հաւանական ժամանակը: Ոսկեանց եւ Սուքիասանց վկայաբանութիւն աւանդողները: Ե՞րբ էին ապրում Ոսկեանց եւ Սուքիասանց ժամանակ յիշուած թագաւորները:

Մեր սուրբ եկեղեցու աւանդութեամբ խոտաճարակ ճգնաւորական կեանքը Հայաստանում սկսուած է Քրիստոսի հէնց առաջին դարում։ Ահա այդ աւանդութիւնը.

Հռովմայեցւոց տէրութիւնը Հայոց Սանատրուկ թագաւորի մօտ ուղարկում է հինգ հոգուց բաղկացած մի դեսպանութիւն՝ որի գլխաւորի անունն էր Խրիւսի կամ Խռուսի, որ հայերէն Ոսկի է նշանակում։ Ս. Թադէոս առաքեալը Կապադովկիայից Միջագետք գալիս՝ հանդիպում է այդ դեսպանութեանը. Խրիւսին և իւր ընկերները, լսելով ս. առաքեալի քարոզութիւնը, քրիստոնեայ են դառնում, թողնում են իրանց դեսպանութեան պաշտօնը, վաճառում են իրանց բոլոր գոյքերը և բաժանում աղքատներին, մկրտւում ու հետևում են ս. առաքեալին և իրանք էլ սկսում քարոզել քրիստոնէական հաւատը. Ոս-

կին կամ Խրիւսին էլ քահանայ է ձեռնադրում ս. առաքեալից։ Այս դէպքը պատահեց 46 թուին։ Այսպէս է համառօտում Ոսկեանց մասին աւանդութիւնը Հ. Մէք. Զամչեանը [1]) աղբիւր ունենալով «ճառ ընտ». օգոստ. 27. սեպտմբ. 19. Յովհ. կաթ.»։ Հ. Մկրտիչ Աւգերեանը գրում է. [2]) «Այս երանելիքս էին անձինք աղնուականք և արքունի պաշտօնեայք ի կայսերական պալատան. ազգաւ հռոմք կամ հոռոմք, այսինքն է հռովմայեցիք, առաքեալք յինքնակալէն Հռովմայ ի հայս առ Սանատրուկ արքայ, ոգիք հինգ, որոց գլխաւորի անունն էր Խռիւսի կամ Քռիւսի»։ Այնուհետև վկայաբանօրէն պատմում է դեսպանութեան հանդիպումն Ս. Թադէոս առաքեալին Հայաստանի սահմանի մի լեռնադաշտում, առաքեալի հրաշքները, դեսպանութեան հաւատալն, մկրտուիլը, Խռուսու կամ Ոսկու քահանայ ձեռնադրուելը, նրա անունով էլ նրա ընկերների Ոսկեանք կոչուելը, ս. առաքեալի հետ քարոզութեամբ Հայաստանում շրջելը և ս. առաքեալի նահատակուելուց յետոյ մեկուսանալն ու առանձին բնակուիլը, «քանզի չինեալ իւրաքանչիւր խրճիթս՝ կրօնաւորեցան ի լերինս ուրեք ծմակային, յակունս Եփրատայ, ի խառնուրդս ձորոց, որք միանան ի լեառն Ծաղկէոյ, ի գաւառն, որ կոչեցաւ Ծաղկոտն. վասն գոլոյ լերանց և դաշտաց ծաղկաւէտ և զուարճալի վայելչութեամբ զարդարեալ» (եր. 124)։ Ոսկեանք իրանց առանձնանալու 43 տարին, Արտաշէսի թագաւորութեան ժամանակ գնացին արքունիք, քարոզեցին արքունիքում. Սաթենիկ թագուհու ալան ազգականները, թուով 18 կամ 19 հոգի, Ոսկեանց հետևելով՝ հաւատացին և մկրտուեցին Եփրատ գետի ակունքում. մկրտութեան ժամանակ նրանց գլխաւորի անունը Սուքիաս փոխուեց, ուստի և մնացածներն էլ նրա անունով Սուքիասանք կոչուեցին։ Ս. Ոսկեանք Փրկչի 107 թուին նահատակուե-

---

1), Պատմ. Հայոց տպ. Վենետ. 1784. հատ. Ա. եր. 296։

2), Լիակատար Վարք և Վկայաբանութիւն Սրբոց. հատ. Բ. 1811 թ. Վենետ. եր. 121—130։

ցին Արտաշէսի որդիներից, իբրև նրանց մօր ազգականների մոլորեցուցիչ։

Հ. Աւգերեանը Ս. Ոսկեանց վկայաբանութեանը կցած ծանօթութիւնների մէջ յայտնում է [1]) ա. որ միայն Ոսկին էր քահանայ ձեռնադրուած, իսկ նրա ընկերները սոսկ կրօնաւորներ էին. բ. Փռիւսին կամ Ոսկին, յունաց պատմիչներից առնելով՝ կոչուել է «այր յազգէ գռիկ, այսինքն կռէգոս, որ է Հռոմ»։ գ. որ Ս. Ոսկեանք ճգնում էին Եփրատի ծմակային ակունքում Ծաղկոտն գաւառում, իսկ Սուքիասանը մի առ ժամանակ Ոսկեանց ճգնարանում բնակուելուց յետոյ գնացին Ջրաբաշխ լեռը, որ Սուկաւէտ է կոչւում։ Ուրեմն ըստ Աւգերեանի՝ Ծաղկոտն գաւառի Ծաղկէոյ լեռան, որ այժմ Ալա-դաղ է կոչւում, ջոկ սար է. Սուկաւէտը կամ այժմեան Քեօսադաղը ջոկ։

Յովհաննէս կաթուղիկոսը [2]) Ոսկեանց մասին այնքան գիտէ, որ նրանք ս. Թադէոս առաքեալի աշակերտներից էին, բնակում էին Եփրատ գետի ակունքում և, «աշակերտեալ մկրտէին զարս ոմանս յալանաց ի հարազատութենէ Սաթենկայ տիկնոջ, որ էր կին Արտաշիսի»։ Սաթենկայ որդիքն էլ զայրացած՝ սրով սպանում են Ոսկուն նրա սուրբ ընկերներով։ Յովհաննէս կաթուղիկոսը չի յիշում, որ Ոսկեանք հոռոմ դեսպաններ են, Ոսկին Խռիւսու հայ թարգմանութիւն է ևլն։

Սոփերք հայկականքը [3]) գիտէ, որ Ոսկեանց գլխաւորի անունը Խռիւսի էր, «այր յազգէ գռիկ». Սոփերքի հրատարակիչը մի այլ ձեռագրի մէջ գռիկը գռեհիկ է կարդացել, սակայն Հ. Աւգերեանի ծանօթութեան համեմատ եթէ գռիկը կռէգոս հասկանանք, պէտք է գռիկ կամ լաւ ևս գռեկ սրբագրենք։ Սոփերքը չէ յիշում Ոսկեանց դեսպանութեամբ Հայաստան գալը. միւս կէտերում համանման է Վարք Սրբոցին, կամ լաւ ևս, նրա աղբիւրներից

---

1) Վարք սրբոց հատ. Բ. եր. 128—130։

2) Յովհ. կթղկս. տպ. Յերուսաղէմ, 1843 թ. եր. 24.

3) Սոփերք Հայկականք ԺԹ. Վենետ. 1854. եր. 59—66։

մէկն է։ Ոսկեանց բնակավայրի մասին Սոփերքը ասում է. «Յետ մահուան առաքելոցն երթեալ կրօնաւորեցան ի լերինս ուրեմն ծմակայինս, յակունս Եփրատայ ի խառնուածս ձորոյ ուրեմն, որ սկիզբն առեալ ի Ջանեն, որ կոչի Ծաղկէ, յորոյ անուն և շէնքն կոչի մինչև ցայսօր Ոսկն Ծաղկոյ»։

Յայտաւուրքը [1]) չէ յիշում Ոսկեանց դեսպան լինելը. գիտէ, որ Ոսկեանց գլխաւորի անունն էր «Թռուսի, որ թարգմանի Ոսկի». այլ կէտերում շատ համառօտ աւանդում է այն՝ ինչ որ Վարք Սրբոցը, և Սոփերքը։

Եկեղեցին սրբադրում է Ոսկեանց և Սուքիասանց մասին աւանդութիւնը նոցա նուիրուած շարականների մէջ, առաջիններին անուանելով Ս. Թադէոսի և երկրորդներին՝ Ս. Ոսկեանց աշակերտ։

Յայտաւուրքի, Վարք Սրբոցի, Սոփերքի և Յովհաննէս կաթուղիկոսի համեմատ Ոսկեանց նահատակել են Արտաշէս թագաւորի որդիքը, համարելով նրանց մոլորեցուցիչ իրանց մօր հարազատ Սուքիասեանների։

Մեր պատմիչների մէջ, բացի Ժ. դարի պատմիչ Յովհաննէս կաթուղիկոսից, Ոսկեանց մասին անորոշ յիշատակութիւն գտնում ենք միայն Դ. դարում։ Փաւստոս Բիւզանդն ասում է [2])... ուր (յակունս Եփրատայ) յառաջու կայեանքն էին Մեծին Գրիգորի առաջնոյ, որում տեղեացն Ոսկիք կոչեն»։ Մեր միւս պատմիչները Ե. Ժ. դար Ոսկեանց մասին ոչինչ չեն գրում։ Ոսկեանց վկայաբանութեան սկզբնական աղբիւրը ինչպէս գրում է Հ. Մ, Ա-գերեանը [3]), (Վենետիկի մատենադարանի) Բ, ճառընտրի ՁԽԸ. երեսի յառաջաբանն է, ուր ասուած է թէ, յունաց կողմերում Վաղենտիոս կայսրի ժամանակ, եղել է մի ընթերցասէր մարդ Տատիանոս անունով, որ յունաց մատ-

---

1) Սեպտ. ԺԹ. և Հոռի Ժ.

2) Փաւստոս Բիւզանդ Վենետ. 1889. դպր. Ե. (գ.) գլ. ԺԶ։

3) Վարք Սրբոց Բ. հատ. 2-րդ ծանօթ. Վկայաբանութեան Ս. Ոսկեանց, եր. 128։

եաններից շատ բան է պատմել, որի գրքերը անթիւ շատաբան զրոյցներով մեր մէջ գտնւում են, որը շատ անգամ է կարդացել, գտել է այնտեղ Ոսկեանց պատմութիւնը։

Հ. Մ. Աւգերեանը ասում է, որ Տատիանոսի գրածները, բացի նրա վիճաբանութիւններից ընդդէմ հեթանոսաց, չը կան ոչ հայերէն ոչ յունարէն և ոչ լատիներէն։ Ուրեմն Ոսկեանց վկայաբանութեան իսկական աղբիւրը չը կայ։

Ուրեմն ամենահին յիշատակութիւնը Ոսկեանց մասին, ինչպէս ասացինք, տալիս է Դ. դարի վերջին քառորդին ապրող Փաւստոս Բիւզանդը, և այն՝ ոչ որպէս մարդկանց անուն, այլ տեղի, ըստ այսմ. «Որում տեղեանց ոսկիք կոչեն»։ Փաւստոսը չի յիշում Ոսկեանց դեսպան լինելն ու Ս. Թադէոս առաքեալից մկրտուելը։ Ուրեմն Դ. դարում Ոսկեանց մասին այս աւանդութիւնը դեռ չէր կազմուել, այդ ժամանակ կար մի վայր, «ուր յառաջու կայեանքն էին Մեծին Գրիգորի առաջնոյ. որում տեղեացն Ոսկիք կոչեն»։ Փաւստոս, որ ուրիշ դէպքերում շատ մանրապատում է, եթէ ձեռքի տակ ունենար Ոսկեանց մասին աւանդութիւնը, անշուշտ գլուխներ կը նուիրէր Ոսկեանց։

Մեր այս տեսութեան Ա. մասն Դ. գլխում տեսանք, որ Միջագետքում Դ. դարում զարգացած էր անապատականների մի կարգ, որ խստակեցութեան ծայրայեղ աստիճաններում անապատների խորին առանձնութեան մէջ անասունների պէս խոտ էր ճարակում և այդ կարգի անապատականները ամառ ձմեռ մերկ էին բոլորովին։ Միջագետքի այդ խոտաճարակները կոչւում էին Ոսկի [1]), մեր ազգային պատմութիւնից [2]) գիտենք, որ Ս. Գրիգոր Լուսաւորիչը Դ. դարի սկզբում Կեսարիայում ձեռնադրութիւն ստանալուց յետոյ, Հայաստան վերադառնալիս, Փոքր Ասիայից և յատկապէս Սեբաստիայից հետը բազմաթիւ յոյն և ասորի կրօնաւորներ բերեց, որոնց գլխաւորներն

---

1) Ист. Христ. церк. հատ. I. եր. 319.

2) Հ. Մ. Զամչ. պատմ. Հայոց հատ. Ա. գիրք Բ. գլ. ԼԶ.

կոչում էին Անտոն և Կրոնիդէս։ Մեր եկեղեցական աւանդութիւնը[1]), Անտոնին ու Կրոնիդէսին տօնում է եկեղեցում տօնող Եօթն Խոտաճարակների շարքում. հաւանական է, որ Միջագետքից եկած խոտաճարակ կրօնաւորները հետները բերին իրանց, արդէն յայտնի, Ոսկի կոչումն։

Եփրատի ակունքը, որ ըստ Փաւստոսի «յառաջու կայեանքն էին մեծին Գրիգորի առաջնոյ», խոտաճարակների առաջին ճգնավայրն էր, և այնտեղ բնակուող խոտաճարակների կամ Ոսկիների անունով Ոսկիք էր կոչում. Ս. Լուսաւորիչը յաճախ անապատ էր գնում առանձնութեան մէջ, աշխարհի հոգսերից հեռու՝ Աստուծուն նուիրելու. այս հանգամանքը այսպէս է աւանդում Հ. Միք. Զամչեանը՝ «Դ. Յետ պայծառացուցանելոյ Սրբոյն Գրիգորի զհամօրէն Հայաստանեայս աստուածպաշտութեան կարգօք, այնուհետև ընդ ժամանակս ժամանակս մեկուսանայր յամբոխէ մարդկան և գնացեալ ի լերինս և յանապատս՝ ճգնէր յաղօթս և ի պահս մերթ ընկերօք ոմամբք, զորս առնոյր ի մենաստանաց և մերթ լոկ առանձին[2])»։ Իւր վերջին օրերը խորին անյայտութեան մէջ, Դարանաղեաց լեռների Մանիա այրում անցկացրեց և անյայտութեան մէջ էլ վախճանուեց[3])։ Ս. Լուսաւորչի առաջին մեկուսացումների ժամանակ նրա «յառաջու կայեանքն» էին Եփրատի ակունքը, «որում տեղեաց Ոսկիք կոչեն, Ծաղկոտն գաւառում. իսկ վերջնական մեկուսացման տեղն՝ Դարանաղիք լեռների Մանիա այրը։ Պատմութիւնից յայտնի է[4]) որ Ս. Տրդատ թագաւորն էլ ձգտում էր կրօնաւորական կեանքի. և այդ զարմանալի չէ. նրանք կարող էին նորահաւատներին յատուկ խստակրօնութեամբ ծայրայեղութեան մէջ ընկնել։

Անապատական և կրօնաւորական կեանքի զարգացման

---

1) Շարակ. Եօթն Խոտաճարակաց, (տես ի շարս յատուկ. մանկանց)։

2) Հ. Միք. Զամչ. պատմ. Հայոց. հատ. Ա. գիրք. Բ. գլ. ԼԷ. դ. եր. 398։

3) Խորենացի գիրք Բ. գլ. ԼԱ։

4) Խորեն. գիրք. Բ. գլ. ՂԲ։

պատմութեան մէջ տեսանք, որ անապատականութիւնը քրիստոնէական եկեղեցում զարգացաւ երրորդ դարում. Դ. դարի սկզբում արդէն առաջ են գալիս վանական կրօնաւորներ և խոտաճարակներ։ Եթէ Ոսկէք խոտաճարակ էին, ուրեմն պէտք է Դ. դարում, առ առաւելն Գ. դարի վերջին քառորդին ապրէին։ Բացի այս, Ոսկեանց վկայաբանութեան մէջ յիշած թագաւորների անունները պատմութեամբ չը վերստուգուելով ժամանակագրական անհեթեթութիւն են առաջացնում, որով հարկ է լինում նրանց կեանքը մօտ 250 տարի երկարացնել, կամ թագաւորների անունները սրբագրել։

Մենք կարծում ենք, որ ժամանակի ընթացքում, մինչև աւանդութեան առաջ գալն ու վկայաբանութեան կազմուելը պատմական իրողութիւնը անփոփոխ մնալով, ժամանակն ու մարդկանց անունները մոռացուել ու շփոթուել են. պատմական իրողութիւնը աւանդութեան կարգն է անցել. և սերնդից սերունդ անցնելով կազմուել է Ոսկեանց և Սուքիասանց մասին զրոյցը։—Միջագետքից եկած Ոսկի խոտաճարակները դարձել են Հռոմի դեսպան Խրիւսի, Ս. Լուսաւորչի տեղ՝ դրուել է Ս. Թադէոս առաքեալի անունը. իսկ ժամանակը Դ. դարից տեղափոխուել է Ս. դար։ Այս աւանդութեան համեմատ էլ կազմուել է Ոսկեանց և Սուքիասանց վկայաբանութիւնը։ Իսկ ո՞վ է վկայաբանութեան հեղինակը։ – Ինչպէս տեսանք, ճառընտիրները ասում են յոյն Տատիանոսն է, որ ապրում էր Վաղենտիանոսի ժամանակ։ Երկու Վաղենտիանոսներ կան. մէկը թագաւորում էր 375—392 թիւը Դ. դարի վերջին. իսկ միւսը 423—455 թ. Ե. դարի Ա. կէսում. այս կայսրներից որի ժամանակ էլ որ ապրէր Տատիանոսը, Ս. Թադէոս առաքեալի ժամանակ պատահած դէպքերի ականատես չէ. եթէ երբէք գրել է նա Ոսկեանց վկայաբանութիւնը յունարէն, որ կասկածելի է, նա գրել է աւանդութիւնը և ժողովրդական զրոյցները աղբիւր ունենալով։ Ով և լինի Ոսկեանց վկայաբանութիւն կազմողը, նա այդ վկայաբանութիւնը կազմելիս նպատակ է ունեցել

Ոսկեանց անպատճառ դարձնել առաքեալների ժամանակակից, տալ նրանց ազնուական ծագումն՝ անուանելով դեսպան, և նրանց աւելի կարևորութիւն տալու համար անուանել յոյն. և այս այն պատճառով՝ որ Հայաստանի կրօնաւորութիւնը սկզբնաւորուած համարի առաքեալների ժամանակից ու նրան խորհրդաւորութիւն տայ սկզբնապատճառների ազնուական և յոյն ծագմամբ։ Խրիւսի-Ոսկի դեսպանութիւնից խոտաճարակ դարձած ու Ս. Թադէոս առաքեալի ձեռքով մկրտուած՝ քննելի է. խոտաճարակ Ոսկեանք Դ. դարում Ս. Լուսաւորչի օրով Հայաստան եկած Մելիտոնքից՝ պատմական իրողութիւն է, համաձայն պատմական անցքերին թէ ընդհանուր քրիստոնէական եկեղեցու պատմութեամբ և թէ մեր ազգային։

Եկեղեցական աւանդութեան համեմատ [1]), Ս. Թադէոս առաքեալի աշակերտ Ոսկին իւր ընկերների հետ բնակւում էր Ծաղկէոյ սարում, Եփրատի ակունքում «առանձին կեանս ստացեալ»։ Նրանք Արտաշէսի թագաւորութեան ժամանակ եկան արքունիք և սկսեցին քարոզել Քրիստոսի վարդապետութիւնը Արտաշէսին ու նրա Սաթենիկ տիկնոջը, որ Ալանաց ազգից էր։ Պատուաւոր մարդկանցից ոմանք, որոնք թագուհու հետ Ալանաց երկրից եկել էին, հաւատացին Քրիստոսին ու մկրտուեցին, և հեռանալով արքունիքից, Բագրևանդ գիւղի յանդիման, Նպատ սարի դէմ ու դէմը, Սուկաւ սարում ապրեցին «խոտաճարակ իբրև զվայրենի քօշս ամս բազումս։ Եւ եղև մորթ նոցա իբրև զմամուռ քարի ի խստութենէ օդոցն, աճեալ հերքն ծածկէին զամենայն մարմինս նոցա»։ Սրանց գլխաւորի անունն էր Բարաքաթրայ, որ մկրտութեան ժամանակ Սուքիաս կամ Սիւքիաս փոխուեց, և այդ անունով էլ նրանք կոչուեցին Սուքիասանք։ (Նրանցից մէկի անունն էլ Մեմաս էր, որի անունով է թերևս Երասխաձորի Վարդի

---

1) Յայսմաւուրք Օգոստոսի ԻԷ. և նաւասարդի ԺԷ։ Վկայաբանութիւն Սրբոց Սուքիասանցն, որք վկայեցին ի Բագրևանդ գաւառի. ի|Սուկաւէտ լերինն և են թուով երեք հարիւր վաթսուն և չորս։

հէր ուխտատեղուց դէպ հարաւ արևելք բարձրացող սարը Մամաս կոչւում։ Վարդի հէրի ուխտաւորները որպէս ուխտ բարձանում են այս սարի կատարը, որտեղից ընդարձակ հորիզոն է բացւում չորս կողմը և յատկապէս դէպի Բաղրևանդ)։

Ս. Սուքիասանք իրանց ճգնութեան 44-րդ տարին նահատակուեցին և նրանց նահատակութեան հանգամանքը այսպէս է պատմում Ցայսմաւուրքը, Ալանաց Գորգիանոս թագաւորը իւր զօրքերը վերատուգելիս՝ Սուքիասանց չը գտնելով իրանց պատուին յատկացուած Աթայի երկրորդական գահում՝ հարց ու փորձ արեց և իմանալով, որ Հայոց երկրումն են ու քրիստոնեայ են դարձել, իւր Բառլահայ զօրապետին ուղարկեց հրաւիրելու. եթէ գան՝ պատուով բերել, եթէ չը գան՝ սպանել։ Սուքիասանք հաստատ մնալով իրանց քրիստոնէական հաւատին, նահատակուեցին նաւասարդի ԺԷ.-ին. «Եւ բղխեաց աղբիւր ի տեղւոջն ի բժշկութիւն ամենայն ցաւոց և ախտից»։ Նրանց ընկերներից երկու կրտսերագոյնները նահատակութեան ժամանակ երկիւղից թաք կացան լեռան խորշերում, յետոյ եկան նահատակուածների մարմինները թաղելու, բայց չը գտան։ Իրանց թուլամտութեան պատճառով մարտիրոսական պսակից զրկուելուն համար դառն ապաշաւեցին և խստագոյն ճգնութեամբ կատարեցին իրանց կեանքը. նրանց մահից յետոյ նրանց մարմինները թաղեցին անդէորդները։

Ցայսմաւուրքը չէ յիշում, որ Սուքիասի անունով լեռը կոչուած լինի Սուկաւ, այլ ընդհակառակն ասում է, որ Սուքիասը իւր ընկերներով բնակուեց Սուկաւ սարում, որպէս թէ այդ սարը մինչև Սուքիասանց այնտեղ բնակուելը արդէն Սուկաւ էր կոչւում։

Սուքերք Հայկականքը (ԺԹ.) գլխաւոր կէտերում երկրորդելով Ցայսմաւուրքի աւանդածը, աւելացնում է պատմական պարագաներ, վկայաբանական դարձուածներ, հարց ու պատասխաններ ու աղօթքներ. նա՝ ասում է, թէ Սուքիասանք «բնակեցան ի Սուկաւ լերին, որ յանուն գլխաւորին իւրեանց Սուքիաս՝ կոչեցաւ Սուկաւ... խոտա-

ճարակ լինելով իբրև զվայրենի ոչխարս ի տեսչութենէն Աստուծոյ, յամս Շապհոյ թագաւորի։ Եւ քանզի երկիրն Հայոց յետ ամաց աւերեալ լինէր, զի թագաւոր ոչ ունէին, քանզի սպանեալ էր զԱրտաւան որդի Վաղարշու և զԽոսրով թագաւորն Հայոց՝ թագաւորին Պարսից...

«Սոփերքը Սուքիասանց կեանքը Սուկաւ լեռան ճգնարանում այսպէս է նկարագրում. «Եւ կացեալ սուրբ վկայքն ի լերինն Սուկաւէտ, խոտաճարակք լեալք հրեշտակակրօն վարուք, և մարմինք նոցա էին իբրև զմամուռս քարի, և վարսք նոցա որպէս զքօշից քարշէին. և ոչինչ ունէին. այլ յուսոմն Աստուծոյ կային և օրհնէին զԱստուած»։ Սոփերքը Ս. Սուքիասանց նահատակութիւնը դնում է Շապուհի մահից յետոյ նրա յաջորդ Դատիանոսի օրով և ասում է, որ Ալանաց թագաւոր Գիգիանոսը ուղարկեց պարսիկ զօրքեր, որոնց զօրավարն էր Բառլահա և սա նահատակել տուեց Ս. Սուքիասանց։ Բառլահայի հարցմանը Սուքիասը պատասխանում է. «Նիզակակից էի Շապհոյ արքայի»։ Յայսմաւուրքում չը կայ ոչ Շապուհ և ոչ Դատիանոս. Յայսմաւուրքի Գորգիանոսը դարձել է Գիգիանոս. նահատակութեան համար Ալանաց թագաւորը ուղարկում է պարսիկ զօրք ու զօրապետ, չը կայ և հատուածս. «նիզակակից էի Շապհոյ արքայի»։ Մեմանն էլ Սոփերքում դարձել է Մեմնաս։

Շապուհ. Ա. թագաւորեց 31 տարի 241—272 թ. [1]) ուրեմն, ըստ Սոփերքի Ս. Սուքիասանց նահատակութիւնը 272 թուից յետոյ է տեղի ունեցել. Շապուհի յաջորդն էլ Որմիզդ էր և ոչ Դատիանոս։

Յովհաննէս կաթուղիկոսը (եր. 25) հաստատում է Սոփերքի ասածը գրելով. «Եւ վասնզի յետ ամաց բազմաց՝ սպանաւ թագաւորն Հայոց Խոսրով յԱնակայ, և անիշխանացաւ երկիրս Հայոց։ Ապա Բառլահայ ոմն եկեալ յԱլանաց դրանէ,... սուր ի վերայ եդեալ կոտորէր»։

Յովհաննէս կաթուղիկոսն է համառօտել Սոփերքի

---

1), Ասողիկ եր. 358—359, հրատ. Ս. Մալխասեանց Ս. Պ. բուրգ. 1885 թ. ծանօթ. 85. Նելդեկէի ցանկի համեմատ։

աւանդածը թէ Սուիերքն է ընդարձակել Յովհաննէս կաթուղիկոսի պատմութիւնը. այս բանը պէտք է ճշդել, որպէսզի պարզուի Սուքիասանց, նրանց հետ էլ Ոսկէանց վկայաբանութիւնը կազմուելու ժամանակը։

Բ.

Վրաց վարք սրբոցները Սուքիասանց մասին եւ պ. Ն. Մառի կարծիքը. Ոսկեանց եւ Սուքիասանց վկայաբանութեան կազմուելու ժամանակը. Յովհաննէս կաթուղիկոսը հեսեւող արդէն կազմուած վկայաբանութեան: Ոսկեանց եւ Սուքիասանց վկայաբանութիւն կազմողները: Ոսկեանց եւ Սուքիասանց ժամանակի մասին ենթադրութիւններ: Նախալուսաւորչեան նահատակներ— Արարատեան բիւր վկայք եւ Խորով Ա.-ի ժամանակ նահատակուած քրիստոնեայք, ս. Ոսկեանց եւ Սուքիասանց առնչութիւնը սրանց հետ:

1898 *թուին, ամառը ուսուցչապետ պ. Ն. Մառը մի ճանապարհորդութիւն է կատարում դէպի Աթոնի վանքը և ուսումնասիրում այնտեղի ձեռագրերը։ Նոյն թուի դեկտեմբերի 17-ին ռուս հնագիտական ժողովում նա զեկուցանում է*[1]) *իւր ուսումնասիրութեան արդիւնքը, որի մէջ հայոց և վրաց գրականութեան մինչև առնչութեան մասին խօսելով՝ ի միջի այլոց գրում է, որ ինքն Աթոնում տեսել է ԺԵ. դարի մի մագաղաթեայ ձեռագիր վարք սրբոց, որի մէջ ամփոփուած են կէս տարուայ մէջ (դեկտեմբերի 27—յունիսի 27) տօնուող յիսունից աւելի սրբերի վարքեր։ Այդ սրբերի վարքերը տակաւ բացառութեամբ համարում է նա հայերէնից թարգմանուած։*

Պ. Ն. Մառը իւր ուսումնասիրութեան նիւթ է դարձնում 14 վկաների վարքերը, և հաստատում, որ նրանք

---

1) „Изъ поѣздки на Афонъ“.—Журналъ министерства народнаго просвѣщенія, часть CCCXXII. (1899 № 3. отд. 2. *արտատպութիւն*)։

«Հայաստանից և նրա սահմանակից երկրներից էին, այն է՝ Պարսկաստանից, Օսեթիայից (Ալանաց երկիր)։ Վարքերից տասնեմէկը բացառապէս վերաբերում են հայ վկաներին ու վկայուհիներին և կամ Հայաստանում նահատակուածներին»։ Նա ասում է. սուրբ Սուքիասի և նրա ընկերների նահատակութիւնը (мученичество Сукіаса и подвижниковъ) իսկական թարգմանութիւնն է այն բնագրից, որ տպուած է Սոփերքի ԺԹ. հատորում (եր. 59–66)»։

Պէտք է նկատել, որ հայ բնագրում այդ վկայաբանութեան վերնագիրն է. «բան և ասութիւն ճշմարիտ սրբոցն Ոսկեանց քահանայից». մինչդեռ վրացերէն թարգմանութեան վերնագիրը, ըստ Մառի, է. «վկայաբանութիւն սրբոցն Սուքիասայ և ընկերացն»։ Եւ, ինչ որ հայ բնագրի մէջ կոչուած է «վկայաբանութիւն սրբոց Սուքիասանց», ըստ Մառի վրացերէն թարգմանութեան մէջ կոչուած է «նահատակութիւն ճգնաւորացն Սուկաւէտայ» (Мученичество Сукаветскихъ подвижниковъ).

Ըստ Մառի՝ հայ բնագիրը լրիւ չէ։ Համեմատութեամբ վրացերէն թարգմանութեան՝ այժմեան հայ հրատարակութիւնը (Սոփերք ԺԹ), սկզբից չորս երեսաչափ պակաս է։ Պակաս է ճառի և այն մասը, որ վերաբերում է սրբերի մասունքների և Կոստանդին կայսրի երազի մասին զրոյցներին։ Վրացերէն թարգմանութիւնը լրացնում է հայ բնագրի պակասորդը. թէ և յայտնի է, որ Կոստանդնի երազը ամբողջապէս հայերէն կայ։

Պ. Մառը ի նկատ առնելով այն հանգամանքը, որ Ը. դարում ասասիկ բորբոքուած էր հայոց և վրաց մէջ կրօնական ատելութիւնը, կարծում է, որ վրացիք այդ դարում և, կաւելացնենք մենք, յետոյ բնականաբար կը խուսափէին հայերէնից, այն էլ զուտ հայ նահատակների վարքերը թարգմանելուց։ Պ. Մառը հաւանական է համարում, որ Սուկաւէտի ճգնաւորների վկայաբանութեան թարգմանութիւնը կատարուած լինի, ամենաուշը, Է. դարի վերջերին, կամ Ը.-ի սկզբին։ Հետևաբար, հայերէն բնագրի կազմուելը եթէ ոչ աւելի վաղ, զոնէ Է. դարի կէսից առաջ է գնում։

Այս եղրակացութեանը գալուց յետոյ պ. Մառը անկասկածելի է համարում նախ՝ վրաց կրօնական և հոգևոր գրքերի մէջ հայ գրականութեան ազդեցութիւնը. երկրորդ, անկախ վերոյիշեալից, յայտնում է, որ վկայաբանութիւն կազմողը «Սաթենիկ»[անունը առել է Մովսէս Խորենացուց։—Արդ, եթէ վկայաբանութիւն կազմողը ապրում էր, ամենաուշը, Է. դարում, ուրեմն Մովսէս Խորենացին պէտք է որ աւելի վաղ ապրած լինի։ Այսպիսով հերքւում և ջրւում է բանասէրներից ոմանց այն յամառ կարծիքը, թէ Խորենացին Ը. դարի մատենագիր է։

Մեզ համար կարևորութիւն ունին—առաջին, պ. Մառի եղրակացութեան այն մասը, որ վերաբերում է Սուքիասանց վկայաբանութիւնը կազմելու ժամանակին և երկրորդ՝ այն առնչութիւնը, որ ունի Յովհաննէս կաթուղիկոսի աւանդածը՝ այդ ժամանակի հետ։

Պ. Մառի հեղինակաւոր կարծիքով Սուքիասանց կամ Սուկաւէտի վկաների վկայաբանութիւնը կազմուած է Մովսէս Խորենացուց յետոյ՝ մինչև Է. դարի կէսը, ուրեմն Ժ. դարի պատմիչ Յովհաննէս կաթուղիկոսը ընդօրինակող կամ հետևող է. և նրա պատմութեան հիմքն ու աղբիւրը վկայաբանութիւնն է, որ կազմուել է ուրեմն Ե. և Է. դարերի միջև։

Ո՞վ է կազմել վկայաբանութիւնը։—Ճառընտիրների ասելով՝ ս. Սուքիասանց վկայաբանութիւնը գրել է ոմն Անտոն անապատական «ի Հռովմայ»։ Հ. Աւգերեանը կարծում է, որ այս Անտոնը մէկն է այն հռովմայեցիներից՝ որոնք Կոստանդին կայսրի հետ Հայաստան եկան, ս. Ոսկեանց մասունքներից նշխարներ տանելու և կամ՝ Կրօնիդէսի ընկեր Անտոնն է, որին ս. Լուսաւորիչը, ուրիշ կրօնաւորների հետ բերեց, երբ ձեռնադրուած վերադառնում էր Կեսարիայից։ Այս Անտոններից ո՞րն էլ կազմած լինի վկայաբանութիւնը, Դ. դարից առաջ չէ։ Մենք տեսանք, որ Ոսկեանց վկայաբանութիւնն Վենետիկի մատենադարանի Բ. Ճառընտրի ՋԽԸ. երեսի յառաջաբանութեան համեմատ գրել է յոյն Տատիանոսը, որ ապրում

էր Վաղենտին կայսրի ժամանակ. ուրեմն, դարձեալ Դ. կամ ստոյգ ևս Ե. դարում։ Ցամենայն դէպս Ոսկեանց և Սուքիասանց վկայաբանութեան հեղինակ կարծուածները նրանց ժամանակակից չեն. այլ, վկայաբանութիւնները կազմելիս աղբիւր են ունեցել զրոյցներն ու անգիր աւանդութիւնները, որոնց մէջ, անկասկած, յեղաշրջուում են պատմական դէպքերը, անուններն ու ժամանակը, մնում է անցքի մասին գաղափարը։

Հ. Միքայէլ Չամչեանը [1]) անկարելի է համարում, որ Սանատրուկի որդի Արտաշէսի ժամանակից, այսինքն Ա. դարի վերջին քառորդից սկսած, երբ Սուքիասանք որպէս դրանիկ՝ արդէն չափահաս, մօտ 40 տարեկան մարդիկ եկան Հայաստան, կարողանային ապրել մինչև Տրդատի Հայր Մեծն Խոսրովի մահը. վասն զի այդ միջոցը 170 տարու չափ ժամանակ է ընդգրկում։ Ուստի կարծում է, որ կամ Արտաշէսը Խոսրով էլ էր կոչուում, որով Սուքիասանց նահատակութիւնը Բ. դարի առաջին կիսին կը դայ, և կամ Խոսրով Մեծի մահից յետոյ նահատակուող Սուքիասանք ուրիշ մարդիկ էին և ոչ Ոսկեանց աշակերտները։ Նա չէ էլ ընդունում. որ Սուքիասանք Խոսրով Ա.-ի և Շապուհ Ա.-ի ժամանակ էին, ուստի և ասում է. «զի անստոյգ երեւին ըստ ժամանակին, որպէս և ըստ անուանց...»,

Հ. Մ. Աւգերեանը [2]) Սուքիասանց մասին ասում է այն, ինչ որ յայտնի է վերև յիշուած աղբիւրներից։ Նրա կարծիքով Սուքիասանք ապրում էին Ա. դարի երկրորդ կիսին. և, ընդունելով, որ Սուքիասանք չէին կարող կենդանի մնալ մինչև Շապուհ Ա.-ի մահը (272 թ.), սրբագրում է վկայութեան մէջ յիշուած թագաւորների անունները. փոփոխում ու աւելացնում է պատմական անուններ ու դէպքեր. և այս իւր վարմունքի պատճառները բացատրում է [3])։ Ըստ Աւգերեանի՝ Շապուհը Ալանաց թա-

1) Պատմ. Հայոց. հատ. Ա. ծանօթ. եր. 598—599։

2) Վարք Սրբոց. հատ. Բ. եր. 90—112։ Վկայաբանութիւն Սրբոց Սուքիասանց։

3) Նոյն ծանօթ, եր. 113—116։

գաւոր էր։ Նրա յաջորդ Գիդիանոսի կամ Դատիանոսի հրամանով պարսիկ զօրքեր եկան Հայաստան և նահատակեցին Սուքիասանց. նրանց մարմինները ձգելով մի խորտիկտ վհի մէջ. Սուկաւէտ կամ Ջրաբաշխ լեռան լանջերում։ Ս. Գրիգոր Լուսաւորիչը Ս. Հոգու ազդմամբ եկաւ գտաւ սրբերի մարմինները, թաղեց. նրանց գերեզմանների վերայ վկայարաններ շինեց, կրօնաւորներ կարգեց և նրանց վրայ էլ վերակացու կամ վանահայր նշանակեց իւր աշակերտներից մէկին, որի անունը Աբաս էր։

Հ. Աւդերեանը ընդարձակելով կրկնում է Ցայսմաւուրքի [1]) խօսքերը, թէ «զդիսեաց ազբիւր ի տեղւոջն ի բժշկութիւն ամենայն ցաւոց և ախտից»։ Ցիշում է նա Կոստանդնի մասին զրոյցը, թէ եկաւ նա Հայաստան, գտաւ ս. Սուքիասանց մարմինները և հետը տարաւ սրբերի նշխարներից մասն ու նրանց արիւնով զանգուած հողը։ Ահա այս զրոյցն է, որ կայ պ. Մառի յիշած Սուկաւէտի վկաների վրացերէն թարգմանութեան մէջ։

Եթէ ըստ Զամչեանի և Աւդերեանի ընդունենք էլ, որ ս. Սուքիասանք նահատակուեցին 130—140 թ. անհնարին է, որ նրանց մարմինները անաղարտ մնային մինչև ս. Գրիգոր Լուսաւորիչը։ Սուքիասանց նահատակութիւնից մինչև թաղումն՝ այսպէս մօտ 200 տարի է դալիս։

Քննասէրը [2]) հետևելով Հ. Զամչեանին ու Աւդերեանին, տարակուսում է ս. Ոսկեանց և Սուքիասանց ժամանակի մասին, անհնար համարելով տալ նրանց կեանք, որ տևէր Ա. դարից մինչև Գ. դարի վերջին քառորդը։ Նա, ի նկատի ունենալով ժողովրդի աւանդութիւնը, որ իրան լաւ յայտնի էր որպէս Կարնոյ երբեմն առաջնորդի, որի թեմի մէջ էին Սուկաւէտն ու Ջրաբաշխ լեռները, սրբագործուած Ոսկեանց և Սուքիասանց յիշատակներով, Ոսկեանց և Սուքիասանց համարում է նա պատմական

---

1) Ցայսմ. Սեպտ. ԺԲ. և Հոռի Ժ։

2) Լումայ 1904. Սեպտ,—Հոկտ. եր. 78—96։ «Առաքեալներէն մինչեւ Լուսաւորիչ». յօդ. 36—37։

անձնաւորութիւններ ու նրանց նահատակութիւնն էլ ստոյգ. բայց ոչ աւանդութեան սահմանած ժամանակում։

Յովհաննէս կաթուղիկոսը հետևելով վկայաբանութիւններին՝ գրում է. «իսկ ազգականք Սաթենկայ, որք ի Քրիստոս մկրտեցան. ընդոստացեալք ինն վասն մահուան սրբոցն (Ոսկեանց), հատուածեալք գնացին ի բաց երթեալ, զօղեալ, թագուցեալ ի Զրաբաշխ լերին, խոտաբուտ ճարակօք շատացեալ։ Եւ ըստ մերկութեան անձանց նոցա ի ցօղոյ երկնից դէպս արձակել մարմնոյն, որ և ի պատահմանէ անտի քօշք անուանեցան» (եր. 24—25)։ Այս նկարագրութիւնը կրկին արժէք ունի ի դէմս Յովհաննէս կաթուղիկոսի, մի՝ որպէս պատմագրի. միւս կս, որ պատկերացնում է խոտաճարակների իսկական տիպար Մարիամ Եգիպտացու վարքը նրա ճգնութեան ժամանակ, որ Դ. դարից շատ յետոյ էր։ Յովհաննէս կաթուղիկոսն էլ Սուքիասանց նահատակութիւնը դնում է Խոսրով Մեծի մահից յետոյ, երբ Հայաստանը անտերուշ էր մնացել։

Ըստ Ռոբերտսոնի[1]) թէև քրիստոնեաների, առ ահի մեկուսացած, անմարդաբնակ տեղերում կեանք վարելը սկսում է Բ. դարից, և այս մեկուսացումն Հայաստանի քրիստոնեաների մէջ էլ կարող էր հետևողներ ունենալ, Հայաստանի քրիստոնեաներն էլ հալածանքից զերծ մնալու համար Պաւղոս Թեբայիդացու պէս կարող էին ապաստան որոնել անապատներում, և այսպէս կամայ ակամայ ճգնաւորական կամ անապատական մեկուսացած կեանք վարել, բայց դրանք անշուշտ այն Ոսկեանք և Սուքիասանք չէին, որոնց կեանքի նկարագիրը, որպէս խոտաճարակների, տալիս են եկեղեցական աւանդութիւնն ու Յովհաննէս կաթուղիկոսը։ Պատմութիւնը ճշտելով ասում է,[2]) որ խոտաճարակները Ոսկի անունով Դ. դարում երևան եկան Միջագետքում, որ սահմանակից է Հայաստանին։ Այս տեսակ խոտաճարակներ, որպէս առանձին կրօ-

1) Ռոբերտսոն Ист. Христ. церк. հատ. I. եր. 163։
2). Նոյն եր. 313։

նական համայնք, Հայաստանում Ա. Բ. դարերում չէին կարող գոյութիւն ունենալ։

Թողնելով ժամանակի խնդիրը, Ծաղկէոյ սարի ճգնաւորները, անկախ Միջագետքի Ոսկի—խոտաճարակներից՝ ուրիշ պատճառով էլ կարող էին ոսկի կոչուել։—Սուկաւէտ և Ծաղկէոյ լեռների մօտ է այժմ Զառափխանայ կոչուող վայրը՝ Բագրևանդի և Բասենի սահմանի վերայ. այդտեղից ժամանակին ոսկի են հանել, այժմ էլ, շատ ժամանակ չէ, որ լրագրներում հրատարակուեց, որ ցանկացողներ կան Զառափխանայի ոսկու հանքը շահագործել. թերևս հնումն այդ տեղերը «Ոսկիք» էին կոչում, և տեղի անունով էլ այնտեղ բնակող ճգնաւորները Ոսկի կոչուեցին։ Փաւստոսն ասում է, որ ս. Լուսաւորիչը այցելում էր իւր կարգած ճգնաւորներին, այնտեղ, «որում տեղեաց Ոսկիք կոչեն» [1])։

Հէնց քրիստոնէութեան Ա. դարում Հայաստանում սկսուեց քրիստոնէութիւնը. այդ հաստատում են մեր և օտարազգի պատմիչները։ Թողնելով ս. Սանդուխտ կուսի և ընկերների նահատակութիւնը, Հայաստանը ուրիշ նահատակներ էլ է ունեցել Բ. և Գ. դարերում։—Հ. Ալիշանը [2]) առնելով լատին Յայսմաւուրքից՝ համառօտում է Արարատեան բիւր վկաների վկայաբանութիւնը։ Այդ վկաները Ադրիանոս կայսրի զօրքերից էին թուով ինն հազար հոգի, որոնք 118 թուին ուղարկուած լինելով ապստամբ եփրատացիներին զսպելու՝ հրեշտակի ազդմամբ Յիսուսի Քրիստոսի անունով յաղթում են ապստամբներին և քրիստոնեայ դառնալով՝ հրաժարւում են զինուորութիւնից, մկրտւում և գալով Հայաստան, ապաստան են գտնում Արարատ լերան լանջերում. կայսրը կամենում է բռնի նրանց կռապաշտ և զինուոր դարձնել. զօրք է ուղարկում. բայց նրանք չը հրաժարուելով քրիստոնէութիւնից, յօժարակամ նահատակւում են. այս նահատակներին

---

1) Փաւստ. Բիւզ. դպր. Զ. գլ. ԺԶ.

2) Այրարատ. Վենետիկ 1890 թ. եր. 474—476։

միանում են կայսրի զօրքից մի հազար հոգի էլ, որով վկաների թիւը դառնում էր բիւր։ Այս աւանդութիւն հարուստ նիւթ է տալիս իտալացի նկարիչներին, և նրանց նկարներից մէկի պատճէնը տեսնում ենք Այրարատում։

Անշուշտ այս զինուոր վկաները, եթէ ոչ ամբողջովին, մեծ մասամբ հայ էին. այդ հայերը եփրատացոց աշխարհում քրիստոնեայ դառնալով՝ թողին զինուորութիւնը և յետ եկան իրանց երկիրը՝ Այրարատեան աշխարհը, Հայաստան։ Կայսրի զօրքերը վրայ հասան և կոտորեցին կամ նահատակեցին հայ զինուոր վկաներին։ Այս ահագին բազմութեան նահատակութիւնը անկարելի է, որ ազդեցութիւն չունենար ժողովրդի վերայ։ Դէպքը բերանից բերան, դարից դար աւանդաբար անցնելով՝ գունաւորուեց, յեղաշրջուեց. մոռացուեցին թագաւորների անունները, և նահատակների ով լինելը, անցքը միայն անմոռաց մնաց։ Արևմտեայք և լատինները նրանց համարեցին հռովմայեցի զինուոր և անուանեցին Այրարատեան վկայք. Հայք համարեցին նրանց հռովմայ դեսպան։ Նահատակները կը մնան Արևմտեայց համար Այրարատեան բիւր վկայք, նահատակուած Արարատ սրբազան լերան լանջերի ծերպերում, իսկ Հայոց համար՝ Ոսկեանք՝ Ծաղկէոյ սարում նահատակուած իրանց ատելի Արտաւազդ թագաւորի ու նրա եղբայրների ձեռքով։ Արևմտեայք կարող են նրանց յիշատակը տօնել որպէս Այրարատեան բիւր վկաների տօն, իսկ Հայք՝ Ոսկեանց։

Պէտք չէ մոռանալ՝ որ Այրարատեան բիւր վկայքը կայսրի զօրքեր էին, իսկ մեր Ոսկեանք կայսրի դեսպան՝ Խռիւսի անունով։ Թէ Արարատեան վկաները և թէ Ոսկեանք նահատակուում են նոյն ժամանակին և Բ. դարի առաջին քառորդին։ Արդեօք մեր Ոսկեանց վարքը գրողները «Ոսկի» անունը Խռիւսի յունական անուան թարգմանութիւն համարելիս՝ Յովհան Գրնեցու վարքը գրող[1]) Խռիւսիոն կամ Կրիսոս անուանների հետ չէն շփոթել և

1) Վարք Սրբոց հատ. Թ. եր. 268—273։

այդ անունը չեն յատկացրել Ոսկիներին, նշանակութեան նմանութիւն գտնելով հայ Ոսկի և յոյն Խռիւսի, Խռիւսիոն, Կրիսոս անունների մէջ։

Ազգային պատմութիւնը [1]) առնելով Կապադովկիայի Կեսարիա քաղաքի Փերմելիանոս եպիսկոպոսից՝ ասում է, որ Խոսրով Ա.-ը (216 թ.) բազմաթիւ քրիստոնեայք նահատակեց։ Այս նահատակները կարող էին ապագայում վկայաբանութիւն կազմողներից կոչուել Սուքիասանք. որովհետև նահատակութեան ժամանակի տարբերութիւնը մեծ չէ, միայն 56 տարի է։ Սուքիասանք էլ նահատակուած են համարում Խոսրով Ա.-ի և Շապուհի մահից (272 թ.) յետոյ։

Եթէ նախալուսաւորչեան նահատակների խմբերը չէ, որ ընդհանուր անունով կոչուել են Դ. դարում յայտնի Ոսկիների և Սուքիոսների անունով, ուրեմն դրանք անձուկ մտքով որպէս խոտաճարակ Ոսկեանք և ճգնաւոր Սուքիասանք, առանձին կրօնաւորական դասակարգեր գոյութիւն կարող էին ունենալ միայն Դ. դարում. ս. Լուսաւորչի օրով և յետոյ. որովհետև ինչպէս եկեղեցական աւանդութիւնը հաստատում է, ճգնաւորութիւնը Դ. դարում սկսուեց Եգիպտոսում և զարգանալով միայն Դ. դարում տարածուեց Պաղեստինում, Ասորիքում, Միջագետքում, Փոքր Ասիայում և Հայաստանում։ Եւ վերջապէս Սուքիոս, Հիւսիքոս անունները յայտնի են միայն Դ. դարում. Ոսկիք, որպէս խոտաճարակ՝ նոյնպէս Դ. դարի ընթացքում։

Պատմութիւնն ասում է, [2]) որ ս. Լուսաւորիչը ձեռնադրուած երբ Կեսարիայից վերադառնում էր, Սեբաստիայում մի կարճ ժամանակ մնաց և այնտեղից բազմաթիւ կրօնաւորներ բերեց, որոնք ս. Լուսաւորչի կարգադրութեամբ սփռուեցին Հայաստանի զանազան կողմերը քրիստոնէական հաւատքը հաստատելու, և քրիստոնէական

---

1) Խորեն. գիրք Բ. գլ. ՀԵ. Զամչ. պատմ. հայ. Ա. գիրք Բ. գլ. ԼԱ. երես 359։

2) Ագաթանգ. տպ. Օրթագիւղ. 1822 թ. եր։ 229։ Զամչ. հատ. Ա. եր. 390—394։

բարեպաշտութեան օրինակ հանդիսանալու նորահաւատներին։ Այս կրօնաւորներից ոմանք բնակուեցին Մաղկէոյ, ոմանք էլ Սուկաւէտ լեռների մօտ։ Նրանց վերայ ս. Լուսաւորիչը վերակացու կարգեց մէկին՝ որ Աբաս էր կոչւում։ Այս ճգնաւորների բնակավայրը, ինչպէս վկայում է Բիւզանդ, Ոսկիք էր կոչւում, ուր յաճախ առանձնանում էր ս. Լուսաւորիչը։ Ոսկեանք եղել է իրանց բնակավայրի անունով չէ, որ ոսկի են կոչուել, ուրեմն այդ անունը նրանք առել են Միջագետքի խոտաճարակ ոսկիներից։ Նոյնը կասենք մենք Սուքիասանց մասին. այդ անունը առել են նրանք Սեբաստիայից եկած յոյն, կապադովկիացի հոգևորականներից։ Ահա թէ ինչպէս.

Եկեղեցական աւանդութեան մէջ մի քանի Սուքիասներ են յիշւում. Պաղեստինի կրօնաւորական կեանքի հիմնադիր Իլարիոնի աշակերտներից մէկը կոչւում էր Սուքիաս կամ Իսիւքիաս [1]։ Հ. Մ. Աւդերեանը [2]) համառօտ տեղեկութիւն է տալիս մի Սուքիաս անապատական ճգնաւորի մասին, որ Փոքր—Հայքի Արմենիակ գաւառի Անդրապիա քաղաքից էր, որ շինել է վանքեր այր և կին միանձների համար։ Կոստանդ կայսրի և Էռինէ կայսրուհու ժամանակ այս Սուքիասի մարմինը բերւում և դրւում է Ամասիա քաղաքի եկեղեցում։—Ե՞րբ էր ապրում այս Սուքիասը և երբ վախճանուեց՝ դժուար է ճշդել։ բայց նրա մարմնի տեղափոխութիւնը եղաւ Ը. դարում, որովհետև Կոստանդն ու Էռինէն թագաւորում էին 780—802 թթ։ Կռապաշտ Մաքսիմիանոսը խիստ հալածանք սկսեց քրիստոնեաների դէմ. նրա զօրականներից մէկը Հիւսիքոս կամ Իսիւքիոս [2]), որ քրիստոնեայ էր և քրիստոնեայ ծնող, ենթարկուեց հալածանքի։ Կայսրի հրամանով մերկացրին նրան իր զինուորական զգեստներից՝ կանացի զգեստ և այծենի հագցնելով, որպէս ամենամեծ պատիժ

---

1) Ցայսմաւուրք. Հոկտ. ԻԱ. եւ Սահմի ԺԱ։ Վարք հարանց հատ. Ա. եր. 328—330։ (վարք երանելւոյն Իլարիոնի կրօնաւորի)։

2) Լիակատար Վարք սրբոց հատ. Ը. եր. 481—483։

և անարգանք՝ ուղարկեցին ստրուկների մոտ իլիկ մանելու և ոստայնանկութեամբ պարապելու։ Վերջը երկանաքար կապեցին պարանոցին և ձգեցին Որոնտէս գետը։ Եւ այսպէս, մարտիրոսական պսակին արժանացաւ Հիւսիքոսը 300 թուին։—Ուրեմն այս Հիւսիքոսը ապրում էր Գ. դարի Բ. կէսին։

Հետաքրքիր է Հ. Մ. Աւգերեանի այս վկայութեանը կցած ծանօթութիւնը [1]), որ սկսւում է այսպէս. «1, գիտելի է նախ, զի անունս Հիւսիքոս, որ է ըստ յունաց Իսիւքիոս, գրի նաև Եւսիւքիոս կամ Սիւքիոս և նոյն է ընդ անուանս Սուքիաս, և ըստ նմին, որպէս ի վարս սրբոյն Սուքիասայ գրի ի մեզ, թէ նշանակ է հանդարտեալ, զնոյն ասեն աստանօր և յոյնք վասն Իսիւքիոսի զօրականի . . .»։

Հ. Մ. Աւգերեանը նոյն ծանօթութեան մէջ ասում է, որ յոյները Իսիւքիոս զօրականին ոտնում են մայիսի 10-ին՝ կցելով նաև Սիւքիոս ճգնաւորի յիշատակը, որ Փոքր—Հայքից էր։ Համանուն մի ճգնաւորի յիշատակը մարտի 5-ին կամ 6-ին։ Այս բանից առնելով մեր Ցայսմաւուրքում մարտի 10-ին դրուած է Հիւսիքոս զինուորի յիշատակը։ Օտարազգիք մեր Սուքիասանց յիշատակը չեն ոտնում. բայց յոյները Հիւսիքոս զինաւորի և Իսիւքիոս ճգնաւորի վարքի մէջ խառնում են մեր Սուքիասանց վարքն էլ։—Հիւսիքոս զինաւորին, նրա քրիստոնէութեան ի պատիժ հագցնում են այծենի կողոբ—քրձեղէն, մազեղէն. մեր Սուքիասանք արդէն մազով ծածկուած լինելուն համար քօշ են կոչւում։ Սիւքիասն էլ Հիւսիքոսն էլ զօրական էին։ Սուքիասն էլ Հիւսիքոսն կամ Իսիւքոսն էլ նշանակում են հանդարտեալ։ Հիւսիքոսին մեր եկեղեցին ոտնում է նոյեմբերի առաջին օրերին։

Այսքան Սիւքիոսների և Հիւսիքոսների անունները, որ յայտնի են երրորդ դարից սկսած, կարող էին անցնել ուրիշների էլ. այդ անունով կարող էին կոչուել վկայաբա-

1) Նոյն եր. 483—485։

նութիւն կազմողներից նախալուսաւորչեան նահատակների մի խումբ, կամ Լուսաւորչի օրով և յետոյ յայտնի կրօնաւորների մի դաս, որի առաջնորդը կարող էր նոյն անունով Կապադովկիայից եկած լինել։

Մեր կարծիքն է, որ նախալուսաւորչեան շրջանի վկաների մի խումբը՝ յետոյ վկայաբանութիւն կազմողներից կոչուել է Ոսկեանք, միւս խումբը՝ Սուքիասանք. առաջին խումբը ըստ մեզ՝ օտարներից Այրարատեան վկայք կոչուածներն են, նահատակուած, ինչպէս վերը տեսանք, մօտաւորապէս 118 թ։ Երկրորդ խումբը Սուքիասանք կոչուած, Թոսրով Ա-ի օրով և նրա մահից յետոյ։ Վկայաբանութիւն կազմողները Ոսկեանց անունը առել են կամ բնակավայրից «Որում տեղեաց, ըստ Բիւզանդայ, Ոսկիք կոչեն». կամ Միջագետքի խոտաճարակ Ոսկիներից. իսկ Սիւքիասանց անունը՝ մեզ յայտնի Սիւքիոսների, Հիւսիքոսների անուններից։ Այս անուանակոչութեան հանգամանքը ամենևին չի նուազեցնում մեր նախալուսաւորչեան վկաների յիշատակի սրբութիւնն ու նուիրականութիւնը։ Մոռացուած անունների տեղ վկայաբանութիւն կազմողները միայն անուն են փոխ առել։ Ժողովրդի յիշողութեան մէջ անուններն ու ժամանակը չփոխուում ու մոռացուում են. անցքերն ու դէպքերը առանց անունների ու ժամանակի՝ աւանդութեան կերպարանք են ստանում։ Անշուշտ, Ոսկեանց և Սուքիասանց վարքերը կազմողները աղբիւր են ունեցել ժողովրդական աւանդութիւնը. և իրանք արդէն յերիւրել են անուններ ու ժամանակ, որ պէտք է ճշդել։

Գ.

Կրկին Շապուհներ եւ Խոսրովներ: Ժամանակի եւ գործող անձերի շփոթութիւն. գուցէ Ոսկեանք եւ Սուքիասանք կոչուել են ս. Լուսաւորչի քեռած յոյն եւ ասորի կրօնաւորներն ու նրանց հետեւող հայերը։ Հալածանք քրիստոնէութեան դէմ Շապուհ Բ.-ի օրով: Ոսկեանց եւ Սուքիասանց մասին ժողովրդական այժմեան աւանդութիւնը: Սուկաւէտի մասին կարծիքները։—ս. Ոսկեանց եւ Սուքիասանց մասին մեր կարծիքը:

Եկեղեցական աւանդութիւնը ասում է, որ Սուքիասանք նահատակուեցին Շապուհի մահից յետոյ, այն ժամանակ, երբ Խոսրովի մահուամբ Հայաստանը անտերուչ էր մնացել։ Երկու. Խոսրով ունենք, երկու էլ Շապուհ կայ. Առաջին Խոսրովն ու Շապուհն ապրում էին ս. Լուսաւորչից առաջ 214—272 թ.։ Երկրորդ Խոսրովն ու Շապուհը՝ ս. Լուսաւորչից յետոյ 309—379։ Երկու Շապուհների ժամանակ էլ Հայաստանը, Խոսրովների մահից յետոյ, անտերուչ է եղել. աւերածութեանց է ենթարկուել, ու բազմաթիւ քրիստոնեայք են նահատակուել։ Այս Շապուհների ու Խոսրովների օրով նահատակուած որ խմբերը կարող էին Ոսկեանք և Սուքիասանք կոչուել։

Ըստ աւանդութեան, Ոսկեանք՝ ս. Թադէոս առաքեալի աշակերտներն էին, իսկ Սուքիասանք՝ որ Սաթենիկ թագուհու ազգականներն էին, նրա հետ Ալանաց երկրից եկած՝ Ոսկեանց աշակերտեցին։ Այսպէս լինելով՝ եթէ առաջիններները կարողանային մինչև Բ. դարի քսանական թուերը ապրել, աւելի քան մի հարիւր տարի կեանք անցնելով, երկրորդները չէին կարող մինչև Գ. դարի վերջին քառորդն ապրել մօտ 270 տարի։ Այս հանգամանքն ևս գալիս է հաստատելու, որ Ոսկեանք և Սուքիասանք նախալուսաւորչեան շրջանի հայ քրիստոնեայ նահատակների խմբեր են, որ յետոյ պատահաբար Ոսկեանց և Սուքիասանց անունով են կնքուել, յայտնի

Ոսկիների և Սիւքիոսների անունով։ Եթէ ընդունենք, որ Ոսկեանք և Սուքիասանք յետ լուսաւորչեան կրօնաւորներ են. այն ժամանակ կը մնայ մեզ ասել, որ Ոսկեանք իրանց անունը ստացան Միջագետքի Դ. դարում յայտնի Ոսկի—խոտաճարակներից։ Սուքիասանք դարձեալ Ալանաց երկրից էին եկած, բայց ոչ որպէս Սաթենիկ թագուհու աղգական, այլ Աշխէն տիկնոջ—Տրդատի թագուհու։ Օտար պատմիչները Արտաշէսի տեղ՝ Տրդատ են անուանում այն թագաւորին, որ Հռոմ գնաց Ներոնից թագ ստանալու։ Վկայաբանութիւն գրողները կարող էին շփոթել Տրդատին Արտաշէսի հետ. և Տրդատ Գ.-ի ժամանակ պատահածը Տրդատ—Արտաշէսի ժամանակ դնել և ըստ այնմ յարմարացնել վկայաբանութիւնը։ Այսպէս լինելուց յետոյ էլ դժուար չէր շփոթել միւս անուններն ու պարագաները ս. Լուսաւորչի տեղ՝ ս. Թադէոս առաքեալ և Բ. Շապուհի ու Խոսրովի տեղ՝ Ս. Շապուհ և Խոսրով դնել, մոռանալով, թէ այդպէս ս. Սուքիասանք մօտ 270 տարի պէտք է ապրէին, որ անհնարին է։ Եթէ Սուքիասանք Աշխէն տիկնոջ հետ Հայաստան եկած նրա Ալան աղգականներն էին, կարող էին հայոց ընդհանուր դարձի ժամանակ քրիստոնեայ դառնալ ու հետևելով ս. Լուսաւորչի բերած կրօնաւոր խոտաճարակներին՝ բնակուել Սուկաւէտ սարում և Սուքիասանք կոչուէին կամ յայտնի Սիւքիոսների անունով, կամ իրանց ընկերներից մէկի անունով՝ որ կարող էր Սուքիաս լինել։

Աւանդութիւնն ասում է, որ Շապուհից յետոյ Ալանաց Գիգիանոս թագաւորը պարսիկ զօրքեր ուղարկեց Սուքիասանց յետ տանելու կամ սպանելու՝ եթէ նրանք չը թողնէին քրիստոնէութիւնը և յանձն չառնէին գնալ։ Պատմութիւնից գիտենք [1]), որ Խոսրով Բ.-ի ժամանակ Կովկասեան աղգերը գրգռուած Շապուհ Բ.-ից յարձակուեցին Հայաստանի վերայ և հասան մինչև Վաղարշապատ։ Այս արշաւանքի ժամանակ նահատակուած քրիս-

1) Խորեն. գիրք Գ. գլ. Թ. Լ.Ե. Լ.Զ, Բիւզանդ դպր. Գ. գլ. Է։

տոնեաներն էլ կարող էին Սուքիասանց անունով կոչուել։ Մեհրուժան Արծրունին մեծ աւերմունք գործեց Հայաստանում աշխատելով ջնջել քրիստոնէութիւնը։ Շապուհ Բ.-ը Արշակի օրով մեծ հալածանք է հանում քրիստոնէութեան դէմ Հայաստանում և նահատակում է Մարի Էրեցին՝ եօթանասուն ընկերներով։ «Ապա, ասում է Բիւզանդ, (դպր. Դ. գլ. ԺԷ.) բիւրս բիւրոց կոտորէին և հազարս հազարաց. զի այնպէս տուաւ հրաման ի թագաւորէն, զի ամենևին քրիստոնեայ անուն ի սահմանքս նորա մի գտցի» Իսկ Հ. Միք. Չամչեանը [1]) Հայաստանի այն ժամանակի թշուառութեան նկարագրութիւնը վերջացնում է հետևեալ խօսքերով. «Իսկ մոգք հանդերձ դահճով սփռեալ ի գեօղս և յաւանս, բռնադատէին զամենեսեան յուրացութիւն հաւատոյ, և յոչ առնուլ նոցա յանձն չարաչար մահուամբ սպանանէին զբազումս ի նոցանէ։ Եւ եղև յայնժամ աշխարհս մեր իբրև սպանդարան մարտիրոսաց»։ Այս մարտիրոսների և նահատակների յիշատակը չենք տեսնում մեր եկեղեցում. նրանք չըկան տօնելի սրբերի շարքում։ Ինձ թւում է, որ այս և նման նահատակէլ կարող էին ս. Ոսկեանք և Սուքիասանց ընդհանուր անուան տակ տօնուիլ։

Սուքիասանց անունով նուիրագործուած է Սուկաւէտ սարը, որ այժմ Քեօսա-դաղ է կոչւում, որ տարուայ մէջ որոշ օրերում ժողովուրդը ուխտի է գալիս մեծ բազմութեամբ, երբ երկիրը խաղաղ էր և այժմեան արհաւիրքները չըկային։

Մեծ-Սուկաւէտի ստորոտում մի բլրակի վրայ 16 դերեզմաններ կան, շատ հին, մամռոտած և խոտերի մէջ հազիւ նշմարելի. կայ մի կլոր քար էլ։

Ժողովրդական աւանդութիւնը ասում է [2]), որ դրանք 40 աւազակներ են եղել և պատահելով ս. Թադէոս առաքեալին՝ կամեցել են նրան կողոպտել։ Ս. Թադէոսը յայտ-

1) Պատմ. Հայոց հատ. Ա. գիրք Բ. գլ. ԽԱ. ԽԸ. եր. 321—464։

2) Հայկունի, Բագրեւանդ և Զրաբաշխ գաւառ մասն Ա. տպ. Էջմ. 1894 թ. եր. 107—119

նել է, որ ոչինչ չունի և առաքեալ է, ու քարոզում է Յիսուս Քրիստոսի անունով։ Աւազակները հաւատալու համար հրաշք են պահանջում. ս. Թադէոսը ձեռքով մի եղնիկ է կանչում. եղնիկը մօտ է գալիս։ Այս հրաշքը տեսնելով աւազակները հաւատում են. թողնում են աւազակութիւնը, մկրտւում և սկսում են ճգնել։ Ս. Թադէոս առաքեալը բաժանում է նրանց տան տան. տասը թողնում է Սուկաւէտում, տասը ուղարկում է Ղլիճ-գեաղուկ, այնտեղ, ուր է ս. Գէորգ կոչուած վայրը. տան՝ Դէդէ—Մուրատ և Դէդէ—Մաքսուտ՝ Ամէտ գիւղից դէպ ի արևելք և տան հոգի էլ՝ Ալադաղ (Ծաղկէոյ լեռ)։ Սրանք նահատակւում են բռնաւորից Խաստուրցիների մատնութեամբ. այդ պատճառով էլ աշակերտցոց մէջ առակ է, «կուսանք մատնող Խաստուրցիք»։

Այս ժողովրդական աւանդութիւնը համեմատելով եկեղեցականին, ըստ էութեան՝ նման է,—կայ Թադէոս առաքեալ, կան Ոսկեանք (հետն առնելով և Սուքիասանց) ի դէմս աւազակների, կայ եղնիկի վերայ կատարուած հրաշք. կայ մատնութեան և նահատակութեան հանգամանք։ Միայն Դեսպան Ոսկեանք և Թագուհու աղգական Սուքիասանք ժողովրդական աւանդութեան մէջ աւազակ են դարձել։ Ժողովրդական աւանդութեան մէջ մոռացուել է Թագաւորի կամ իշխողի անունը և տեղը դրուել է բռնաւոր անորոշ անունը։ Մատնիչ Սկուհէր նախարարի տեղ, որ յայտնել էր Սուքիասանց քրիստոնեայ լինելը, դրուել է Խաստուրցիք։ Թէպէտ ընդհանրապէս կարծւում է, որ դրաւոր յիշատակարանների աղբիւրը ժողովրդի բանաւոր աւանդութիւնն է, բայց այս դէպքում, ըստիս, դրաւորն է ժողովրդական աւանդութեան աղբիւրը։ Ժողովուրդը լսելով Յայսմաւուրքի վկայաբանութիւնների ընթերցումները, որ շատ ժամանակ չէ դադարել է, մոռանալով իւր լսելիքին խորթ, անծանօթ յատուկ անունները, եկեղեցական աւանդութեանը իւր հասկացողութեան համեմատ ձև է տուել։

Մենք անապատականների մասին այս մեր տեսու-

թեան մէջ երկար կանգ առանք Ոսկեանց և Սուքիասանց վերայ. նախ, որ նրանք են հանդիսանում, ըստ մեր եկեղեցական աւանդութեան հայ կրօնաւորութեան նախաակիզբն։ Հարկաւոր է ճշտել թէ Սուքիասանք և Ոսկեանք իբրև անապատական, կրօնաւոր և խոտաճարակ երբ կարող էին ապրած լինել. այդ օրից էլ պէտք է հաշուել հայ կրօնաւորութիւնը։ Ընդհանուր եկեղեցական պատմութիւնը հաւաստիք չի տալիս՝ որ Ա. դարում, երբ ըստ աւանդութեան ապրում էին Ոսկեանք, Բ. և Գ. դարերում որոնց մէջ ձգւում է Սուքիասանց կեանքը, Եգիպտոսից դուրս, և այն ևս Հայաստանում, ապրելիս լինէին կազմակերպուած անապատական, կրօնաւորական և խոտաճարակների կարգերը։ Գանի որ, կրօնաւորութիւնը Գ. դարում միայն Եգիպտոսի ասկետներից դուրս գալով, նոյն դարի Բ.-ի կիսին Բասիլեի ջանքով հաստատուեց Կապադովկիայում քիչ բարեփոխուած. և հայ կրօնաւորութիւնը համարւում է Բասիլեի հաստատածի շառաւիղ։

Եթէ ս. Ոսկեանց և Սուքիասանց անջատենք կրօնաւոր խոտաճարակներից, իբրև հայ եկեղեցւոյ նահատակներ նրանք կարող էին մարտիրոսական պատկին արժանացած լինել ի դէմս այն քրիստոնեաների, որոնք վկայել են Քրիստոսի առաջին դարից սկսած մինչև Գ. դարը խմբովին, և որոնց մասին յաճախ յանուանէ յիշատակութիւն չըկայ ոչ մեր պատմութեան և ոչ մեր եկեղեցական աւանդութեան մէջ։ Մենք անունները, որ տրուած են այս նախկին քրիստոնեաներին, առնուած յոյն—ասորի Սիւքիոսներից, թէ միջագետակի խոտաճարակ Ոսկիներից, պատահական բան ենք համարում։ Էութիւնը այն է, որ այդ նահատակները եղել են. Ոսկեանք ու Սուքիասանք կը կոչուեն, թէ Արարատեան բիւր վկայք և ըստ Փիրմելիոսի՝ խոսրով Ա.-ի ժամանակ նահատակուած քրիստոնեայք՝ միևնոյն է։

Մի անգամ ընդունելով որ Ոսկեանց և Սուքիասանց անուան տակ պէտք է հասկանալ նախկին, մինչև ս. Լուսաւորիչը եղած հայ քրիստոնեայ նահատակները, ուրեմն,

Հայոց կրօնաւորութիւնը պէտք է բաժանենք նրանցից և նրա սկիզբը պէտք է դնենք Դ. դարում. ամենավաղը՝ ս. Լուսաւորչի օրով, հիմնուելով այն պատմական աւանդութեան վերայ, որ ս. Լուսաւորիչը Կեսարիայից ձեռնադրուած յետ դառնալիս՝ հետը բազմաթիւ յոյն հոգեւորականներ և ասորի կրօնաւորներ բերեց և սկիզբն դրեց կրօնաւորական բարեպաշտութեան, ամենաուշը՝ ս. Ներսէս Մեծի օրով, որ Աշտիշատի ժողովում արդէն կանոններ է սահմանում կրօնաւորների համար։ Բայց այս մասին յետոյ։

Սուքիասանց և հայ կրօնաւորութեան վերաբերութեամբ Սուկաւէտ լեռն ևս կարևոր դեր ունի խբրև Սուքիասանց բնակավայր և կրօնաւորութեան հանդիսարան։

Հ. Մկրտիչ Աւդերեանը Սուքիասանց վկայաբանութեան ծանօթութեան մէջ [1]) կարծում է որ, Սուքիասանց բնակած լեռը Սուքիասի անունով չէ, որ Սուկաւ է կոչուել. վասն զի, նոյն Սուքիասն ասում է. «եկայք երթիցուք յայլ Սուկաւ տեղիս»։ Սուկաւ, ուրեմն որպէս հասարակ անուն կար, որ թերևս նշանակում էր անմարդաբնակ, դաժան, առապար տեղ. Հ. Աւդերեանը Սուկաւը նոյնացնում է լատին սի՛քքուս բառին, որ ցամաք, չոր է նշանակում։

Հ. Ալիշանը [2]) Սուկաւ լեռան արդի Քեօսա-դաղ անունը համարում է focus բառից առաջ եկած։

Մեր միաբանակից դեր. Բարդուղիմէոս եպիսկոպոսը [3]) երկար կանգ է առնում Սուկաւ և Սուկաւէտ անունների վերայ. աշխատում է մեկնել այդ բառերի ծագումն և գալիս է այն եզրակացութեան, որ սակա—ւէտ կամ Սուկա—ւէտ նշանակում է «մեծ մեծ կաթիլներով անձրեւող ամպ կրող, ունող. կամ Սուկա—ի—ատ, որ նշա-

1) Վարք Սրբոց. վկայաբ. Սրբոց Սուքիասանց հատ. Բ. ծանօթ. եր. 113—120։

2) Այրարատ եր. 536—537։

3) Խորենացին Խորենացով պէտք է հասկանալ. Բ. հատ։ Թիֆլ. 1902. եր. 86—89։

նակում է արքիր, ակն, աւազան ջրոյ»: Սրբազանի այս եզրակացութեան հիմքն է արաբ—տաճկերէն բառարանը ըստ ընթերցման պ. Հ. Աճառեանի։

Ուրեմն Բարդուղիմէոս սրբազանը Աւգերեանին բոլորովին հակառակ եզրակացութեան է գալիս։ Սրբազանը Սուկաւէտ բառը արաբ—տաճկերէն բառարանով ստուգաբանելիս՝ Սուկաւ՝ ջրառատ վայր է ընդունում. Հ. Աւգերեանը լատիներէն սի՛քքուս բառի հետ նոյնացնելով Սուկաւէտը՝ ցամաք, չոր հասկանում։

Եթէ ըստ Բարդ. սրբազանի Սուկաւէտ, Սակաւէտ կամ Սուկաիատ ծագած համարենք արաբ—տաճկերէնից, այն ժամանակ այդ անունի կիրառութիւնը պէտք է Է. դարից դնել, երբ արաբները առաջին անգամ արշաւեցին Հայաստան. մինչդեռ, ըստ եկեղեցական աւանդութեան՝ Սուքիասանք այլ Սուկաւ տեղ էին ոտնում. և լեռն էլ նրանց անունով Սուկաւէտ կոչուեց։ Սուքիասանց ամենաուշ ժամանակը Դ. դարն է, ուրեմն այդ ժամանակից արդէն նրանց բնակավայրը Սուկաւ էր կոչւում։ Բացի այս՝ ըստ Մաւի, Սուքիասանց վկայաբանութիւնը արդէն կազմուած էր Է. դարում. ուրեմն Է. դարից առաջ Սուքիասանց վկայաբանութիւնը կրում էր «նահատակութիւն ճգնաւորացն Սուկաւէտաց (мученичество Сукаветскихъ подвижниковъ)»:

Ըստ իս՝ ինչպէս Բարդ. սրբազանի նոյնպէս և Հ. Աւգերեանի ենթադրութիւնները Սուկաւէտ բառի ստուգաբանութեան վերաբերութեամբ համոզեցուցիչ չեն, թէև ըստ էութեան Աւգերեանի եզրակացութիւնը—Սուկաւէտ սի՛քքուս՝ չոր ցամաք—ուղիղ է։ Թողնենք այն, որ «եկայք, երթիցուք յայլ սուկաւ տեղիս» դարձուածքից երևում է, որ Սուկաւ, առանց առնչութիւն ունենալու լատին սի՛քքուս բառին, հաւանօրէն նշանակում է անջրդի, առապար։ Սուքիասանք Ոսկեանց բնակավայր Ծաղկէոյ ջրաշատ լեռը աւելի կենսուրախ և կենցաղական համարելով՝ ասում են. «եկա՛յք, երթիցո՛ւք յայլ սուկաւ տեղիս»։

Մենք հեռուից, Ռուսական Բասենից, տեսել ենք

Սուկաւէտ լեռան, և մի ամբողջ շաբաթ Բասենում մեր շրջագայութեան ժամանակ չէինք կարողանում հեռացնել մեր աչքերը Սուկաւէտից, որ գրաւել էր մեր ուշադրութիւնը թէ Սուքիասանց յիշատակով, և թէ ժողովրդի զրոյցների մէջ նրա անուան յաճախակի յիշեցմամբ և այն կարծիքի ենք, որ Սուկաւէտը իւր լերկ գագաթով աւելի անշրջի է, քան Լրատատ և ժողովրդի նրան տուած Քեօսա—դաղ յորջորջումն արդէն ցոյց է տալիս նրա կանաչութիւնից զուրկ լինելը։ Ուրեմն Հ. Ալիշանի Քեօսա—դաղ կոչումն քօշից բառից առաջ եկած համարելը լոկ ենթադրութիւն է. քեօսա—դօշ կը նշանակի, իսկ քօշից՝ այծերի։

Ըստ Հայկունու[1]) Սուկաւէտները երկու են—մեծ և և փոքր։ Սուքիասանց նահատակութեան վայրը համարւում է փոքր Սուկաւէտը, Գիշարուն տարի և մեծ Սուկաւէտի միջև տափարակի արևելահարաւ բլրակը, որի վերայ երկու ոռնաչափ բարձրութեամբ որմերով մատուռներ կան։ Մատուռները շինուած են անարուեստ, կոշտ քարերով։ Մատուռներից մէկի մէջ 1850—60 թ. հայ քահանաներն էին պատարագում, իսկ միւսում՝ հայ կաթոլիկները. Այժմ էլ ամառը համարեա ամեն կիրակի պատարագում են հայ կաթոլիկները, որովհետև կաթոլիկ ուխտաւորները անպակաս են։

Բլրակի գագաթի արևելեան եզրի դառ ի վայրի վերայ մի մեծ շերտ քար կայ։ Աւանդութեամբ՝ այդ քարի վերայ են նահատակուել ս. Սուքիասանք։ Մատուռի արևելեան կողի ատորոտում, քիչ ցած, սակաւաջուր աղբիւրն է. իսկ տափարակի հարաւարևմտեան կողմը՝ դլխաջուր կոչուած առատ աղբիւրը։ Գլխաջրից դժուարագնաց լեռնալանջի դառ ի վերի վերայ՝ «Զարշարումն»։

Ամփոփումն.—Սուրբ Ոսկեանք և Սուքիասանք, որպէս խոտաճարակ կրօնաւորների դասակարգ, չէին կարող Ա. դարում ապրել, որովհետև միայն Դ. դարում կրօնաւո-

1) Բաղրեանդ Զրաբաչի գաւառ. մասն Ա. եր. 107—119։

րութիւնը Իլարիոնի ձեռքով Եգիպտոսից տարածուեց Պաղեստին, այնտեղից՝ Եփրեմ Խուրու ձեռքով՝ Ասորիք, իսկ այստեղից Եւստաթէոսի ձեռքով՝ Փոքր—Հայք։ Ոսկի խոտաճարակներն էլ Դ. դարում սկսեցին Միջագետքում, և այնտեղից հաւանօրէն տարածուեցին Հայաստան։ Ոսկեանք և Սուքիասանք, եթէ ս. Լուսաւորչի բերած և նրանց հետևող հայ կրօնաւորները չեն, ապա ուրեմն այդ անունների տակ եկեղեցին ծօնում է նախալուսաւորչեան շրջանի նահատակուած հայ քրիստոնեաների խմբերին։

Սուկաւէտ չըպէտք է ստուգաբանել ոչ լատիներէնով և ոչ արաբ—տաճկերէնով. նրա այժմեան Ֆեօսա—դաղ անունը առնչութիւն չունի քօշից բառի հետ, ինչպէս կարծում է Հ. Ալիշան։ Ֆեօսա—դաղ կընշանակի լերկ, կանաչութիւնից զուրկ լեռ, որ այդպէս էլ է։ Սուկաւէտը հնումն Ջրաբաշխ էլ էր կոչւում, որովհետև նա գտնւում այն բարձրաւանդակի վերայ, որի մօտ վտակները մի կողմից հոսում են դէպի Մուրատ (Արածանի արևելեան Եփրատ) և միւս կողմից՝ դէպի Երասխ գետերը. և Ջրաբաշխը ոչ մի առնչութիւն չունի Ջրառատ, Ջրաշատի հետ։

Սուկաւէտից դէպի հարաւարևելք ձգւում է Բագրևանդ գաւառը, դէպի հիւսիս արևմուտք՝ Բասենները։

Դ.

Ս. Լուսաւորչի բերած Սեբաստացի եւ ասորի կրօնաւորները: Ս. Դանիէլ ծերունի: Հայ կրօնաւորների անյիշատակ մնալը տօնող սրբերի շարքում: Հայ կրօնաւորների համար կանոններ: Դ. դարում Հայաստանի կրօնասանները: Ս. Լուսաւորչի եւ Տրդատ թագաւորի նգնութեան վայրերը: Եւստաթէոս եւ իւր հետեւողները: Հայաստանի կրօնաւորների վարքը:

Ս. Ոսկեաններից և Սուքիասեաններից անկախ ճգնաւորական, կրօնաւորական և վանական կեանքը Հայաստանում սկսուեց և զարգացաւ Դ. դարում։ Փաւստոս Բիւզանդը, Մովսէս Խորենացին և մեր միւս պատմիչները բաւական նիւթ են մատակարարում հայ կրօնաւորութեան և վանականութեան մասին։

Հայ պատմիչների աւանդածին համեմատ ս. Լուսաւորիչը ձեռնադրուելուց յետոյ Կեսարիայից վերադառնալիս՝ մի առ ժամանակ մնաց Սեբաստիայում այնտեղից եւս կրօնաւորներ ժողովելու[1]) և, ըստ Չամչեանի[2]) այստեղից էլ շատերին ընտրելով, հետո առաջ եկաւ Հայաստան։ Այս Սեբաստացի կրօնաւորներից արժանաւորագոյններին քորեպիսկոպոս և քահանայ կարգեց Հայաստանի զանազան կողմերում, մնացածներին էլ թողեց որ կրօնաւորական և անապատական ճգնաւոր կեանք վարեն նորահաւատներին քրիստոնէական առաքինութեան և բարեպաշտութեան օրինակ հանդիսանալով։ Այս Դ. դարի սկզբումն էր։

Ս. Լուսաւորիչը ասորի ճգնաւորներ էլ բերեց Հայաստան։ Ասորի ճգնաւորների մէջ նշանաւոր էր Դանիէլ

---

1) Զենոբ Գլակ. Կ. Պոլիս. Հայոց ՌՃԿԸ. թուին, եր. 47։ Ագաթանգեղոս, Օրթագիւղ 1824 թ. եր. 229։

2) Պատմ. Հայոց. Հատ. Ա. գլ. ԼԳ. եր. 391։

ծերունին, որին ս. Լուսաւորիչը քորեպիսկոպոս ձեռնադրելով Տարօնի եկեղեցիների վերայ տեսուչ կարգեց։ Ս. Դանիէլը անմարդաբնակ լեռներում անապատական կեանք վարելով հանդերձ՝ աշխարհութեամբ և եռանդով հետեւում էր իւր հօտի բարոյական և քրիստոնէական հոգւոյ վերածնութեան գործին։

Ս. Յուսիկի նահատակութիւնից յետոյ ս. Դանիէլը մինչև անգամ պէտք է բաղմէր Հայոց Հայրապետական գահը, բայց խեղդամահ եղաւ՝ Տիրան թագաւորին ու նախարարներին, ս. Յուսիկի նահատակութեան պատճառով, յանդիմանելուն համար։ Ս. Դանիէլի մարմինը նրա Եաղիտա և Եպիփան աշակերտները իրանց ընկերակիցների հետ տարան Տարօն և թաղեցին նրա ճգնարանում — Հացեաց դրախտում [1])։ Հաւանական է, որ ս. Դանիէլը Հայրապետական գահը բաղմելու համար հրաւիրուած էր Վաղարշապատ և այդտեղ նահատակուելով՝ տարուեց թաղուեց իւր ճգնարանում։

Ս. Դանիէլի յիշատակը պէտք է՞ ասենք Անատոլի և Կրօնիդէսի հետ, բայց մեզ անհասկանալի պատճառով ասնուում է ս. Լուսաւորչի որդւոց և թոռանց հետ։ Նա ոչ մի աղդակցութիւն չունէր ս. Լուսաւորչի հետ. Հայրապետական օծումն էլ չստացաւ, որ դոնէ այսպէս, իբրև Հայրապետ դասուէր ս. Լուսաւորչին յաջորդող նրա որդիների ու թոռների շարքում։

Ճարտարանի մէջ [2]) ի պատիւ ս. որդւոց և թոռանց մանկունքում ս. Դանիէլի համար երգւում է. «Երկնայնոցն ի յերկրի հաղորդ ճգնութեամբ. յանդիմանելով զթագաւորն կատարեցար վասն անուանն Տեառն, սուրբ Դանիէլ. անդադար բարեխօսեա վասն անձանց մերոց»։

Ասորի ճգնաւորների մէջ նշանաւոր էին Եաղիտան, որին Դանիէլը կարդել էր Կորդուաց աշխարհում, և Եփրեմը.

---

1) Փաւստոս Բիւզանդ. գրք. Գ. գլ. ԺԴ։ Խորէն. գիրք Գ. գլ. ԺԴ։
2) Կանոն որդւոց և թոռանց ս. Լուսաւորչի, ՀԶ.

Յոյն հանարուած կրօնաւորների մէջ նշանաւոր էին Անտոնն ու Կրոնիդէսը, որոնց մասին յիշատակութիւն գտնում ենք մեր Զենոբ Գլակում [1]), Վարք Սրբոցում [2]), ճառընտիրներում և եկեղեցական աւանդութեան մէջ։ Ագաթանգեղոսը, Փաւստոսն ու Մովսէս Խորենացին դրանց մասին ոչինչ չեն գրում։ Անտոնի և Կրոնիդէսի յիշատակը եկեղեցին ծանում է Զ. դարի վերջերին նահատակուած եօթն խոստաճարակների հետ։ Այս ծանը և նրան յատկացած «Յաւուրս վերջին ժամանակի» շարականը յետին ժամանակներում է ստեղծուել։ Անտոնն ու Կրոնիդէսը, եկեղեցական աւանդութեան համեմատ եկեղեցական որ և է ատիճան չստացան, կրօնաւոր էին, կրօնաւոր էլ մեռան։ Յոյն էր նաև Եպիփանը [3]), որին ս. Դանիէլը կարդել էր Ծոփաց աշխարհի Սղձնիք գաւառում վարդապետ կամ հոգևոր գաստիարակ։

Այս ճգնաւորներն ու կրօնաւորները յոյն և ասորի են կոչուած մեր պատմութիւններում ու եկեղեցական աւանդութեան մէջ. բայց կարող էին և հայ լինել, որովհետև դրանք Միջագետքից, Փոքր-Հայքից և Սեբաստիայից էին։ Մեր նախնիք դրանց ասորի, յոյն են անուանել, ըստ. իս, նրանց աւելի խորհրդաւոր և պատկառելի դաբձնելու համար, ինչպէս ս. Հռիփսիմեանց՝ հռովմայեցի, ս. Գրիգոր Լուսաւորչին՝ Պարթև, և բոլոր մեր պատմութեան մէջ յայտնի անձերին օտար ծագումի։—Միջագետքը Հայոց սահմանակից էր. և հիւսիսային մասը կոչում էր Հայոց Միջագետք. Սեբաստիան հայոց քաղաք էր և նրա եպիսկոպոսը հայոց եպիսկոպոս էր կոչում. Փոքր-Հայքը, որի սահմանի վերայ էր գտնում Կեսարիան, հայաբնակ երկիր էր, թէև բուզանդական իշխանութեան տակ լինելով, շատ զօրեղ էր այնտեղ յոյն ազդեցութիւնը։

---

1) Զենոբ Գլակ. եր. 70։ (Տանելն Բուրգարայ զՍ. Գրիգոր ի Կեսարիա, և որ զկնի. 12։

2) Հատ. Է. եր. 33—41։

3) Փաւստոս Բիւզանդ. գպր. Ե. գլ. ԻԵ։

Յոյն և ասորի կոչուած կրօնաւորների ու ճգնաւորների շարքում գտնում ենք զուտ հայ անուններ, ինչպէս Գինդ մեծը և նրա աշակերտներից՝ Վաչակ, Արտոյտ, Մարախ, որոնց Տրդատն էլ էր ընկերակցում[1]։ Գինդ մեծը Դանիէլ Ծերունու աշակերտն էր և նրանից յետոյ դարձաւ աբեղաների գլուխ, միանձների վարդապետ, միայնակեացների առաջնորդ, վանքերի վերակացու և անապատաւորների ուսուցիչ[2]։ Ներսէս մեծի օրով նշանաւոր էին առաջին Գինդի աշակերտ Գինդ Սլիունին[3] և իր ձեռնասուն մանուկ Մուշէն[4]։ Սակայն այս կրօնաւորներից ու ճգնաւորներից ոչ մէկին էլ չէ յիշում եկեղեցին տօնելի սրբերի կարգում։

Ըստ մեզ պէտք է ս. Դանիէլ Ծերունուն բաժանել ս. Լուսաւորչի որդիներից ու թոռներից, և նրա հետ միացնելով Դ. դարի բոլոր յայտնի հայ կրօնաւորների ու ճգնաւորների անունները, մի նոր տօն սահմանել կամ կցել եօթն խոտաճաբակաց տօնի հետ։ Փաւստոսի ու Խորենացու վկայութիւնները բաւական են նրանց աբնութիւնն ու վաստակը եկեղեցու պայծառութեան համար ապացուցուած համարելու։

Ըստ Զենոբ Գլակի[5] Կեսարիայի հայրապետը յանձնարարում է ս. Լուսաւորչին, որ սա յաւիտենական օրէնք դնի, ա. որ կրօնաւորները Աղէքսանդրացուց (Եգիպտոսի ճգնաւորների) պէս դաստակերտներում ու գիւղաքաղաքներում չաշխատեն, առանձին առանձին չ'ապրեն, առանձին աղօթատեղի չունենան, այլ խմբովին — մինչև հարիւր հոգի միասին ապրեն. բ. որ վանքերին գիւղեր և մեծամեծ աւաններ յատկացնի՝ պարտաւորելով որ այս գիւղերն ու աւանները հոգան վանքերի պէտքերը. որպէս զի կրօնա-

---

1) Փաւստոս Բիւզանդ. գպր. Զ. գլ. ԺԶ։

2) Փաւստոս Բիւզանդ. գպր. Զ. գլ. ԺԶ.

3) Խոր. գիրք Դ. գլ. Ի։

4) Փաւստոս Բիւզանդ. գպր. Զ. գլ. ԺԶ։

5) Պատճէն երկրորդ և պատասխանի թղթոյն սրբոյն Գրիգորի, իւրոյ։զոր յղեաց Կեսարուսխնան հայրապետն ի ժամին

ուրներն ու վանականները աղօթքով ու ճգնութեամբ պարապեն. գ. որ կրօնաւորների բնակութեան տեղերում առանձին մատուռ չը շինուի. մատուռներում քորեպիսկոպոսներ ու քահանաներ կարգուեն։ Մատուռների մօտ շինուեն դատակերաններ, աղքատանոցներ, որ բժշկուելու եկողները տրտունջի տեղի չունենան. ուխտաւորներն էլ եկեղեցու դռանը չը քնեն։

Որքան և կասկածելի լինի Կեսարիայի հայրապետի ս. Լուսաւորչին գրած այս թուղթը, այնուամենայնիւ մատամբ պատկերացնում է հայ կրօնաւորութեան և վանականութեան կենցաղը. որի մէջ տեսնում ենք Եգիպտոսի առանձնակեաց ճգնաւորների (անախորետ) և Սեբաստիայի Եւստաթէոս եպիսկոպոսին հետևող թափառաշրջիկ կրօնաւորների փոխարէն Բարսեղի հաստատած կենոբիտական — միաբանական ուխտի ջատագովութիւն։ — Այս հանգամանքը հաստատում է, որ Զենոբ Գլակի անուան տակ պատմիչը ապրում է Բարսեղ մեծից յետոյ, և ծանօթ էր եգիպտական ճգնաւորների կենցաղին։

Ինչպէս արդէն ասել ենք, եգիպտական ճգնաւորները միաբանական կեանք չէին վարում. առանձին առանձին սկիթներում—(մենաստաններում) էին ապրում, իրարից հեռու քարայրներում կամ խրճիթներում։ Շատ առաջ, օրինակ Պաւղոս թեբայիդացու ժամանակ Գ. դարում ապրում էին բոլորովին մեկուսացած անապատներում ու լեռների անձաւներում անյայտութեան մէջ։

Սկիթներում ապրողները իրանց ձեռքի վաստակը քաղաքներում ու աւաններում վաճառելով՝ հայթայթում էին իրանց պէտքերը, աւելորդը՝ լաւագոյն հանգամանքում, աղքատներին բաժանելով կամ նրանց կարիքների համար գործադրելով։ Յետոյն ժամանակներում, երբ կրօնաւորները շեղուելով իրանց սկզբնական մաքուր կենցաղից սկսեցին ղեղծ կեանք վարել, իրանց վաստակը արտահանելու պատրուակով քաղաք էին գնում, անձնատուր լինելու վայրաքաշ մեղկութեան։

Ս. Բարսեղը քաջալերելով կրօնաւորների ձեռքի աշ-

խառանքը, արգելում էր արտահանելու պատրուակով քաղաքներում գիւղերում թափառելը։

Դ. դարում Հայաստանի կրօնաւորների բնակավայրերն էին Տարօն գաւառում՝ ինեանկեան վայրը կամ Գլակայ վանքը և Հայոց դրախտը. Արարատեան նահանգում՝ Բագրևանդ և Բասեան գաւառները. Բարձր—Հայքում՝ Դարանաղեաց Մանեայ այրը. Ծոփաց նահանգում՝ Սղձնիք։

Հոգեկան անդորրութիւն էին գտնում այս ճգնարաններում Տրդատ թագաւորն ու ս. Լուսաւորիչը, յաճախակի առանձնանալով Տրդատը՝ Տարօնի կրօնաւորներում, ս. Լուսաւորիչը՝ Արարատեան նահանգի Սուկաւէտ և Ծաղկեոյ ճգնարաններում, Եփրատի ակունքի մօտ, այնտեղ, «ուր, ըստ Փաւստոսի, առաջու կայեանքն էին Մեծին Գրիգորի առաջնոյ, որում տեղեաց Ոսկիք կոչեն» [1]։—Մեզ այնպէս է թւում, որ Փաւստոսի մէջ Տրդատի՝ Տարօնոյ կրօնաւորներին յարելը, և Մեծին Գրիգորի առաջնոյ յաճախելն այնտեղ. «որում տեղեաց ոսկիք կոչեն», աւելորդութիւն է յետին ժամանակի։ Բայց մենք թողնելով մեր անձնական վարկածները, եկեղեցական ուսումնական հաւատարիմ մնալով՝ ասենք, որ ս. Լուսաւորիչը իւր «առաջու կայեանք»ում միայնակեացների ուխտ էր հաստատել, դլխաւոր կարգելով ասորի կրօնաւորներից մէկին, որի անունն էր Սքաա՝ որ կը նշանակի հայր հասարակ անուն վանահայրների ու վանքերի առաջնորդների։

Եթէ Սեբէոսի Եւսեբիէոս հայ եպիսկոպոսին և նրան հետևող կրօնաւորներին ընդունենք հայ կրօնաւորների կարգում, այն ժամանակ պէտք է ասենք, որ Եւսեբիէոս լինելով խստակրօն մարդ՝ ոչ միայն իւր թեմի մէջ քաջալերել է կրօնաւորութիւնը, այլ ինքն էլ, հակառակ իւր եպիսկոպոսական ատաթանին, որ այն ժամանակ աշխարհիկ հոգևորականութեան կարգին էր պատկանում,

1) Փաւստոս Բիւզանդ գլխ. Զ. գլ. ԺԶ։

կրօնաւորական կեանք էր վարում, և կրօնաւորութիւնը համարում էր քրիստոնէական առաքինութիւններից առաջինը։ Նա բազմաթիւ հետևողներ ունէր, սակայն այդ հետևողները ոչ Պաւղոս Թեբայիդացու պէս մենաւոր, աշխարհուրաց և աշխարհից հեռացած ճգնաւորներ էին, ոչ Անտոն անապատականի պէս սկիթաբնակ միանձներ և ոչ Իլարիոնի ու նրա հետևողների պէս վանական միաբաններ էին։ Նրանք կրօնաւորի սքեմով, որ այն ժամանակ փիլիսոփայական (երևի Ստոյիկեան-խստակեաց) ձև էր կոչւում թափառական կեանք էին վարում, քաղաքներում ու գիւղերում ջոկ ջոկ ապրելով։

Եթէ յիրաւի, ս. Լուսաւորիչը Սեբաստիայից կրօնաւորներ բերեց, դրանք անշուշտ, Եւստաթէսին հետևողներից չէին, որովհետև, եթէ ոչ աւելի վաղ, ըստ ուսանողութեան՝ ս. Լուսաւորիչը Դ. դարի սկզբում 301—3 գնաց Կեսարիա ձեռնադրուելու և այնտեղից վերադառնալիս՝ Սեբաստիայից կրօնաւորներ բերեց. իսկ Եւստաթէսի գործունէութիւնը, որպէս հակուածի գէպ ի կրօնաւորութիւն, սկսւում է այդ դարի առաջին քառորդից, այսինքն ս. Լուսաւորչից յետոյ։

Կրօնաւորները, ինչպէս գիտենք եկեղեցական ատիճաններ չունէին. ս. Լուսաւորիչը իւր բերած կրօնաւորներից արժանաւորագոյններին կարգեց Հայաստանում քորեպիսկոպոսներ ու քահանաներ։ Այդ քորեպիսկոպոս և քահանայ կարգուած կրօնաւորները պէտք է որ հայազգէտ, ուսեմն և հայ լինէին, որ կարողանային հաւատի բերելու և հաւատը ամրապնդելու համար ժողովրդի լեզուով խօսել։

Ի՞նչ վարք ունէին Հայաստանի կրօնաւորները։— Փաւստոս Բիւզանդը տալիս է մեզ հայ կրօնաւորների վարքի նկարագիրը։ Դանիէլ ծերունու համար ասում է նա։

«Եւ բնակութիւն իւրոց (Դանիէլի) կայենիցն յանմարդի լերինս. այլ զոհաչութիւն մարդկան պիտոյից ոչ երբէք անիոյժ առնէր։ Միահանդերձ մաշկանափորսն սանդաղաւոր. եւ կերակուր իւր արմատք բանջարոց, եւ

գաւազան անգամ ընդ ինքեան ոչ ունէր: . . . Եւ կայեալք տեսչութեան իւրոյ, յորժամ յանապատաց ի շէնս իջանէր վասն գործոյ Աստուծոյ, ի գլխաւոր տեղիսն յեկեղեցեացն լինէր»[1]):

Զենոբ Գլակը Եպիփանի համար Կեսարու հայրապետի կողմից գրում է ս. Լուսաւորչին.

«*Զեփիրիան աշակերտ սրբոյն Անտոնի հաւանեցուցի գալ ի նոյն ինքնակեան տեղին, ունելով ընդ ինքեան քառասուն ընտիր արս* ճգնաւորս եւ խարազնազգեստս, *պարկեշտս վարուք, հրաժարեալս յաշխարհէս*»[2]:

Առաջին Գինդի և նրա հետևողների համար Փաւստոսը գրում է. «*Եւ էր Գինդս այս ի Տարօն գաւառէ, և յետ նորա էր գլուխ աբեղայից և վարդապետ միանձանց, և առաջնորդ մենակեցաց և վերակացու վանօրէից և ուսուցիչ ամենայն անապատաւորաց և տեսուչ ամենեցուն, որք միանգամ վասն սրբոյն Աստուծոյ* յաշխարհի էին մեկնեալ, ի յանապատս բնակեալ ի քարանձաւս ամրացեալք յայրս եւ ի ծերպս երկրի, եւ միահանդերձք, բոկագնացք, զգաստացեալք խոտաճարակք, ընդաբուստք, արմատակերք. զօրէն զազանաց ի լերինս շրջէին՝ լեշակամաշկօք եւ մորթօք այծենեօք. նեղեալք, տառապեալք եւ տարակուսեալք. յանապատի մոլորեալք. ի ցուրս եւ ի սօր, ի քաղց եւ ի ծարաւ վասն սիրոյն Աստուծոյ . . . զօրէն երամոց թռչնոց բնակեալ էին սոքա ի ծագս վիմաց, ի սրս քարանձաւաց, անինչք, անսաղուածք, դարմանոց անխնամք առանց ամենեին չտանել մարմնոց»[3]):

Այս հատուածի մի մասը Փաւստոսը փոխ է առել ս. Գրքից, միւս մասերում պատկերացնում է, առաջին՝ Գ. դարի հայ կրօնաւորների վարքը, և երկրորդ՝ կրօնական հատատուութիւնների տեսակները, այն է, աբեղայ, միանձն, մենակեաց վանական և անապատաւոր-

---

1) Փաւստոս Բիւզանդ գպր. Գ. գլ. ԺԳ.

2) Պատմէն Բ. և պատասխանի . . . եր. ԺԶ։

3) Փաւստոս Բիւզանդ գպր. Զ. գլ. ԺԶ։

Աբեղայ ընդհանուր առմամբ կրօնաւոր է նշանակում, այս անունը իրանց հետ Հայաստան բերին ասորի կրօնաւորները. միայնակեցի և միանձնի տարբերութիւնն այն է, որ միայնակեաց նշանակում է մարդկային ընկերութիւնից հեռացած բնաւին, որպէս Պաւղոս Թեբայիդացին. իսկ միանձն նշանակում է որոշ տեղում խմբուած, բայց առանձին առանձին խցերում ապրող կրօնաւոր. այս տեսակ հաստատութիւնը Եգիպտոսում կոչւում էր սկիթ կամ սկիտէ, որի հիմնադիրն էր Անտոն անապատականը. վանք և անապատ արդէն յայտնի են. առաջինում՝ կրօնաւորները միասին, մի հանրակեցարանում էին ապրում, իսկ երկրորդում անմարդաբնակ տեղերում ցրիւ և անյայտ։

Ե.

Հայ կրօնաւորութեան զեղծ կեանքը. Մեծն Ներսէս եւ Աշտիշատի ժողովը: Կրօնաւորական հաստատութիւնների տեսակները. Աշտիշատի կանոնների աղբիւրը: Ներսէսի բարեկարգութեան հետեւանքները «ծագումն հայ վանականութեան» ըստ Յ. Թորոսեանի: Աստուածպաշտութեան ժամերը:

Հաւանօրէն Հայաստանի կրօնաւորները մինչև Մեծն Ներսէս որոշ կարգ կանոն չունէին» Նրանք կամ ասորի խոտաճարակների պէս անմարդաբնակ տեղերում ցաք ու ցրիւ էին ապրում կամ Եւսեբիէոսի հետևողների պէս կրօնաւորի աքեմով գիւղերում ու քաղաքներում և հետզհետէ մոռանալով կրօնաւորութեան մաքուր կենցաղը զեղծ կեանք էին վարում։ Կրօնաւորութիւնը որոշ կազմակերպութիւն ստացաւ Դ. դարի Բ. կէսին Ներսէս մեծի հայրապետութեան օրով։

Ս. Ներսէս մեծը, որ 364 թուին հայրապետական գահ բարձրացաւ, հետևեալ 365 թուին Արշակ թագաւորի

հաւանութեամբ գումարեց Աշտիշատի ժողովը[1]։ Այս ժողովը շատ նշանաւոր է իւր սահմանած կանոններով, որոնք ընդգծում են քրիստոնէական առաքինութիւնները ընդարձակ չափերով, առաջնորդուած՝ մարդասիրական սկզբունքներով։

Ժողովի առաջին կանոնը արգելում է մերձաւոր ազգականների մէջ ամուսնութիւնը, որին դիմում էին մանաւանդ նախարարական տները իրանց ժառանգութիւնը իրանց տոհմի մէջ պահպանելու համար։ Երկրորդ կանոնը արգելում է ննջեցեալների վերայ հեթանոսաբար կոծանելը, պէս պէս ոճիրներն ու անկարգ գործերը։ Երրորդ կանոնը սահմանում է շինել քորոմների համար ուրկանոցներ, աղքատ հիւանդների համար հիւանդանոցներ և կաղերի ու կոյրերի համար անկելանոցներ. որովհետև փոխադրական և վարակիչ հիւանդութիւն ունեցողներին այդ ժամանակ քաղաքներից ու գիւղերից դուրս էին անում։ Չորրորդ կանոնը սահմանում է այրիանոցներ և որբանոցներ շինել, որովհետև անխնամ մնալով որբերը անձնատուր էին լինում դողութեան, իսկ այրիները՝ անկարգութեան։ Հինգերորդ կանոնը սահմանում է հիւրերի և օտարների համար քաղաքներում ու գիւղերում հիւրանոցներ հաստատել։

Երրորդ, չորրորդ և հինգերորդ կանոններով սահմանած բարեգործական և մարդասիրական հաստատութիւնները ապահովելու և նրանց պէտքերը հոգալու համար սահմանեց ստանալ կալուածներից, գիւղերից ու ապարանքներից՝ հաս, իսկ քաղաքներից՝ տուրք։

Մեր ձեռնարկութեան համար կարևոր է Աշտիշատի ժողովի վերջին—վեցերրորդ կանոնը. ահա այն.

«Վեցերորդ, կրօնաւորք այնր ժամանակի սկսեալ էին դատարկաշրջիկք լինել և ոմանք ի նոցանէ նստէին ի տունս աշխարհականաց ի քաղաքի. և բազումք հանապազօրեայ

---

1) Զամչ. Հայոց պատմ. հատ. Ա. գլ. ԽԳ. եր. 440—441։ Մով. Խորեն. գիրք Գ. գլ. Ի։ Փաւստ. Բիւզ. գրք. Դ. գլ. Դ։

ի դեօղս բնակէին Իբրև ի վանս։ Այսմ կամելով դարման տանել հրամայեաց (Ներսէս) շինել զերիս դաս բնակու�իթեան կրօնաւորաց յանապատ տեղիս. առաջին զեղբայրանոցս կամ վանս միաբանակեաց կրօնաւորաց (Իլլարիոնի պէս), երկրորդ՝ զմիայնանոցս, այսինքն այնպիսի վանս, յորում թէպէտ և բազումք բնակէին, բայց առանձին ճգնէին, երրորդ՝ զառանձնակեցեաց խրճիթս բազմաց (եգիպտացոց ակիմների պէս) և յամենայնի ի սոսա կարգեաց կանոնս»։

Մովսէս Խորենացին այս տեսակ կրօնաւորական հաստատութիւնները անուանում է եղբայրանոց, մենաստանք՝ յառկանձնակաց խրճիթ.—«Շինէ (Ներսէս) յանապատ և և յանմարդ տեղիս եղբայրանոցս և մենաստանս և յառկանձնակաց խրճիթս» [1]),

Խորենացին նոյն տեղում գրում է. «Մեծն Ներսէս... եկեալ ի Հայս զամենայն կարգս ուղղութեանց հարցն լուրց նորոգեաց, այլ և առաւել ևս. քանզի զբարեկարգութիւնն, զոր եռեռս ի յունաց աշխարհին, մանաւանդ ի թագաւորեալ քաղաքն, ի սմա նկարագրէ։ Ժողով արարեալ»....։ Այստեղ առանց առանձին յօդուածների յիշում է այն բոլորը, ինչ որ Աշտիշատի ժողովի անունով օրոշ յօդուածների է վերածուած։ Այսպիսով, ըստ մեզ, Աշտիշատի ժողովի կանոնների խմբագրութեան աղբիւրները եղել են Փաւստոս Բիւզանդ և Մովսէս Խորենացին։

Վանական և կրօնաւորական կանոնների մէջ մենք տեսնում ենք, որ Ներսէսը ծանօթ էր Անտոն անապատականին հետևող եգիպտական կրօնաւորների և ճգնաւորների, Իլլարիոնի հաստատած Պաղեստինի վանականների և ս. Բասիլի միայնակեացների կարգերի հետ։ Ներսէսի պէս մարդը ապրելով Յունաստանում, ընկեր լինելով ս. Բասիլ Կեսարացուն և Գրիգոր Աստուածաբանին, չէր կարող անտարբեր գտնուել դէպի քրիստոնէական այնպիսի հաստատութիւնները, որպիսիք են եղ-

---

1) Մով. Խոր. գիրք Գ. գլ. Ի։

բայրանոցները կամ համարնակների վանքերը, միայնանոցներն ու առանձնակեացները, որոնք, չենք սխալուի, եթէ ասենք քրիստոնէական եկեղեցու մէջ առաջին տեղն էին բռնում, որպէս բարեպաշտական հաստատութիւններ։ Ներսէսի բարեկարգութեամբ այս հաստատութիւնները ոչ միայն բարեպաշտական, այլ և մարդասիրական հաստատութիւն են դառնում որպէս ապաստանարան անկեալների, ասպնջարան օտարականների, պատսպարան աղքատների, տնանկների, որբերի և այրիների, և որպէս հիւանդանոց այնպիսի ախտաւորների, որպիսի են բորոտները, ուրուկները, ևն, որոնք մերժւում էին քաղաքներից ու գիւղերից իբրև վարակիչ հիւանդութիւն ունեցողներ։ Օտարերկրեայ նմանօրինակ հաստատութիւնների մէջ պակասում էր մարդասիրականը, և Ներսէսը դերադանցեց Հայաստանում բարեպաշտական հաստատութիւններին բարեգործական և մարդասիրական ուղղութիւն տալով, և որ գլխաւորն է, ապահովելով այդ հաստատութիւնները հաստատուն եկամուտներով։

Ներսէսը Կեսարիայում երբ ձեռնադրւում էր Եւսեբիոսից, ս. Բարսեղն էլ ներկայ էր ձեռնադրութեանը որպէս երէց։ Ներսէսը իւր ընկեր Բարսեղի վանական հաստատութիւնների հետ լաւ ծանօթանալով նոյնը ներմուծեց և Հայաստանում, որով Հայաստանի կրօնաւորներն ու վանականները թէ և ս. Բարսեղի հետևող կոչուեցին, որպէս և նկատուած է Հայոց եկեղեցու կառավարութեան համար սահմանուած ռուսաց օրինագրքում [1]) բայց այդ հետևողութիւնը արտաքին ձևով է. Բարսեղի վանքերի մէջ մենք տեսնում ենք բարեպաշտութիւն, բայց բարեգործութիւն ու մարդասիրութիւնը այսպէս կարգի և կանոնի վերածուած՝ չենք տեսնում։

Ներսէսը վանական և կրօնաւորական հաստատութիւնների վերայ հայր և տեսուչ է կարգում Շաղիտային, Եպիփանին, Եփրեմին և Գինդ Սկիւնուն [1])։ Իսկ մարդա-

---

1) Сводъ законовъ. томъ одинаицатый, часть I. յոդ. 1197

սիրական և բարեգործական հաստատութիւնների վերայ իւր սարկաւագապետ Խոդդին, «որ էր ի մարդաց Կարնոյ»։ Մովսէս Խորենացին Ներսէսի այս բարեկարգութեան նկարագրութիւնը վերջացնում է հետևեալ բառերով. «Եւ էր այնուհետև տեսանել զաշխարհս մեր ոչ որպէս բարբարոսս այլանդակեալս, այլ որպէս զքաղաքացիս համեստացեալս»։

Պ. Ց. Թօփճեանը «ծագումն հայ վանականութեան»[2]) յօդուածում ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ հայ եկեղեցին մեծ առընչութիւն ունէր Կապադովկիայի աթոռի հետ ս. Լուսաւորչի և նրա յաջորդներից մի քանիսի այնտեղ ձեռնադրուելով և այն ասանդութիւնը, որ ս. Լուսաւորիչը Կեսարիայից ձեռնադրուած վերադառնալիս հայ կրօնաւոր է բերել՝ կարծում է, որ հայ կրօնաւորութիւնը յունական ծագումն ունի։ Մենք աւելի համակարծիք ենք մեր միաբանակից Երուանդ սարկաւագին (այժմ վարդապետ) հայ կրօնաւորութեան ծագումն ասորական համարելով. որովհետև ճգնաւորութիւնն ու կրօնաւորութիւնը, հետը հաշուելով և վանականութիւնը, Եգիպտոսից հետզհետէ անցաւ Պաղեստին, Ասորիք և Հայաստանի սահմանով՝ Փոքր-Ասիա։ Փոքր-Ասիա ներմուծողն էր մեծն Բասեղ, երբ ըստ պատմութեան, կրօնաւորութիւնը Հայաստանում սկսել էր արդէն թուլանալ, զեղծ կերպարանք ընդունել, և մեծն Ներսէս հայրապետական աթոռ բարձրանալով առաջին գործը համարեց բարեկարգել կրօնաւորութիւնն ու վանականութիւնը Հայաստանում։

Առնելով Զենոբ Գլակից ընդհանրապէս ընդունած է կարծել, որ ս. Լուսաւորիչը Կապադովկիայից յոյն կրօնաւորներ բերեց, և այդ կրօնաւորներին կառավարելու համար հրահանգութիւն ստացաւ Կեսարիայի, իւր ձեռնադրող

---

1) Մով. Խորենացի գիրք Գ. գլ. Ի։

2) Լոյս շաբաթաթերթ. 9 ապրիլ. թ. 15։ 7 և 28 մայիսի թ.թ. 19 և 22. 1905 տարի։

Ղևոնդ հայրապետից[1]). սակայն որովհետև արդէն հաստատուած է, որ Զենոբը յետին ժամանակի գրիչ է, դժուար չէ համարձակօրէն ասել, որ նրա առաջ բերած հրահանգութիւնը խմբագրուած է մեծն Ներսէսի գումարած Աշտիշատի ժողովի կանոնների հետևողութեամբ։ Մեր պատմիչներից Ագաթանգեղոսը, Փաւստոսը, Մովսէս Խորենացին չեն յիշում, թէ ս. Լուսաւորիչը Կեսարիայից կրօնաւորներ բերեց, մինչդէռ ասորական ծագմամբ կրօնաւորների մասին են նրանք բաւական տեղեկութիւններ տալիս։

Ագաթանգեղոսը ս. Լուսաւորչի Կեսարիայից վերադարձը այսպէս է նկարագրում[2]). «Մեծաւ պատուով և թղթով և ժողովով զսուրբն Գրիգոր անդուստ (ի Կեսարիայէ) ուղարկեցին Իշխանօք հանդերձ, տուեալ ողջոյն։ Եւ յուղի անկեալ անտի շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ գային հասանէին ի քաղաքն Սեբաստացւոց, և անդ յեցան յերեկօթս՝ աւուրս ոչ սակաւս։ Եւ անդ տեսանէր բազմութիւն եղբարց՝ զորս հաւանեցուցանէր զնոսա ընդ իւր գնալ. զի վիճակեցուցէ զնոսա ի քահանայութիւն յիւրում աշխարհի»։

Այս հատուածից երևում է, որ ս. Լուսաւորիչը Սեբաստիայից է եղբայրներ, այսինքն վանականներ, բերել, որ նրանցից քահանաներ, այսինքն աշխարհիկ հոգևորականներ կարգի Հայաստանում։ Այստեղ Կապադովկիայի և այն ևս յոյն, կրօնաւորների մասին, խօսք չը կայ։ Սեբաստիայից բերած եղբայրները կարող էին ազգով հայ, ասորի և մասամբ յոյն լինել, որովհետև այդ քաղաքը համարուելով հանդերձ հայ եպիսկոպոսական աթոռ, գտնւում էր Հայաստանի, Ասորիքի և Փոքր Ասիայի սահմանի վերայ և խառն բնակչութիւն ունէր։ Մեր յիշած պատմիչները յոյն կրօնաւորների մասին լռելով գրում

---

1) Զենոբ Գլակ. պատճէն երկրորդ և պատասխանի թղթոյն սրբոյն Գրիգորի . . .

2) Ագաթանգ. 248.

ենն, որ ս. Լուսաւորչի աշակերտ Դանիէլ ծերունին ասորի էր [1]) սրա աշակերտ Շաղիտան նոյնպէս ասորի էր [2])։

Մենք չը գիտենք թէ պ. Ց. Թօփճեանը Ագաթանգեղոսի ո՞ր տպագրութիւնն է ունեցել ձեռքի տակ, որ գրելով. «Երբ Գրիգոր Լուսաւորիչը Կեսարիայէն վերադարձաւ, յոյն հոգևորականներու բազմութիւն մը բերաւ հետը», աղբիւր է ցոյց տալիս Ագաթանգեղոսի 101 էջը։ Եթէ այդ, մեր մէջ բերածն է, այդտեղ ոչ թէ «յոյն հոգևորականներու բազմութիւն» այլ մի յոյն հոգևորականի մասին ևս յիշատակութիւն չը կայ։ Գուցէ «Մեծաւ պատուով և թղթով և ժողովով . . .» խօսքերի մէջ ժողովով բառը հասկացել է «յոյն հոգևորականներու բազմութիւն մը»։ Սակայն այդ բազմութիւնը եթէ յոյն էլ լինէր, ժողովուած էր ս. Գրիգորին ուղարկելու և ոչ ուղեկցելու։

Հայաստանի կրօնաւորութեան վերաբերութեամբ միւս կէտերում մեր և պ. Ց. Թօփճեանի կարծիքների մէջ տարբերութիւն չը կայ, եթէ կայ էլ, աննշան է։

Կրօնաւորների աստուածպաշտութեան կամ ժամակարգութեան մասին Դ. դարում՝ ոչինչ որոշ չենք կարող ասել։ Հայերէն գիր ու գպրութիւն չը կար, ուրեմն ժամերգութիւնը հայերէն չէր կարող լինել, յունարէն էր և ասորերէն. Հայաստանը բաժանուած էր երկու մասի յունաց բաժնում բնականաբար գործեղ էր յոյն տարրը և յունական ազդեցութիւն, պարսկական բաժնում՝ ասորականը։ Հասարակաց աղօթքի ժամերի մասին գիտենք՝ որ առաւօտեան ժամերգութիւնը կար. Փաւստոսը ասում է (դպր. Գ. գլ. ԺԵ.) «Մինչդեռ առաւօտին աղօթքն մատչէին»։

---

1) Խոր. գիրք Գ. գլ. ԺԴ։ Փաւստ. Բիւզ. դպր. Գ. գլ. ԺԴ։

2) Փաւստ. դպր. Ե. գլ. ԻԶ։

ներով, ինքն ըստ ինքեան առաջ եկաւ նրանց քաղաքնե-
րում բնակուելու անյարմարութիւնը։ Հեռաւոր անա-
պատներում չէր կարելի առանձնանալ, որովհետև իբրև
եպիսկոպոս հոգևոր տեսուչ ժողովրդի հետ անընդհատ
յարաբերութեան մէջ էին. ուստի և քաղաքներից ոչ շատ
հեռու վանքեր հաստատուեցին, ուր և բնակուեցին եպիս-
կոպոսները։ Այս եպիսկոպոսանիստ վանքերը հնումն կոչ-
ուում էին մայրաքաղաք, վանք, մայրավանք, լաւրա։ Այս
սովորութիւնը Է. դարում համարեա կանոն դարձաւ և
մինչև ԺԸ. դարը հայ եկեղեցում գործադրուում էր որպէս
օրէնք։

Մենք գիտենք, որ կաթողիկոս ընտրող չորս արք-
եպիսկոպոսների աթոռները հաստատուած էին Այրարատ-
տեանը՝ Բջնու, Սիւնեացը՝ Տաթևի, Գուգարացը՝ Հաղբա-
տու և Շաւարշանինը՝ ս. Թադէոս առաքելոյ վանքերում։
Գաւառական եպիսկոպոսական աթոռներն էին Այրարա-
ծոտինը՝ Ամբերդի, Շիրականը՝ Հռոմոսի, Գառնունը Հա-
ւուց Թառի վանքերում։ Մեր նպատակից դուրս է բոլոր
եպիսկոպոսական վիճակները և աթոռանիստ վանքերը
թուել, որոնք բոլորն էլ քաղաքներից դուրս են, բայց
հեռու չեն։

ԺԹ. դարի սկզբին նորից եպիսկոպոսական աթոռ-
ները տեղափոխուեցին քաղաքները. դրա պատճառը ժո-
ղովրդի կարիքին անմիջապէս հասնելու պահանջն էր և
ժամանակի ձախորդ հանգամանքների բերմամբ՝ վանքերի
անշքանալն, աղքատանալն ու աւերակ դառնալը։

Միշտ տարակուսի առարկայ է եղել, թէ Ներսէս Գ.
Շինողը թողնելով Վաղարշապատի կաթուղիկէն, ու ս. կոյ-
սերի վկայականները է. դարում, ինչու է շինում Վաղար-
շապատից միայն 4 վերստ հեռաւորութեամբ առապարում
Զուարթնոց կոչուած եկեղեցին։ Այս տարակոյսը ես լու-
ծուած եմ համարում վերև յիշուած հանգամանքով և
հեռևեալ բացատրութեամբ։

Վարդանանց պատերազմից յետոյ երբ Վաղարշա-
պատն ու կաթուղիկէն աւերակ էին դարձել, Վահան

Զ.

Մինչեւ Ե. դարի Բ. կէսը եպիսկոպոսները ամուսնացած էին: Յեղափոխութիւն աշխարհիկ հոգեւորականութեան կեանքում: Ամուրի եպիսկոպոսների վանքերում հաստատելու պահանջները: Վաղարշապատի կաթուղիկէն եւ Սուրենայ անապատը: Հայ կրօնաւորութիւնը ըստ Ղազարի: Կրօնաւորութեան անկումն բարոյապէս: Լաւ կրօնաւորութիւն ի դէմս Թաթոյ եւ նրա խրատը:—

Մինչև Ե. դարի համարեա կէսը, ինչպէս ընդհանուր, նոյնպէս և Հայոց եկեղեցում եպիսկոպոսները ամուսնացած էին և կազմում էին աշխարհիկ հոգևորականութեան մասը՝ վարելով հոգևոր տեսչական պաշտօններ։ Իբրև բացառութիւն կային ամուրի եպիսկոպոսներ էլ, ինչպէս մեր ս. Աբրահամէան ու ս. Գրիգորիսը—ս. Լուսաւորչի որդին և թոռն, Պաֆնուտիոսը Եգիպտոսի Աղէքսանդրիայում և Եւստաթէոսը՝ Փոքր-Հայոց Սեբաստիայում։ Հայոց վերջին ամուսնացած հայրապետը ս. Սահակ Պարթևն էր, որ վախճանուեց Ե. դարի քառասնական թուերին և դուցէ Յովսէփ Վայոցձորեցին, որովհետև նրա համար մեր պատմիչները ասում են, որ «ի քահանայից էր»։ Ե. դարում ամուրիութիւնը բարձր հոգևորականութեան մէջ արդէն այնքան սովորական էր դարձել, որ նոր ամուսնացածները եպերանքի էին ենթարկւում, ինչպէս ս. Սահակի հակաթոռ Շմուէլը, Բրքիշոն և Սուրմակը, որոնց մեղադրում էին ի միջի այլոց ասելով, որ նրանք հայրապետանոցը լցրել էին կանանցով ու երեխաներով և նրանց աղդեցութեան տակ էին գործում։

Քանի որ եպիսկոպոսները ամուսնացած էին, իբրև աշխարհիկ հոգևորականներ, ապրում էին քաղաքներում. բայց երբ ամուրիութիւնը պարտաւորական կանոն դարձաւ և եպիսկոպոսները, նրբացնելով կրօնաւորների կոշտ աքեմը, հագան այդ աքեմը և շրջապատուեցին կրօնաւոր-

Մամիկոնեանը մոր կողմից լինելով ս. Սահակ պարթևի թոռն, իւր մօրենական պապերի դաստակերտի վերայ խնամք տանելով՝ Կաթուղիկէն վերաշինեց իւր սննդակից Ղազար փարպեցուն վերաշինութեան հոգաբարձ կարգելով. կաթուղիկէին մօտ կրօնաւորների մենաստան էլ շինեց, բնակեցրեց այնտեղ կրօնաւորներ ու նրանց վերայ վանահայր կարգեց նոյն Ղազարին։

Ասողկից [1]) առնելով՝ ոմանք կարծում են, որ Վաղարշապատի Կաթուղիկէն մենաստանի վերածուած ժամանակ Սուրենայ անապատ էր կոչւում։ Ասողիկը ասում է. «ի ժամանակս իշխանութեան իւրոյ (Վահան Մամիկոնեան) զմեծ Կաթուղիկէ եկեղեցին, որ ի Հայս, վերատին մեծապէս նորոգեաց զդաս կրօնաւորաց բազմացուցանելով,—որ Սուրենայ անապատ ասի. վերակացու նոցա կարգեալ զՂազար Փարպեցի ճարտասան և պատմագիր»։ Զաքարիա սարկաւագը կարծում է, որ Յովհաննայ վանքն է Սուրենայ անապատը։ Ըստ Զաքարիայի՝ Կարբու մօտ Յովհաննայ վանքը սկզբում կոչւում էր Սիւղի կամ Սուվի վանք, Սիւղին կամ Սուվին, փոփոխութեան ենթարկուելով հնչման կողմից կոչուեց Սուրենայ վանք, անապատ։ Ուրեմն, ըստ Զաքարիայի, Ղազարը Կաթուղիկէի վերաշինութեան հոգաբարձ լինելով էր միանգամայն Սուրենայ անապատ կոչւող Յովհաննայ վանքի վանահայր։ Այս անհաւանական կարծիքը հանդ. Շահխաթունեան Յովհաննէս եպիսկոպոսը մէջ բերելով դրական բան չի ասում, այլ աւելացնում է որ, ոչ թէ Կաթուղիկէն է Սուրենայ անապատ կոչուել, այլ այն մենաստանը, որ Վահանը շինեց իւր վերանորոգած Կաթուղիկէի մօտ [2])։

Ղազարը Ե. դարի վերջին գրելով [3]), որ Վահանը վերաշինեց Կաթուղիկէն ու ս. կոյսերի վկայարանները, որ

---

1) Սեպ. Տարոնեցւոյ պատմ։ Ս. Պ.բուրգ 1885 եր. 82։

2) Սարգիսեան էջմ. Ա. հատ. տպ. ի կաթղ. էջմ. 1842. 81—82։

3) Թուղթ Ղազարայ Փարպ. եր. 196. տող 31—32։

Իրանից երկու հարիւր տարի առաջ չինել էին իւր նախնիք, հաստատում է այն ազգային պատմական վաւերականութիւն ստացած աւանդութիւնը, թէ յիրաւի, ս. Գրիգոր Լուսաւորիչը Դ. դարի սկզբում չինել է այդ տաճարները։

Ղազարը, իբրև ժամանակակից պատմիչ և գլխաւոր գործիչ, չի ասում, որ Կաթուղիկէն կամ նրա մօտ չինուած մենաստանը կոչուել են Սուրբենայ անապատ։ Սուրբենայ անապատ անունը յիշում է միայն Ասողիկը Ժ. դարում, Ղազարից 5 դար յետոյ։

Մենք կարծում ենք, որ Կաթուղիկէն Ղազարի օրով Սուրբենայ անապատ չէ կոչուել. գուցէ այդպէս կոչում էր Ասողկի օրով, եթէ, «—որ Սուրբենայ անապատ ասի», միջանկեալ նախադասութիւնը յետին դրիչների աւելացութիւն չէ, որոնց օրով Կաթուղիկէն իբրև կրօնաւորների ապաստանարան, իւր անշքութեան ժամանակ Ը.—Ժ. և յետին դարերում կարող էր ճանաչուել իւր Սուրբէն անուանով վանահայրերից մէկի անուամբ։

Այս մեր ենթադրութիւնը հաւանական է դառնում և նրանում որ Ասողիկը գրում է «զմեծ Կաթուղիկէ եկեղեցին . . . նորոգեաց . . .,—որ Սուրբենայ անապատ ասի». «Նորոգեաց» անցեալ ժամանակին է պատկանում, «ասի» բացատրական նախադասութեան բայը՝ ներկային։ Թէ «որ Սուրբենայ անապատ ասի» նախադասութիւնը աւելացութիւն է, ցոյց է տալիս գրուածքի ոճը։ Ասողիկը գրելով, «զդասս կրօնաւորաց բազմացուցանելով», պէտք է անմիջապէս հետևցնէր «վերակացու նոցա կարգեալ զՂազար...», բայց տեսնում ենք ընդ միջում և միջանկեալ,—«որ Սուրբենայ անապատ ասի». բացատրական նախադասութիւնը ներկայ ժամանակով։

Մենք թոյլ տուինք մեզ, մեր նպատակից այս շեղումն, որպէս զի ցոյց տանք Սուրբենայ անապատի և Կաթուղիկէի առնչութիւնը. իսկ Կաթուղիկէն իբրև մենաստան նշանաւոր է մեր նպատակի համար, որովհետև այդ մենաստանի վանահայր էր իւր դարի նշանաւոր պատմիչ

Ղազար Փարպեցին, և վանահայր Ղազարը տալիս է իւր դարի կրօնաւորների բարոյական նկարագիրը։ Ղազարի օրով աւերակ Վաղարշապատում հնարաւոր էր մենաստան և կրօնաւորների բնակութիւն։ Անցաւ մօտ 2½դար. Վաղարշապատը, հաւանական է, սկսեց նորից շէնանալ, եթէ ոչ քաղաք՝ գոնէ մարդաշատ աւան դառնալ։ Վերաշինուեցին ս. Հռիփսիմէի և ս. Գայիանէի վկայարանները, Կաթուղիկէի փայտաձաձկ տանիքը փոխուեց. հոյակապ քարեայ կամարների վերայ բարձրացաւ վայելուչ քարեայ գմբէթ։ Կաթուղիկէն այլևս անապատ չէր, այլ ժողովրդական տաճար։ Ներսէս շինողը՝ որպէս նրբանկատ մարդ՝ անյարմար գտաւ բազմաթիւ կրօնաւորների քաղաքի կենդրոնում Կաթուղիկէի մօտ բնակութիւնը, քաղաքից բաւական հեռու առապարում շինեց Զուարթնոց եկեղեցին, այնտեղ բնակեցրեց երկրային զուարթուն կրօնաւորներին, որ աշխարհի հրապոյրներից հեռու՝ երկնային զուարթուններին նման կեանք վարեն։

Ներսէս Շինողի այս հեռատես գործողութիւնը ժամանակակից Սեբէոսը ուրիշ կերպ է բացատրում. նա ասում է, որ Ներսէսը Զուարթնոց եկեղեցին շինեց առապարում, որովհետև ըստ աւանդութեան Տրդատը մինչև այդտեղ ընդառաջեց ս. Լուսաւորչին, երբ նա, Արտաշատի Խորվիրապից աղատուած, վերադառնում է Վաղարշապատ։ Իսկ Սիմէոն կաթողիկոս երևանցին ԺԷ. դարում, կարծում է, որ Ներսէս Շինողը Զուարթնոց եկեղեցին շինել է նսեմացնելու համար կաթուղիկէի նշանակութիւնը, ուստի և ասում է. «Էր Ներսէս շինողն ի Տայք գաւառէ, ամս ի.։ Սա շինէ զսուրբն Գրիգոր խոշ Էջմիածնի, որ այժմ հանգուցեալ է» (Զամբռ տպ. ի ս. Էջմ. 1873. եր. 13)։ Իսկապէս Ներսէս Շինողը շինել է Զուարթնոց եկեղեցին Վաղարշապատում ապրող կրօնաւորներին այնտեղ բնակեցնելու համար։ Եւ Ներսէսի պէս խստակրօն, նրբանկատ և դիտուն մարդը ուրիշ կերպ էլ չէր կարող վարուել։ Աշտիշատի ժողովը, գումարուած 365 թուին Մեծն Ներսէսի ու Արշակ թագաւորի ձեռներեցութեամբ,

Ղաղար Փարպեցին, և վանահայր Ղազարը տալիս է իւր դարի կրօնաւորների բարոյական նկարագիրը։ Ղազարի օրով աւերակ Վաղարշապատում հնարաւոր էր մենաստան և կրօնաւորների բնակութիւն։ Անցաւ մօտ 2½դար. Վաղարշապատը, հաւանական է, սկսեց նորից շէնանալ, եթէ ոչ քաղաք՝ գոնէ մարդաշատ աւան դառնալ։ Վերաշինուեցին ս. Հռիփսիմէի և ս. Գայիանէի վկայարանները, Կաթուղիկէի վայտաձաձկ տանիքը փոխուեց. հոյակապ քարեայ կամարների վերայ բարձրացաւ վայելուչ քարեայ գմբէթ։ Կաթուղիկէն այլևս անապատ չէր, այլ ժողովրդական տաճար։ Ներսէս շինողը՝ որպէս նրբանկատ մարդ՝ անյարմար գտաւ բազմաթիւ կրօնաւորների քաղաքի կենդրոնում Կաթուղիկէի մօտ բնակութիւնը, քաղաքից բաւական հեռու առապարում շինեց Զուարթնոց եկեղեցին, այնտեղ բնակեցրեց երկրային զուարթուն կրօնաւորներին, որ աշխարհի հրապոյրներից հեռու՝ երկնային զուարթունների նման կեանք վարեն։

Ներսէս Շինողի այս հեռատես գործողութիւնը ժամանակակից Սեբէոսը ուրիշ կերպ է բացատրում. նա ասում է, որ Ներսէսը Զուարթնոց եկեղեցին շինեց առապարում, որովհետև ըստ աւանդութեան Տրդատը մինչև այդտեղ ընդառաջեց ս. Լուսաւորչին, երբ նա, Արտաշատի Խորվիրապից ազատուած, վերադառնում է Վաղարշապատ։ Իսկ Սիմէոն կաթողիկոս երևանցին ԺԷ. դարում, կարծում է, որ Ներսէս Շինողը Զուարթնոց եկեղեցին շինել է նսեմացնելու համար կաթուղիկէի նշանակութիւնը, ուստի և ասում է. «Տէր Ներսէս շինողն ի Տայք գաւառէ, ամս ի.։ Սա շինէ զսուրբն Գրիգոր խոշ Էջմիածնի, որ այժմ հանգուցեալ է» (Զամբռ տպ. ի ս. Էջմ. 1873. եր. 13)։ Իսկապէս Ներսէս Շինողը շինել է Զուարթնոց եկեղեցին Վաղարշապատում ապրող կրօնաւորներին այնտեղ բնակեցնելու համար։ Եւ Ներսէսի պէս խստակրօն, նրբանկատ և դիտուն մարդը ուրիշ կերպ էլ չէր կարող վարուել։ Աշտիշատի ժողովը, գումարուած 365 թուին Մեծն Ներսէսի ու Արշակ թագաւորի ձեռներեցութեամբ,

ուեցին։ Զընայելով, որ կրօնաւորութիւնը իւր բարոյականի կողմից այսպիսի անհաստատ դրութեան մէջ է եղել, բայց չկայ մի հաստատութիւն, որ չեղուելով իւր բուն նպատակից, կարողանար դիմանալ այնպէս, ինչպէս դիմացել է կրօնաւորութիւնը, թէև այլանդակուած։

Դէպի կրօնաւորութիւն հրապոյրը միշտ եղել է։ Հին դարերում կրօնաւորութիւն ընդունելով՝ ստրուկները ազատւում էին. կրօնաւորութիւն ընդունելով՝ ազատւում էին և զինուորութիւնից։ Անտուն, անտէր, անգործ, և օրական հացի կարօտ աղքատները կրօնաւորութեամբ ապահովում էին իրանց կեանքը և պատսպարան էին գտնում։ Կային մարդիկ էլ, և դրանք մեծ թիւ էին կազմում, որոնք առանց երկրաւոր նկատումների, միայն հոգեկան անդորրութիւն և հոգու փրկութիւն վաստակելու, երկնային արքայութեան համար թողնում էին աշխարհը իւր հրապոյրներով, բայց աւաղ, դրանցից մեծագոյն մասը կորցնելով երկրաւորը, երկնայինին էլ չէին հասնում։

Ղազար Փարպեցին, իբրև Կաթուղիկէի վերաշինութեան հոգաբարձ և այնտեղի աբեղաների ու կրօնաւորների վերակացու, շատ ախուր գոյներով է նկարագրում նրանց. որից երևում է որ հայ կրօնաւորութիւնն էլ բացառութիւն չէր կազմում ընդհանուր կրօնաւորութիւնից։

Ղազարը ասում է. «Եւ չիցէն արդեօք աբեղանդ «Հայոց արժանի ողբոց, արտասուաց և բազում սգոյ— «համբաւել զանպիտանս, խօսել առ նախանձու զանար- «ժանս[1]) . . . ի հաւատոյ և յուսամանէ տգէտք երևին, «ի գործս ծոյլք և անժոյժք. յորոց ըստ տգիտութեանն, «որ ի նոսա, և անկարգ ըստ վարուց՝ այդպիսի իսկ ար- «դարև աղանդոց վայել էր բուսանել, ըստ յօդուածոց «առասպելաբանութեան, թէ ըստ «խոզի հարանացելոյ «կոյակուր բաղանիք»[2])։

«. . . իսկ աբեղէնքս առ դառնաշունչ նախանձու, որ

---

1) Թուղթ Ղազ. Փարպ. եր. 190. տող 12—14։

2) Նոյն. եր. 163. տող 14—24։

«վիայեալ է ի սիրտս նոցա . . . ըստ ասացածի մարգա-
«րէին՝ «Ցղանան զցաւս և ծնանին զանօրէնութիւն . . .»
«Եթէ յանկարծ շնորհի բան ի մարդասիրէն՝ հեղձնուն
«ի նախանձուէ։ Եթէ տեսանեն զոք ի ժողովրդենէն, եթէ
«դովէ, ծաղր առնելով ամաչեցուցանեն։ Արդ լուել ինչ,
«ասեն, չդիտէ և ընդվայր աղաղակէ և քրքուի . . .»
«Նատին գլխարկեալք պատատեալ, որպէս համր, երեսօք
«որպէս առ հոտեալ դիական, պապանձեալ դև»[1]։

«. . . Երանելի փիլիսոփոսն Մովսէս, որ արդարև մինչ-
«դեռ էր ի մարմնի, ցանգ երկնային զօրացն էր քաղա-
«քակից. ոչ ապաքէն ի տեղւոջէ ի տեղի աբեղեանդ Հայոց
«հալածական արարին։ Ո՞չ զլուսաւորիչն և զոդիտահալած
«գրեանս նորա՝ առ անդիտութեան վաթապ-իկէս կոչէին
«և այլ բազում իրօք թշնամանեալ՝ յետոյ ապա յաղագս
«այլոց ամօթոյ՝ զխաբէական զեպիսկոպոսութիւնս*) նման
«գեղոյ մահու արբուցեալ սրբոյն հեղձուցին։ Որոյ ի ժամ

---

1) Թուղթ Ղազարայ Փարպ. եր. 200. տող 14—24։

*) Ըստ աւանդութեան Մովսէս Խորենացին իւր խորին ծերութեան ժամանակ Բագրեւանդի եպիսկոպոս կարգուեց։—Հայոց կրօնաւորներից հալածուած Մովսէսը, ծպտեալ գնում է Օշական, ջրաղացպանութիւն է անում և միևնոյն ժամանակ դպրութիւն անելով իւր մեծ վարդապետի գերեզմանի վերայ շինուած եկեղեցում, մխիթարութիւն գտնում։ Ժամանակի կաթուղիկոս Յովհան Մանդակունին, որ նոյնպէս ս. Մեսրոպի կրտսեր աշակերտներից էր և Մովսէսի ընկերը, Օշական է գալիս և ս. պատարագ մատուցանում իւր վարդապետի գերեզմանի վկայարանում. ծպտեալ ջաղացպան Մովսէսը դպրապետ է կանգնում և յօրինելով երգում է «Ընտրեալդ յԱստուծոյ. ով երջանիկ սուրբ քահանայ» մեղեդին։ Հիանում է հայրապետը երգի իմաստով և դաշնակաւորութեամբ. յանձին ջրաղացպանի ճանաչում է իւր ընկեր և աշակերտակից Մովսէս Խորենացուն, կարգում է նրան Բագրեւանդի եպիսկոպոս։

Ղազարը գրելով «յաղագս այլոց ամօթոյ զխաբէական զեպիսկոպոսութիւնս նման գեղոյ մահու արբուցեալ սրբոյն հեղձուցին», ակնարկում է այն հանգամանքը, որպէս թէ առ ամօթոյ ձեռնադրելով եպիսկոպոս, նրա բողոքի ձայնը կտրեցին, խեղդեցին։
Ղազարի այս գրուածքից երևում է, որ Մովսէսը իրանից առաջ է

թէ Մովսէս Խորենացուց քաղուածօրէն բերինք, որ ընթերցողները իսկական աղբիւրից առնեն իրանց ծանօթութիւնը՝ թէ դրանք,—Ղազարն և Խորենացին ինչ հանգամանքում՝ ինչ տրամադրութեամբ են գրել. և հայ կրօնաւորութիւնը դատելիս՝ որոշ չափ պահենք և վերապահութեամբ ընդունենք Ղազարի և Խորենացու տուած փաստերը։

Ըստ մեզ, ինքն—Ղազարը—ենթարկուած լինելով աբեղաների քամահրանքին, անպայման անաչառ ամբաստանող չէ, իբրև շահագրգռուած մարդ. անշուշտ, նրա գրուածքի մէջ կիրք կայ։

Ղազարի գրուածքից երևում է, որ նա կրակոտ, անհանգիստ, դիւրագրգիռ, միշտ բողոքող, միայն իրան անմեղ ճանաչող մարդ էր։ Այդպիսիները գործի մարդ չեն. իրանց եռանդը, տաղանդը, եթէ ունեն, սպառում են միայն ուրիշներին դատափետելով, ուրիշների ատածներին, արածներին չը հաւանելով, անցկացնելով և սեւացնելով իրանց օրը ուրիշներին խծբծելով։ Այժմ ևս պակաս չեն այդպիսիք և Ղազարը այդպիսիներից մէկն էր. նա մեզադրում է իւր հովանաւոր Վահան Մամիկոնեանին էլ, Յովհան կաթուղիկոս Մանդակունուն էլ։ Առաջինը՝ հայ իշխանների մէջ՝ ամենից քաջը, խելացին և քաղաքագէտն էր. երկրորդը հայրապետների մէջ նոյն յատկութիւններով օժտուածը։ Եւ այդ ինքն Ղազարն է ասում իւր պատմութեան մէջ։

Ղազարը իրան արդարացնելով կրօնաւորների բացասական յատկութիւնները նկարագրելիս՝ երկու երեք բառով ներկայացնում է հայ կրօնաւորների քաղաքացիական վիճակը. նա ասում է. «պարեգօտաւորք աղատեալք են ի Քրիստոս»[1]։ Այս գրում է նա Վահանին՝ կամենալով հասկացնել նրան, որ եթէ ինքն ժամանակին նրա ծառան ու սուրուկն է եղել, այժմ, իբրև պարեգօտաւոր կամ

1) Թուղթ Ղազար Փարպ. եր. 188. տող 5—6։

թէ Մովսէս Խորենացուց քաղուածօրէն բերինք, որ ընթերցողները իսկական աղբիւրից առնեն իրանց ծանօթութիւնը՝ թէ դրանք,—Ղազարն և Խորենացին ինչ հանգամանքում՝ ինչ տրամադրութեամբ են գրել. և հայ կրօնաւորութիւնը դատելիս՝ որոշ չափ պահենք և վերապահութեամբ ընդունենք Ղազարի և Խորենացու տուած փաստերը։

Ըստ մեզ, ինքն—Ղազարը—ենթարկուած լինելով աբեղաների քամահրանքին, անպայման անաչառ ամբաստանող չէ, իբրև շահագրգռուած մարդ. անշուշտ, նրա գրուածքի մէջ կիրք կայ։

Ղազարի գրուածքից երևում է, որ նա կրակոտ, անհանգիստ, դիւրագրգիռ, միշտ բողոքող, միայն իրան անմեղ ճանաչող մարդ էր։ Այդպիսիները գործի մարդ չեն. իրանց եռանդը, տաղանդը, եթէ ունեն, սպառում են միայն ուրիշներին դատափետելով, ուրիշների ատածներին, արածներին չը հաւանելով, անցկացնելով և սեռցնելով իրանց օրը ուրիշներին խծբծելով։ Այժմ էլ պակաս չեն այդպիսիք և Ղազարը այդպիսիներից մէկն էր. նա մեղադրում է իւր հովանաւոր Վահան Մամիկոնեանին էլ, Յովհան կաթուղիկոս Մանդակունուն էլ։ Առաջինը՝ հայ իշխաններին մէջ՝ ամենից քաջը, խելացին և քաղաքագէտն էր. երկրորդը հայրապետների մէջ նոյն յատկութիւններով օժտուածը։ Եւ այդ ինքն Ղազարն է ասում իւր պատմութեան մէջ։

Ղազարը իրան արդարացնելով կրօնաւորների բացասական յատկութիւնները նկարագրելիս՝ երկու երեք բառով ներկայացնում է հայ կրօնաւորների քաղաքացիական վիճակը. նա ասում է. «պարեգօտաւորք աղատեալք են ի Քրիստոս» [1])։ Այս գրում է նա Վահանին՝ կամենալով հասկացնել նրան, որ եթէ ինքն ժամանակին նրա ծառան ու ստրուկն է եղել, այժմ, իբրև պարեգօտաւոր կամ

1) Թուղթ Ղազար Փարպ. եր. 188. տող 5—6։

կրօնաւոր՝ ազատ է. ուրեմն և Վահանը իրաւունք չունի նրա հետ, որպէս ստրկի հետ վարուելու։

Ղազարը իւր պատմութեան մէջ ջոկ մարդ է, թղթի մէջ՝ ջոկ։ Թղթի մէջ բացի իրանից բոլորը վատ են և խաւար, մինչև անգամ իւր հովանաւոր Վահան Մամիկոնեանը և Յովհան Մանդակունին, որոնք պատմութեան մէջ լաւ և լուսաւոր են, որոնցով նա ոգևորւում է։ Եթէ այս լուսաւոր և լաւ մարդիկն էլ հալածիչների կարգումն են, կը նշանակի Ղազարն էլ շատ անմեղ գառն չէր, և եկեղեցին չէ յիշում նրան իւր սրբերի կարգում։

Ղազարը անգոսնում է հայ հոգևոր վարչութիւնը, որովհետև, մինչ պարսիկներն անգամ եպիսկոպոս էին ձեռնադրում, ինքն ոչ միայն եպիսկոպոս, այլ քորեպիսկոպոս էլ չէր [1])։—Նա մոռանում է, որ կրօնաւորները իրաւունք չունէին եկեղեցական աստիճաններ ստանալ. նա մոռանում է, որ եպիսկոպոսը պարտաւոր է հեղ, խոնարհ լինել. մինչդեռ Ղազարը ըմբոստ և ամբարհաւաճ ոք է հանդիսանում նոյն իսկ իւր գրուածքով։ Եպիսկոպոսութեան ձգտող կրօնաւորը փառասէր և կենցաղասէր պէտք է լինի. և Ղազարը այդպիսի ոք էր։ Ղազարից դատապարտուած կրօնաւորները այդպէս էլ համարում էին ու ասում. «գամ մի պիղծ ոք է և չարագործ Ղազարայ վանք անդ են. և սիրէ զնոսա» [2])։

Որքան և Ղազարի և Խորենացու կրքոտ նկարագրութիւնը համարենք հետևանք այն հալածանքին, որին նրանք ենթարկուած էին հայ կրօնաւորների կողմից, բայց այնու ամենայնիւ դրանց մէջ կայ որոշ, և արդէն ուրիշ աղբիւրներով հաստատուած ճշմարտութիւն. ինչպէս բոլոր ազգերի, նոյնպէս և հայոց աբեղաները, կրօնաւորները և պարեգօտաւորները նախանձոտ, անբարեացակամ, տգէտ, խմաստութիւն և գրքեր ծաղրող, գիտուններին հալածող, զրպարտիչ, անուանարկող և չարախնդաց մարդիկ են եղել։

---

1) Նոյն եր. 193։

2) Թուղթ Ղազ. Փարպ. եր. 195։

Ինչպէս ընդհանուր, նոյնպէս և հայ խստակրօնները նեղ-սիրտ անհամբեր, դժուժ, դիւրագրգիռ, ամբարհաւաճ, փարիսեցական բարեպաշտութեան արտաքին ձևերով պանծացող և ուրիշների թերթև զանցառութիւնը խոշորացնելով հռչակող ու դատափետող մարդիկ են եղել։ Այս անում էին նրանք՝ իրանք փառաւորուելու և ուրիշին անուանարկելու համար։ Դեռ նախնիք ասել են. միս ուտելը մեղք են համարում, բայց եղբայրներին հանապազ գիշատելիս (բամբասանքներով ու զրպարտութիւններով) չեն խղճահարւում։

Մի Ղազար, որի մասին կրօնաւորները ասում էին, «Մանուկ մի հոգաբարձ տեղւոյդ չկարէ առնել»[1]) թող այլ ամբաստանութիւնները. և մի Մովսէս Խորենացի, որի գրուածքները «փաթաղ—իկէս էին կոչում կրօնաւորները հեգնելով, կարող էին ամբողջ հայ կրօնաւորութիւնը սևացնել։ Բարեբաղդաբար աւանդութիւնը տալիս է մեզ Ե. դարի լաւագոյն կրօնաւորների նկարագիրն էլ յանձին ս. Սահակի և Մեսրոպի աշակերտ Թաթուլի ու Վարոսի[2]), որոնք իրանց հետևողներով Վարդանանց պատերազմից յետոյ առանձնանում են Գաբեղեան գաւառի սահմանում, Կաղզուանից ոչ հեռու, Վիշապաձորի քարանձաւների մէջ։

Թէ լաւ վանահայրը ինչպէս պէտք է կառավարի իւր միաբաններին, ինչ է նրա պարտքը։ Վանականները ինչպէս պէտք է վերաբերուեն դէպի իրանց վանահայրը և ինչպէս կենցաղավարուեն՝—տեսնում ենք ս. Թաթուլի խրատի մէջ, որ ըստ աւանդութեան՝ ասել է նա, երբ ծերութեան պատճառով հրաժարւում էր վանահայրութիւնից և առաջարկում, որ կրօնաւորները Թումասին ընտրեն վանահայր։

Թաթուլը ժողովելով եղբայրներին—կրօնաւորներին—պատուիրում է, որ Թումասին ճանաչեն հասարակաց հայր

---

1) Թուղթ. Ղազ. Փարպ. եր. 197։

2) Վարք Սրբոց հատ Է. եր. 22—23։

և ամեն բանում հնազանդ լինեն—թէ Տէրոջը ծառայելիս և թէ միմեանց սիրելիս։ Թումասին էլ առաջ կոչելով աւանդում է նրան կրօնաւորական կարգի կանոնները և պատուիրում, որ նա էլ իբրև միաբանութեան առաջնորդ՝ երկայնամիտ, ողորմած լինի, որ կարողանայ շահել եղբայրներին։ Ինչպէս անունով հայր ու առաջնորդ է, գործով էլ առաջնորդ հանդիսանայ։

Աւելորդ չենք համարում քաղուածօրէն աշխարհաբառ մէջ բերել Թաթուլի խրատը [1]) առ Թումաս, որը, որքան և պատմական հաւաստիք չունենայ, այնուամենայնիւ իւր մէջ ամփոփում է լաւ կրօնաւորութեան և լաւագոյն վանահայրութեան իսկական պատկերը։ Այդ խրատը ամփոփումն է այն մտքերի, որ արտայայտել են նշանաւոր հայրերը և որոնք գտնւում են Հարանց վարքի մէջ Ներսէսի և ուրիշների անունով։

Թաթուլը վանահօր պարտքը այսպէս է որոշում.

«Հաստատակաց հայր ես, հայրաբար վարուիր։ Ամեն բարեձևութեան օրինակ հանդիսացիր եղբայրներին։ Ուսուցանելով խրատիր, սիրով մխիթարիր. յուսով դարմանիր։

«Որդեակ, ինչ որ եղբայրներիցդ պահանջում ես, առաջ դու կատարիր։ Քիչ խօսիր. արդիւնք շատ ցոյց տուր։ Թող գործդ լինի քարոզող։

«Առաջնորդը ծնող է ու բժիշկ. հիւանդը կարօտ է սիրոյ և առողջութեան։ Որդեակ, նրան, որ պատահաբար է սխալւում և ոչ սովորաբար, մի պատժիր, այլ հոգևոր ցաւակցութեամբ բժշկիր։ Մանկագոյններին հնազանդութեան և աշխատասիրութեան վարժեցրու, ծերերին սորվեցրու սաղմոսերգութեան, ձեռքի վաստակի և մանուկների համար բարի օրինակ լինելու։

«Հոգևոր առաջնորդը աստուածային հուր է—լուսաւորող, մաքրող և ջերմացնող։ Նա պէտք է ապականարար ախտը այրի, դիճութիւնը ցամաքեցնի և կրօնաւորական

---

1) Վարք Սրբոց հատ. Է. եր. 26—32։

կարդով քննի. և սակաւ պէս զտելով՝ անաղարտ սրբութեամբ եղբայրներին Աստուծոյ ընծայի, որ ինքն էլ տասն քաղաքների վերայ թագաւորի։

«Կրօնաւորները միս և գինի չը պէտք է գործածեն. նրանք միայն պէտք է գործ ածեն, որոնց անհրաժեշտ է։ Պէտք է ժուժկալ լինեն՝ որքան հարկաւոր է, յուսով աղօթեն, հաւատով աշխատեն և գոհ սրտով ճաշակեն։

«Որդեակ, բերանիցդ նզովք դուրս չգայ։ Խրատը բարկութեամբ չը խօսես՝ որ սխալուած եղբայրը խրատի տատկութիւնից չընկղմուի։ Աղօթելու տեղը հասնելիս՝ երեք կամ աւելի անգամ ծունր դիր, գետնատած Աստուծոյ օգնութիւնը խնդրիր, և ապա սկսիր պատշաճի տաղմոսը։ Մի պղտորիր սրտիդ խորհուրդը։ Շատախօս մի լինի. ձեռքդ մի շարժիր։ Դէպի արևմուտք մի դառնար. աչքդ պարարելու համար շուրջդ մի նայիր։

«Որդեակ, եղբայրներիդ հետ իշխանութեամբ մի վարուիր. և ինչ որ դու չես կարող ասել՝ մի պահանջիր եղբայրներիցդ։ Ցեղ մէկ մէկ չուղարկես, այլ երկու երկու, եթէ մէկը գլորի, ով կըլինի կանգնեցնող։ Եթէ եղբայրներից մէկը ախտանոյ հոգով, թէև շատ բժշկութեան պէտք լինի, միայն սրբութիւնը արգելիր (միայն հաղորդուիլը արգելիր), միւս կարդերը եղբայրների հետ թող պաշտի։ Երկիւղածը սիրուց աւելի կը պատկառի քան պատուհասից։ Զգեստը լինի, ինչպէս որ պատահի, և այնչափ, որ վտանգի առաջը առնի։ Պատարագի և միւս ժամերգութեանց ժամանակ մարմնաւոր կամ ձեռքի աշխատանքը դադարեցրու։

«Որդեակ, երբ եղբայրներիդ մէկը ատահակում է, մի թողնիր որ կորչի. նրա չար վարքին և առելի գործերին համբերիր, ինչպէս որ համբերում է քո պարզ հոգին՝ մարմնիդ, ախտակից լինում։ Բաւական չէ միայն համբերելը, օգնիր, որ զգաստանայ։ Առանձին յանդիմանիր, ծերերի առաջին՝ ազաչիր, եղբայրների մէջ՝ խրատիր. գուցէ դառնայ իւր ատահակութիւնից։ Երկիւղածին մե-

ծարիր. ստահակին՝ խրատիր. պահանջիր՝ որ առաւօտ երեկոյ խոստովանեն։

«Արդեւնիր ծաղրը, կատակը և ցոբաբանութիւնը։ Մանուկներ մի՛ ժողովիր, թէ չէ՝ շուտով կը յաղթուես»։

Ս. Թաթուլի, Վարոսի և Թումասի յիշատակը տօնում է եկեղեցին հոկտեմբեր ամսում ս. Գրիգորիսի Աղուանից կաթուղիկոսի նշխարաց գիւտի տօնին՝ եօթն խոտաճարակաց հետ։

Է.

Թանահատի վանք եւ Սիւնեաց աշխարհի կրօնաւորութիւնը. Սեւանի անապատ. Տաթեւի մօտի անապատը. Մաքինոցաց եւ Թեղինեաց անապատները: Վանականութեան եւ կրօնաւորութեան անկումն: Կրօնաւորների մասին կանոններ. Ամփոփումն:

Թ. դարից սկսած կրօնաւորութիւնը սաստիկ զարգանում է և մեծ ծաւալ է ստանում Սիւնեաց աշխարհում։ Գլխաւոր անապատներն էին Սեւան, Մաքինոցաց անապատը և Թանահատի վանքը։

Ստեփաննոս Օրբելեանը ասում է [1]), որ ինքն Թանահատի արձանագրութիւնների մէջ տեսել է, որ Թանահատի եկեղեցին շինուել է Սիւնեաց իշխաններից հայոց թուականից 400 տարի առաջ, Ս. Ստեփաննոս Նախավկայի անունով։ Այս հաշուով Թանահատի վանքը շինուել է 151 թուին Փրկչի։ Այդպիսի բան չէ կարող լինել։ Այդ ժամանակ վանքերի մասին դաղափար անգամ չը կար։

Վանքերի սկզբնաւորութիւնը Դ. դարից առաջ չէ. սուրբերի անունով եկեղեցի Դ. դարից առաջ չէր կարող շինուել։ Թուականի վերաբերութեամբ շփոթութիւնը ակներև է. կամ այն է, որ Օրբելեանը իրան յատուկ

---

1) Ստեփ. Օրբելեան. նատ. Ա. Փարիզ. 1859 թ. եր. 203—4 գլ. ԼԴ։

ենապապարծութեամբ կամեցել է Սիւնեաց երկրի կրօնաւորութիւնը հասցնել մինչ Բ. դարը, կամ այն՝ որ Հայոց 400=Ն. համարել է այդ թուականից առաջ նշանակող թուական։ Հայոց Ն. թուականը զուգընթաց է Ժ. դարին, երբ Բագրատունիք՝ Շիրակում և Սիւնեաց իշխանները իրանց երկրում ոգի ի բռին վանքեր ու եկեղեցիներ էին շինում։ Անշուշտ, այդ ժամանակ էլ շինուել է Թանահատի վանքը, որ այժմ կոչւում է Ղարավանք (սև վանք), համանուն թուրք գիւղում, սրբատաշ սև կարծրաքարից շինուած մի մատուռ, այժմ կիսաւեր։

Օրբելեանի նկարագրութեամբ Թանահատի վանքը եղել է լեռան ստորոտում, մի բարձրավանդակի վերայ, անտառի մէջ։ Այժմ անտառ չը կայ։ Արդեազի ս. Խաչ հռչակաւոր ուխտատեղից 2 վերստաչափ հեռաւորութեամբ դէպ արևմուտք լեռնալանջի վերայ, շրջապատուած թուրք մի քանի խրճիթներով քարքարոտ ափափանների և աւերակների մէջ բարձրանում է Թանահատի վանքը լքեալ և աւեր։

Օրբելեանը այս վանքի կրօնաւորների կեանքը նկարագրելիս՝ ասում է[1]). «Եւ էին սահմանաւորք, մշտապաշտօնք հեռացեալք յամենայն փափուկ կերակրոց. միայն աշտուճ հացիւ և լոկ ջրով վճարէին զպէտս իւրեանց և զայն՝ յաւուրն մի անգամ ընդ երեկս. լռիկք, հեզաշարժք, որ իբրև զկանթեղունս անշէջս կախեալք լինէին յաղօթս զցայդ և զցերեկ . . . պաշտօնք իւրեանց ոչ երբէք խափանէին զցայդ և զցերեկ։ Եւ բաց ի սպասաւորացն ընդ դրունս վանիցն ոչ ոք ելանէր արտաքս. և թէպէտ բազում անգամ հարկեցան յիշխանացն և յեպիսկոպոսաց Սիւնեաց՝ ոչ առին յանձն ի կիւրակէքն ի թան կամ ի պանիր կամ յիւղ խթիլ. այլ բանջարօք և ընդոմ շատանային, վասն որոյ Թանահատաք կոչեցան։ Եւ ի գլխաւոր տօնսն ի ձիթոյ ճաշակէին և սակաւ բաժակօք. և զայս ծանոյց մեզ պատմութիւն երանելւոյն Մաշտոցի, որ ի Սևան»։

---

1) Սաեփ. Օրբ. գլ. ԼԴ.

Երանելի Մաշտոցը ապրում էր Թ. դարում, ուրեմն այս նկարագիրը վերաբերում է այդ ժամանակի և դրանից առաջ կրոնաւորական կեանքին, որին հետևող եղան թանասատի կրոնաւորները։

Սիւնեաց բազմաթիւ անապատներից չէն է մնացել միայն Սևանի անապատը։ Աւանդութեամբ [1]) այս կղզում կրոնաւորութիւնը սկսուել է ս. Գրիգոր Լուսաւորչից, որը կառուցել է, այժմ բոլորովին աւերակ, ս. Յարութեան տաճարը։ Սակայն այս աւանդութիւն է։ Պատմիչների համեմատ Սևանում կրոնաւորութեան սկիզբը դրել է Թ. դարում Մաշտոցը, որ և համարւում է առաջին վանահայր։ Ասա իս, եթէ կրոնաւորութիւնը ս. լուսաւորչից չէ սկսուել Սևանում, բայց Մաշտոցից. այսինքն Թ. դարից, առաջ կար։ Պատմութիւնը անյիշատակ թողնելով ինչ որ առաջ էր, անշուշտ նշանակելի բան չը գտնելով, առաջին անգամ յիշում է Մաշտոցին, որ հռչակ էր ստացել իւր մաքուր կրոնաւորութեամբ, ս. Գրոց հմտութեամբ, և ծիսարանի կարգաւորութեամբ, որ իւր անունով Մաշտոց է կոչւում։

Հանգուցեալ Յովհաննէս եպիսկոպոս Շահխաթունեանցը [2]) Սևանի անապատականների կենցաղը համարում է հետևողութիւն ս. Բասիլեի կանոնին. և, քաղելով—«Տեսութիւն գրոցն Փիլոնի, որ տեսական անուանի, այսինքն միակեցաց»—գրուածքից՝ ասում է, որ երբ հրէաները Երուսաղէմի առաջին եպիսկոպոս ս. Յակոբը առաքեալին սպանեցին և հալածեցին հաւատացեալներին, սրանք փախան Եգիպտացոց կողմերը և բնակուեցին Սինա լեռան և Թեբայիդի անապատներում. «և անդ կային այնպիսի վարուք, զոր պատմէ սքանչելին Փիլոն, զոր և հրեշտակաց համեմատ ցուցանէ ի մաքրութեան՝ յասելն. տուն էր նոցա երկիրս և ձեղունք՝ երկինքն, և ջահ և ճրագ՝ արեգակն, լուսին և աստեղք, և կակուղ անկո-

---

1) Ստորագրութիւն հատ. երկ. յօդ. 522. եր. 217.
2) Ստորագր. հատ. երկ. յօդ. 522. ծանօթութիւն։

զինք՝ երկիրս. քնոյ ժամանակ և ոչ երբէք. այլ անդադար կային զոհս և զգիշեր ի հակումն փառաբանութեան Աստուծոյ»։ Այս կրօնաւորական կեանքին հետևող պէտք է լինէին Սևանի կրօնաւորները, որոնք ս. Բարսեղի կանոնին համեմատ «Միակրօնք ի տան Աստուծոյ եղեալ յամենայն դէպս ընկերութեան. և յօրէ անտի (ի ժամանակէ Մաշտոցի) և այսր տևեաց այն հաստատութիւն ուխտի կրօնաւորական կենաց յայս կղզի և յայլ ինչ ինչ վենատանս Հայաստան աշխարհի»։ Առաքել վարդապետ Սիւնեցի իւր «Սահմանաց լուծման» մէջ ասում է. «կշռապէս արդարութիւն ի վանորայս լինի ի միաբանատանն, որք ըստ սրբոյն Բարսեղի կանոնացն միաբան լինին ամենայն ինչ. այսինքն, կերակուր և հանդերձ միապէս տան ամենեցուն, կշռողապէս, միաչափ մեծի և փոքու՝ հանդերձ և կերակուր և ամենայն ինչ»։

Կրօնաւորներ ու անապատականներ եղել են Տաթևի վանքին մօտ Անապատ կոչուած տեղում, որը շատ կարճատև եղաւ։ Թեղենեաց ու Մաքենացոց անապատները ԺԱ.—ԺԳ. դարերում մեծ հռչակ ունէին. Կիլիկեցիք կամենալով կրօնաւորութիւնն ու ասուածպաշտութեան կարգը իրանց գաղթավայրում հաստատել, սրանց էին դիմում։

ԺԷ. դարի սկզբում վերջին թափով սկսում է կրօնական եռանդ Մովսէս Խոտանանցու և Փիլիպպոս Աղբակեցու ջանքերով, երբ սրանք դեռ երիտասարդ էին։ Այնուհետև սկսում է հայ կրօնաւորութեան ու վանականութեան անկումն իբրև բնական հետևանք Շահ-Աբաս Մեծի արշաւանքի և մեծ դաղթականութեան, երբ երկիրն ու վանքերը աւերակ մնացին, խանգարուեցին կարգերն ու կանոնները։ Բազմաթիւ վանքերից ու անապատներից շէն են մնացել միայն մի քանի հատ, որոնք սակայն իրանց սկզբնական նպատակից բոլորովին հեռացած, այլ էլ հրեշտակական վարքով կրօնաստաններ չեն.—փոխանակ ամեն ինչ հասարակաց լինելու՝ ջոկ ջոկ է,—թէ կերակուրը թէ հանդերձը.

Կրօնաստաններ մնացել են ռուսաց Հայաստանում Սևանայ անապատը Սևանայ լճի մի կղզու վերայ, Տաճկաց Հայաստանում՝ Աղթամար, Կտուց, և Լիմ անապատները Վանայ ծովի կղզիների վերայ։ Վերջիններս իրանց կանոնները ընդօրինակել էին Սևանից և սևանեցոց պէս էին կենցաղավարում։

Նոյն իսկ կղզիների վերայ այս անապատներում վանականները այլ ևս կրօնաւորներ չեն. թէ կենցաղավարութիւնը և թէ աստուածպաշտութեան կարգերը նմանացրել են աշխարհիկ եկեղեցականներին ու եկեղեցիներին։

Մայրավանքերում, որպիսի է Էջմիածինը, Երուսաղէմի ս. Յակոբեանց վանքը, աւելի պաշտօնավարող անձինք են պատրաստւում ու ապրում քան վանականներ. ուսումնական, տնտեսական և վարչական գործերը քիչ ժամանակ են թողնում կրօնաւորական պարտաւորութիւնների կատարման համար։ Հասարակ վանքերը այնքան աղքատացել և անշքացել են, որ հազիւ կարողանում են բաւարարել մի վարդապետի. միաբանութիւն չկայ, ուր չկայ միաբանութիւն՝ այնտեղ չի կարող լինել վանականութիւն և կրօնաւորական կեանք։



Ա. ԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱՆՈՆՆԵՐ.

1) Անապատականները իրաւունք չունեն եկեղեցու ս. խորհուրդները ժողովրդին մատակարարել. (Ա. ժող. Վաղարշապատում գումարուած 325 թ. յօդ. Ի.)։

2) Ճգնութեան համար իւր կինը թողնող մարդը նզոված է, (նոյն յօդ. ԻԴ.)։

3) Եղբայրանոցները, Մենաստանները և առաձնակեացների խրճիթները անապատներում պէտք է լինեն. (Աշտիշատի ժողով յօդ. Զ.)։

4) Կրօնաւորներն ու անապատականները աշխարհա-

կանների գործերին չը պէտք է խառնուեն, այլ միշտ առանձնացած կեանք պէտք է վարեն. (Վաղարշապատի Դ. ժողով. յօդ. ԻԳ.)։

5) Հաց եփելու, կով կթելու կամ որ և է գործի պատրուակով վանքը կին չը մտնի (Դվ. Բ. ժող. յօդ. ԼԳ.)։

6) Անապատականները արև մտնելուց առաջ իրանց անապատը դառնան. (Դվ. Բ. ժող. յօդ. ԼԴ.)։

7) Վանականները աշխարհականների տներում չի-ջևանեն, այլ մերձակայ վանքում. եթէ վանք չը գտնուի, աւագերէցի տանը. (Դվ. Բ. ժող. յօդ. ԼԵ.)։

8) Կրօնաւորները տեղից տեղ չը պէտք է փոփոխ-ուեն. (Պարտաւի Բ. ժողով յօդ. ՁԵ.)։

9) Կրօնաւորները վիս պէտք է չուտեն և ստացուածք պէտք է չունենան. (Սսոյ Ա. ժողով յօդ. Ը.)։

Բ. Ս. ՀԱՅՐԵՐԻ ԿԱՆՈՆՆԵՐ.

(Կանոնագիրք. Գէորգեան ցուցակ № 447.)

—Կրօնաւորն՝ կանանց խոստովանութիւն մի իշխեսցէ առնել. բայց եթէ մերձ ի մահ հիւանդաց։ Շնհ. ՃԱ. (Շնորհալի).

—Կրօնաւորն կացցէ և մնասցէ յանապատի՝ ուր կա-ցեալն է, թէ և բորոտեսցի և ուրվանայցէ։ Հայ. ԺԵ. (Հայոց ժողով ի Տահապիւան).

—Կրօնաւորութիւն թէ յանձն առնուցու ոք՝ ի վանս կացցէ ընդ եղբարս, և թէ որպէս պարտի կեալ և զգու-շանալ յամենայն մոլորութեանց։ Լուսաւորչ. ԻԱ։ Գ. Բրս. (Գ. Բարսեղ Կեսարացի).

—Վանականք կամ քահանայք մի իշխեսցեն բաժա-նել զշնորհս եկեղեցւոյ ընդ ծախուց, այսինքն, մասրաքից

իւրեանց. այլ որ ինչ կարգեալ է ի սրբոցդան հարց՝ այնու-
շատացին. որոյ շատ է հան զշատն կերիցէ, և որոյ սա-
կաւ՝ զսակաւն. բայց զլոյս ճրագի և զպաշտօն եկեղեցւոյն
մի խափանեսցեն և զմանկունս ուխտին ուսուցանել մի
հեղգասցին։ Դ. Ե. (Դվնի)։

—Վանականք թէ գոցին ի մոլութեան ինչ, արտաքսեսցին։ Վղ. Ը. (Վաղարշապատ, Ը.)։

—Վանականք մի իշխեսցեն զինուորական զգենուլ, կամ վաճառականս լինել. և մի զհոգևորական պաշտօնն թողեալ՝ մարմնաւոր գործոյ պարապել, և մի ձիաքոյծս, այլ և՝ ի կերակրոց ևս պատրաստ լիցին։ Առաք. Զ. և ԼԳ. Ներսէս Աշտ. ԼՁ։

—Վանականք մի խառնեսցին յիւրս աշխարհականաց, այլ վարեսցեն կեանս հրեշտակականս, կուսութեամբ պարկեշտացեալ մարտնչելով միշտ ընդ ախտս։ Սահակայ Պարթևի Գ. և ԼԵ։

—Վանականք մի օթեսցին ի տունս աշխարհականաց՝ այլ ի վանս կամ ի տունս աւագ երիցոյն. Ներսէս Աշտարակեցի։

—Վանահարք ի վանաց ի վանս մի տեղափոխեսցին. այլ կացցեն՝ ուր կրօնաւորեցանն. բայց թէ կոչեսցեն յառաջնորդութիւն վիճակացն։ Սիսնի հայոց կաթողիկոսի։

—Վանահարս կարգել կամ ընկենուլ մի իշխեսցեն աշխարհական իշխանք ըստ կամաց իւրեանց, և մի բնակիլ ի վանս յանդգնեսցեն, եթէ ոչ՝ նզովեալ եղիցին։ Դվ. Ժ.

—(Ի) վանս բնաւ երբէք մի մացէ կին կամ հաց եփելոյ, կամ կով կթելոյ և կամ վասն այլ ինչ պատճառաց և կամ գործոց։ Ներսէս Աշտարակեցի. ԼԳ։

(Զ)վանս մի իշխեսցեն պղծել երդօք գուսանաց, և մի օթեսցին հեծեալք. որք յանդգնին՝ արհամարհեալ լիցին ի սրբոց վկայից և տարապրեալ յօրհնութենէն։ Դվ. ԺԲ. ՄԽ. ՄԺԱ։

(Ի) վանս ուրեք՝ եթէ վանականք բազումք են, և ժողովուրդ սակաւ, և յայլ վանս՝ վանականք սակաւ և ժողովուրդ բազում, առցեն ի բազում ժողովրդենէ և

տացեն վանուց՝ որոյ վանականք են բաղումք։ Վաղարշապատ, թ։

—Վանքդ անուն հանգստարանք են սրբոց և օթեւանք եպիսկոպոսաց, քահանայից, աբեղայից, սարկաւագաց և աղքատաց։ Դվ. ԺԲ. (Ներսէսի շինողի)։

—Վանք հաստատեցան անդ վասն մանկանց եկեղեցւոյ, և այք հրաժարեցան յաշխարհէ՝ անդ մտեալ մաքրութեամբ կացցեն և վասն աշխարհի աղօթեսցեն ևն։ Բ. Սահակայ Պարթևի. Գ։ Մխ. Գ։

—Վանք շինեցան ի գեօղս, զի անդ հանդիցեն առաջնորդք, հիւրք և աղքատք։ Սիսնի հայոց կաթողիկոսի Ը։

Ա. ՄՓՈՓՈՒՄՆ

Կրօնաւորութիւնն ու անապատականութիւնը քրիստոնէական եկեղեցու մէջ սկսուել և շարունակուել է հենց առաջին դարից, որպէս հետևանք անսահման ջերմեռանդութեան, և հալածանքի, որ հրէայ և հեթանոս աշխարհը վարում էր քրիստոնէութեան դէմ։—Կրօնաւորութեան նախագաղափար համարւում են հին ուխտից՝ Եղիա մարգարէն, նոր ուխտից՝ Յովհաննէս Մկրտիչը։

Կրօնաւորութիւնը որոշ կարգի և կանոնի տակ դրուեց Դ. դարից. մինչև այդ նրանք ապրում էին խստին առանձնութեան մէջ հեռաւոր անապատներում, անձաւներում ու քարայրներում։ Կրօնաւորների խմբական կենակցութեան հիմնադիրներն են Անտոն Անապատականը և յաջորդաբար՝ Իլլարիոնը։

Կրօնաւորները ոչ մի եկեղեցական կարգ ու աստիճան չունէին. նրանք միայն աղօթողներ էին։

Հոգևորականութիւնը բոլորովին առանձին դասակարգ էր. ոչ մի առնչութիւն չունենալով կրօնաւորների հետ։ Մինչև հինգերորդ դարը հոգևորականները առանց բացառութեան ամուսնացած էին, և ամուսնացած հոգև-

ւորականութիւնը կրօնաւորներից ու վանականներից ջոկուելու համար կոչւում էր աշխարհիկ հոգևորականութիւն։

Աշխարհիկ հոգևորականութեան մասն էին կազմում եպիսկոպոսներն ու երէցները կամ պրեսբիտերները, որ վարում էին եկեղեցու վարչական գործերը։ Եպիսկոպոսներն ու երէցները (այժմեան վարդապետ) ամուրի դառնալ սկսեցին Դ. դարի երկրորդ կէսից և, ամուրի դառնալով՝ իւրացրին կրօնաւորների սքեմը նրբացրած։

Առաքեալը ասում է, որ եպիսկոպոսը, երէցը, սարկաւագը մի մի կին պէտք է ունենան։ Այս պատուէրը տալիս՝ առաքեալի նպատակը եղել է պատուիրել, որ դրանք բազմակին չը լինեն։ Բայց յետոյ, երբ սկսել է վարիչ հոգևորականութեան ամուրիութիւնը, առաքեալի այդ պատուէրի միտքը յեղափոխուել է այնպէս, որ այրիացածը եթէ երկրորդ կին է առել, չի կարող հոգևորական լինել, կամ, հոգևորականը, երբ այրիանում է, չի կարող երկրորդ անգամ ամուսնանալ, եթէ վերահաստատուի առաքեալի պատուէրի իսկական միտքը թէ եպիսկոպոսը, երէցը և սարկաւագը բազմակին պէտք է չը լինին, ինչպէս էին առաքեալի օրով հեթանոսներն ու հրէաներն անգամ, այնուհետև այրի հոգևորականների նորից ամուսնանալու խնդիրը ինքն ըստ ինքեան կը լուծուի դրական կերպով։

Եկեղեցին չէր տուժի, եթէ վարիչ հոգևորականութիւնը—եպիսկոպոսներ, վարդապետներ—իբրև մասն աշխարհիկ հոգևորականութեան, ամուսնացած լինէին ինչպէս այդ կատարւում է արդէն անգլիական եպիսկոպոսական եկեղեցում։

Վանականներն ու կրօնաւորները պէտք է չունենան ոչ մի հոգևոր աստիճան, այլ որպէս պարզ աղօթաւորներ վանքերում և անապատներում ճգնեն. նրանց համար որպէս խոստովանահայր և սրբազնագործ պաշտօնեայ կարելի է նշանակել ծերունի քահանաներ, որոնք յօժարութիւն կունենան կամովին առանձնանալ աշխարհից և վանական կամ կրօնաւորական անդորրութիւն

վայելել։ Այսպէս էր հնումն։

Կրօնաւորները պէտք է աղօթքով՝ իրանց հոգու անունդը հայթայթեն և մարմնաւոր աշխատութեամբ՝ մարմնոյ, ուրեմն նրանք, աղօթքի ժամերից դուրս, պէտք է վաստակեն իրանց վանական ագարակում, գործեն իրանց արհեստը՝ եթէ դիտեն, ինչպէս անում էին Եգիպտոսի կրօնաւորներն ու անապատականները, ինչպէս անում էր Բարսեղ կեսարացին՝ Կապադովկիայի կրօնաւորութեան հիմնադիրը։

Կրօնաւորներին պէտք է արգելուի շատաշրջիկութիւնը, թափառումները և յաճախակի տեղափոխութիւնը։

Եթէ կրօնաւոր է, նա պէտք է հաւատարիմ մնայ իւր ուխտին. չը պէտք է ձգտի հոգևոր աստիճանների, փափկակեցութեան, սնափառութեան, պճրանքի և պաշտօնների. ով այդ բաներին հակումն ցոյց կը տայ նա կրօնաւոր չի կարող լինել և պէտք է հեռացուի կրօնաւորութիւնից։

Բնական կրօնաստաններ այժմ կարող են լինել մեկուսացած վանքերը, որպիսի են ռուսահայքում Սևանն ու Գեղարդայ վանքը։ Մնացած վանքերը, որոնք գիւղերի մօտ են, պէտք է գիւղական եկեղեցի դառնան։

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Ժամանակի հոսանքին նայելով, երևի, ոչ հեռաւոր ապագայում վանականութիւնն ու կրօնաւորութիւնը իրանց կարգ ու կանոններով պատմական անցքերի շարքը կանցնեն և կը դադարեն գոյութիւն ունենալուց։ Կամենալով ծանօթացնել ընթերցողներին Ռուսաց Հայաստանում գոյութիւն ունեցող կրօնաւորական միակ հաստատութեան կենցաղի և կարգ ու կանոնի հետ, այլ և թողնել նոյնը ապագայում ուսումնասիրութեան նիւթ դիմեցի, և շնորհակալութեամբ ստացայ Սևանի վանահայր Տ. Սարգիս արքեպիսկոպոսից Սևանեցոց կենցաղի և աստուածպաշտութեան նկարագիրը։

Ա.

«ՍԵՒԱՆԱՅ ԿՐՕՆԱՒՈՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ»

Յատկապէս Սևանայ միաբանութեան համար կազմած որ և է գրաւոր կանոն գոյութիւն չունի. բայց Մանուէլ վարդապետ Գիւմուշխանցու գրած Սևանայ պատմութեան մէջ եօթ յօդուածից բաղկացած մի կանոն կայ, որը, ինչպէս պատմագիրն է ասում, կազմուած է եղել ոչ միայն Սևանայ, այլ ընդհանրապէս բոլոր վանքերի կրօնաւորների համար որը յետոյ մոռած է և Սևան։ Ահա այդ հատուածը, որ հանում ենք յիշեալ գրքից, երես 48—52։

«Քանզի ներկայ հարքն (Սևանայ) կամէին ցուցանել մեզ թէ ի Մաշտոց վարդապետէ սկսեալ՝ Բարսեղեան կանոնիւք վարելցեալք են միաբանք Սևանու մինչև ցայժմ, բայց յոյժ բարեգոյն է ասել, յիրաւի յառաջն Մաշտոցիւ այն Բասեղեան կանոնք մոռեալ են ի Սէվան, սակայն յանցանել ժամանակաց և ի փոփոխել տէրութեանց և ամայութեանց վանօրէից, ամենայն բարեկարգութիւնք վերիվայր տապալեալք և անյայտ մնացեալ էին, մինչև ի (ժամանակս) Սարգսի եպիսկոպոսի և հետևողացն նորա, որ

սկիզբն արար ի Սիւնեաց գաւառի Մաքենիս կոչեցեալ վանուց, ուր և Մաշտոց վարդապետ զառաջինն անդ էր զարգացեալ և սնեալ։

«Այս Սարգիս եպիսկոպոս սկիզբն էր առաջնորդ Սաղմոսավանից, ի նոյն գաւառէ Արագածոտան, ի գեղջէն, որ ասիւր Յարենի, մերձ ի Կարբի, որ մականուամբ Պարոն—Տէր կոչիւր սոյն Սարգիս եպիսկոպոս։ Հրաշալի պատահմամբ իւիք և ինքն հրաժարեալ յառաջնորդութենէ իւրմէ, գնաց ի սուրբ Երուսաղէմ, պատահեալ ի ճանապարհի Տրապիզոնի Կիրակոս անուն քահանայի մեծ առն առաքինասիրի, ընկերացեալ միմեանց խորհին՝ ի վերադարձի իւրեանց ի պատշաճ տեղւոջ մենարանս հաստատեալ աղօթեացեն ընկերակցաբար, ըստ գրութեան Առաքել պատմչի, ԻԱ.

«Որք եկեալ ի սիւնեաց գաւառ հիմնարկեցին զառաջնածահաճոյ բաղձանս իւրեանց, եկեալ բազմութեանց հոգևորականաց և աշխարհականաց յարին ի սոսա ջերմեռանդ սիրով. նմին իրի մխաբան խորհրդով Սարգիս եպիսկոպոս և Կիրակոս քահանայ եօթն գլուխ կանոնական բարեկարգութիւնս սահմանեցին կրօնասիրութեան իւրեանց, որք են այսոքիկ։

«Առաջին քան զամենայն՝ յամենայնի հնազանդ լինել Առաջնորդին։

«Երկրորդ յամենայն աւուր յայգոյն և յերեկոյին զխորհուրդս մատց և զյանցուածս աւուրն խոստովանել։

Երրորդ՝ ոչ ունիլ ումեք առանձին ստացուած՝ ինչ, և ոչ պահել ինչ ի սենեկի, և ոչ ուտել բնաւ անդէն, յանձն արարեալ զամենայն խնամս նախ յԱստուած և ապա յԱռաջնորդն։

Չորրորդ՝ զամն ողջոյն պահօք անցուցանել. բաց յաւուրց կիւրակէից և շաբաթու և տէրունական տօնից. իսկ ի մսոյ և ի գինւոյ խոպառ հրաժարել։

Հինգերորդ՝ յաւուրն մի անգամ ճաշակել և հաւասար բաժանել զկերակուրն մեծի և փոքու, և ընթեռնուլ զգիրս ի սեղանի։

Վեցերորդ՝ յամենայն շաբաթս և ի տէրունական տօնս զդիշերն հսկմամբ անցուցանել. և յառաւօտուն անխափան պատարագ մատուցանել։

Եօթներորդ՝ ի հարկանել կոչնակի, ամենեցուն միաբան գնալ յեկեղեցին և ի սեղան լռութեամբ և խոնարհութեամբ։

«Եւ ի վերջ քան զամենայն, իբր գլուխ ամենայն կանոնաց եդին զայս. այսինքն է ամենեցուն ջանալ սուրբ պահել զմիտս իւրեանց և ճգնել ի մեռուցումն ախտից, ի խոկումն աստուածային իրաց և ընթերցումն գրոց։

«Եդին և կարգ և ձև ի կրօնաւորական սքէմս, զի խանգարեալ էր այն և յօրինեցին զեկեղեցական զդեստս ըստ իւրաքանչիւր աստիճանի, և որոշեցին զժամանակ պաշտամանց իւրաքանչիւր ժամակարգութեանց, սահմանեցին և զայլ բազում բարեկարգութիւնս, որովք կառավարին ցայսօր ամենայն կրօնաւորաց վանօրայք Հայաստան աշխարհի, մինչ զի ի Կուտուց և ի Լիմ հռչակեալ անապատին ևս՝ յընկերաց և ի դաստիարակելոցն ի սոցունց ուսան զկրօնաւորական վարս։

«Քանզի Ներսէս Մոկացի, որ մականուանեալ Պեղլու կոչիւր, գնաց ի գաւառն Վասպուրականի (1622, Ռ.ՀԱ), և մտեալ ի կղզին Լիմ կոչեցեալ, նորոգեաց զվանան, և ժողովեաց անդ զբազմութիւն առաքինի անձանց, և առաջնորդէր նոցա ըստ նախակարգեալ կանոնաց, և ի բազմանալ կրօնաւորաց, անցին և ի Կուտուց, ուր և ժողովեցան կրօնաւորք բազումք։

«Սոցին նման և Կարապետ եպիսկոպոս յետ ամաց ինչ եկեալ ի Սէվան կղզի, բարեկարգեաց ըստ վերոգրեալ կանոնաց»։

*
* *

Ժուժկալութեան այս պատկառելի կանոնը թէ որքան ժամանակ է գործադրուել Սևանում, յայտնի չէ. միայն հաւանական է կարծել, որ ժամանակի ընթացքում հետզհետէ փոփոխութեան է ենթարկվել։

Սևանում ճաշու ժամն արձակվելիս միաբանները սեղան են գնում, ուր ճաշի ժամանակ նրանցից մէկը կարդում է Հարանց վարքից, (վերջերս Սարգիս շնորհալու յորդորակներից)։

Ուտիս օրերին պաշտօնապէս նաւակատիք է։ Յատկապէս միաբանաց համար միս մորթւում է տարուայ մէջ երկու անգամ. Ջրօրհնեաց տօնին և բուն բարեկենդանին. թէև միաբանները մսեղէն ուտում են, այն ժամանակ, երբ ուխտաւորները նրանց մատաղի են հրաւիրում։

Եթէ նախկին հրեշտակակրօն անապատականներից մի բան մնացել է անփոփոխ, այդ կրօնաւորական սքեմն է (քուրձ. կոշտ շալից հագուստ*)։

Բ.

ՍԵՒԱՆԱՅ ԺԱՄԵՐԳՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԸ
(ըստ հնումն).

Տարուայ մէջ ամեն օր չորս անգամ ժամերգութիւն է կատարվում. առաւօտեան, ճաշու, երեկոյեան և հանգըստեան։

Առաւօտեան ժամն սկսվում է այնպէս, որ վերջանում է արևածագին մօտաւորապէս, շատ քիչ բացառութեամբ, և տևում է 2 ժամ հասարակ օրերին, 3 ժամ շաբաթ և կիրակի օրերին, 7 ժամ հսկումներին և 8 ժամ զատկի հսկումին։

Ճաշու ժամն սկսվում է ամառը 8—9 ժամին իսկ ձմեռը 9—10 ժամին մօտաւորապէս և տևում է $1^1/_2$ ժամ հասարակ օրերին, 2 ժամ պատարագ օրերին, և մէկ ժամ առաջաւորաց պասին։

Երեկոյեան ժամն սկսվում է 4—5 ժամին ամառը. և 2—3 ժամին ձմեռը, և տևում է մի ժամ հասարակ օրերին, $1^1/_2$ ժամ և աւելի՝ հանդիսաւոր տօներին։

---

*) Մենք տեսել ենք Սևանայ միաբանների մէջ նուրբ կերպասից և Վանայ գունաւոր ու շողշողուն շալից վերարկու հագնող մեռաքսայ շղարշից վեղար կրողներ ևս։

Հանգստեան ժամն սկսվում է արևը մայր մտնելուն և տևում է ուղիղ կէս ժամ։

*
* *

Առաւօտեան ժամերգութիւնը բաղկացած է երեք մասից. գիշերային ժամ, առաւօտեան և արևագալի։

Ծանօթութիւն։ Տէրունական տօներին Արևագալի ժամ չէ ասվում։

Ճաշուն երկու մասից է. երեք ողորմեան և բուն ճաշուն (ժամամուտ ճաշու շարական, Սուրբ Աստուած, գիրք, Աւետարան, հաւատամք և լն.)։

Ծանօթութիւն։ Առաջաւորաց պասին մի միայն երեք ողորմեա, իսկ մեծ պասի հասարակ օրերին երեք ողորմեա և նորան կից երեկոյեան ժամ։

Երեկոյեան ժամը երկու մասից է, բուն երեկոյեան և խաղաղական ժամ։

Ծանօթութիւն։ Տէրունական տօներին և շաբաթ երեկոներին խաղաղական չէ ասվում։

Հանգստեան ժամը մէկ ման է.—Եկեղեցէն։

*
* *

Գիշերային ժամին, ամենից առաջ, երկու վարդապետ (աւագ երէցը աւագ դասից և ժամօրհնողը աշակերտի դասից) գալիս են ատեան և մի կանոն Սաղմոս ասում գրաբարի վերայ փոխ առ փոխ։ Սկսում է աւագ երէցը— Ալէլուիա, ալէլուիա։ Հետևում է ժամօրհնողը — Երանեալ է այր որ։

Ծանօթութիւն։ Ժամ օրհնելը և աւագ երիցութիւնը հերթով է։ Աւագ երէցը յաջորդ օրուայ ժամ օրհնողն է։

Սաղմոսի կանոնը որոշված է աւուր ձայնի համեմատ հետևեալ կարգով։

Ա.Զ. Մի նախանձիր Գ.Զ. Խոստովան
Ա.Կ. Ողորմեա Գ.Կ. Ի նեղութեան

ԲՁ. Իբրև ԴՁ. Երանեալ
ԲԿ. Տէր ապաւէն ԴԿ. Երկինք պատմեն։

Սաղմոսից յետոյ ամեն օր ասվում է Հրաժարիմք, Խոստովանիմք, Մեղայ, Ողորմեացի. Օրհնեալ Տէր մեր։ Հայր մեր։ Տէր եթէ զշրթունս։ Տէր զի բազում-ը ասում է սարկաւագը թիւ։ Միմիայն հսկումներին են ձայնով ասում Աստեան կանգնած։

Յիշեսցուք, զարթիք, զարթիր ընդէր, զարթուցեալքս. Անբաժանելի, երգվում է ամեն շաբաթ ու կիւրակի, նաև պատարագ օրերին։

Ծանօթութիւն։ Երեք օր, այն է Հռիփսիմեանց, Գայիանեանց և Յովհաննու Մկրտչի և Աթանագինէ եպիսկոպոսի տօներին, թէև պատարագ չէ լինում. սակայն Յիշեսցուք և Աշխարհ ամենայն է երգվում և գիշերապաշտօն է կատարվում։ Այդպէս և ամեն շաբաթ օրերը։

Զարթուցեալքս քարոզը ասվում է թիւ. իսկ շաբաթ ու կիւրակի, նաև պատարագ օրերին՝ ձայնով։ Զարթուցեալքից յետոյ պաս օրերին հարիւր Տէր ողորմեա, թիւ. Սրբոց տօներին (բացի շաբաթ օրից) յիսուն Տէր ող. Տէրունական տօներին երեք Տէր ողորմեա. Ամեն շաբաթ օր և պատարագ օրերին, եթէ սրբոց տօն է, Աշխարհ ամենայն.

Ամեն կիւրակի և պատարագ օրերին, եթէ պաս է, կամ տէրունական տօն,—Առաւօտ լուսոյ։

Զքէն գոհանամք աղօթքից յետոյ աւագ երէցն ու ժամօրհնողը նորից երկու կանոն սաղմոս են ասում առեանում. իսկ մնացեալ միաբաններըը դասերում երկերկու եղած նոյն երկու կանոնն են ասում, բոլորը ցած այնպէս որ միմեանց չեն խանգարում։

Սաղմոսի երկու կանոնը որոշուած է աւուր ձայնի համեմատ հետևեալ կարգով։

ԱՁ. Երանեալ.	Երկինք պատմեն.
ԱԿ. Երկինք պատմեն.	Մի նախանձիր.
ԲՁ. Մի նախանձիր.	Ողորմեա.
ԲԿ. Ողորմեա.	Իբրև.

Գ.Զ. Իբրև.	Տէր ողորմեայ.
Գ.Կ. Տէր ողորմեայ.	Խոստովան.
Դ.Զ. Խոստովան.	Ի նեղութեան.
Դ.Կ. Ի նեղութեան.	Երանեալ։

Վերջին կանոնի վան քարոզն ու աղօթքը առ այժմ թողնում են։

Պաս օրերին սաղմոսից յետոյ անմիջապէս սկսում են ապաշխարութեան օրհնութիւնը։ (Եթէ հասարակ պաս ուրբաթ օր է, օրհնութեան կից ասում են նաև ապաշխարութեան մանկունքը)։ Օրհնութիւնից յետոյ սաղմոսի առաջին մաղթանքը, «Վան» քարոզն ու աղօթքը «Թագաւոր յաւիտեան» սաղմոսի վերջին մաղթանքը. Հայր մեր։

Իսկ տէրունական և սրբոց տօներին, սաղմոսի վերջին կանոնից յետոյ դասէ դաս երգում են նոյն կանոնի (աւուր ձայնի) կանոնագլուխը, սկսում են աւագ երիցու դասից։ Ապա Հայրմեր, Զսաղմոսերգութիւնս, զաղօթս։ Եւ ևս խաղ. Օրհնութիւն և փառք։ Ապա սկսում են աշակերտի դասից Օրհնութեան շարականը։ Եթէ սրբոց տօն է. մաղթանք. Բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնին. իսկ եթէ տէրունական տօն է, մաղթանք. Փառք հրաշափառ Տէրութեան Քոյ։

Ապա ասում են վերջին կանոնի թողած վան քարոզն ու աղօթքը։ Վան քարոզն ասվում է թիւ. իսկ կիւրակի ձայնով։ Ձայնով է ասվում նաև այն օրերին, երբ Օրհնութիւնը առեան է ասվում։

«Ալէլուիա». տէրունական տօներին. իսկ «Թագաւոր յաւիտեան՝» Սրբոց տօներին։ Ապա սաղմոսի վերջին մաղթանք. Հայր մեր։

*
* *

Բայց ամեն շաբաթ ու կիւրակի, նաև պատարագ օրերին գիշերապաշտօն է կատարվում հետևեալ կարգով։

Կանոնագլխից յետոյ, երբ Հայր մերն և Զսաղմոսերգութիւնն ասվում է. սկսում են Հանգստեան շարական Աւագ դասից, աւուր ձայնից։

Ծանօթութիւն։ Զայնքաղ շարակնոցի մէջ Հանգստեան Օրհնութեան շարականները իւրաքանչիւր ձայնից 12 հատ են։ Օրինակի համար դնենք այստեղ Ա.Զ շարականը ամբողջապէս։

Հանգստեան	Քեզ վայելէ Աստուած.
Հանգստեան	Զայնարկեալ կենարարին.
Հանգստեան	Զհոգիս ծառայից քոց.
Մեծ պասի կիւրակի	Ողորմեա ինձ Աստուած.
Ապաշխարութեան	Հայր բազումողորմ.
Ապաշխարութեան	Աստուած բազումողորմ.
Մարտիրոսաց	Ժողովեալքս ի յիշատակ.
Ղազարու	Այսօր գոլով ի Բեթանիա։
Յարութեան	Անճառելի Հօր էակից.
Հոգեգալստեան	Որ յամենայնի ես.
Աստուածածնի	Որ զաւետիս Հոգւոյն.
Խաչի	Հրաշակերտ և զօրեղ։

Այս շարականներից Սրբոց տօների և պաս օրերի գիշերապաշտօնին երգվում են Հանգստեան, ապաշխարութեան, մարտիրոսաց Աստուածածնի և Խաչի շարականները, 8 հատ։

Իսկ տէրունական տօնի գիշերապաշտօնին երգվում են Հանգստեան, մեծ պասի կիւրակէի Ղազարու, Յարութեան, Աստուածածնի և Խաչի շարականները, 8 հատ։

Իսկ Հոգեգալստեան մէկ շարականը մնում է։ Այդ շարականը երգվում է միայն հասարակ կիւրակէներին և Հոգեգալստեան տօնի օրերին, որովհետև այդ օրերի Օրհնութեան շարականներին գալստեան չ'կայ։

Այս կանոնով է դասաւորուած և այս կանոնով է երգվում և միւս ձայներինը։

Մեծ պասի շաբաթ օրերին Հանգստեան-ի փոխանակ երգվում է «Ապաշխարութեան» աւուր ձայնի համեմատ։

Իսկ մեծ պասի կիւրակէներին և Խաչի կիւրակէներին,—Այսօր անճառն ամբողջ վեց փոխը։

Հանգստեան կամ Խաչի սաղմոսից յետոյ կարդաց-

վում է Աւետարան աւուր ձայնի և տօնի համեմատ հետևեալ աղիւսակով։

1. Յարութեան կիւրակէներին կարդացվում է տաճարի աւետարան։

2. Մեծ պասի և Խաչի կիւրակէներին—Խաչելութեան։

3. Տէրունական լուր օրերին, սրբոց տօներին և պաս օրերին—Հանգստեան։

4. Մեծ պասի շաբաթ օրերին ապաշխարութեան շարականից յետոյ կարդացվում է ապաշխարութեան Աւետարան՝ նոյնպէս աւուր ձայնից։

Մատ. Այլ առակ էարկ. ԺԳ. 24.

Մարկ. Եւ ասէ ցնոսա. Դ. 21.

Ղուկ. Հուր եկի արկանել. ԺԲ. 49.

Յոհ. Եթէ ես վկայեմ. Ե. 31.

Տաճարի և Հանգստեան Աւետարանից յետոյ՝ Աստուած անեղ ձայնից. ապա Հոգւոց.

Խաչելութեան Աւետարանից յետոյ՝ Նորոգողն ամբողջ (4 փոխը միասին). ապա Հոգւոց.

Ապաշխարութեան Աւետարանից յետոյ միայն Հոգւոց։ Հոգւոցի Հայր մերից յետոյ մաղթանք—Տէր Յիսուս Քրիստոս Քո անճառելի (տէրութեանդ) շնորհիւ և անարատ ծնողիդ բարեխօսութեամբն լուսաւորեալ պայծառացո՛ զհոգիս համօրէն հաւատացելոց յուսով ի քեզ ննջեցելոց և մանաւանդ այնոցիկ որք ընդ հովանեաւ սրբոյ տաճարիս են հանգուցեալ։ Եւ ևս խաղաղ. Օրհնութիւն և Փառք Հօր։ Ապա սկսվում է աշակերտի դասից Օրհնութեան շարականը և այլն։

Ծանօթութիւն։ Վերոյգրեալ մաղթանքը ամբողջապէս բերի այստեղ նորա համար, որ մեր ժամագրքերից ոչ մէկում չկայ գրած։

* * *

Հսկում կատարվում է տօնացուցի համեմատ տարեկան տասն անգամ,—Ծննդեան, Տեառնընդառաջին, Ծաղկազարդին, Աւագ ուրբաթին, Զատկին, Նոր կիւրակէին,

Հոգեգալստեան, Վարդավառին, Վերափոխման և Խաչ-վերացին։

Հսկումը հատարակ գիշերային ժամերգութիւնից տարբերւում է նախ՝ նորանով, որ «Եկեսցէ»-ի հետ կից է տալիս, (Եկեսցէից յետոյ Հրաժարիմք և այլն)։ Եւ երկրորդը նորանով, որ կանոնագլխից առաջ փոխանակ ամենօրեայ երկու կանոն սաղմոսի տալիս է ամբողջ ութ կանոնը։ Սովորականի պէս աւագ երէցն և ժամօրհնողը տեան գալով գրական վերայ և Զքէն գոհանամք աղօթքից յետոյ սկսում են Սաղմոսը Երանեալ կանոնից. իսկ միաբաններն եկեղեցու զանազան տեղերում երկ-երկու կանգնած ասում են միևնոյն կանոնը։ Ցած ձայնով են ասում բոլորը, մի անոյշ շշուկ տարածելով ամբողջ եկեղեցու մէջ։

Առաջին (Երանեալ) կանոնն աւարտելուց յետոյ դասէգաս երգում են աւագ օրհնութիւն Դ.Կ. ապա նոյն ձայնից ապաշխարութեան օրհնութիւն և մանկունք վերջին երկու տներին՝ փառք, այժմ և միշտ։

Շարականից յետոյ նոյն կարգով սկսում են սաղմոսի երկրորդ կանոնը (երկինք պատմեն) ապա Ա.Զ. աւագ օրհնութիւն, ապաշխարութեան օրհնութիւն և մանկունք։

Եւ այդպէս իւրաքանչիւր կանոնի վերջում երգում են նոյն կանոնի ձայնից աւագ օրհնութիւն, ապաշխարութեան օրհնութիւն և մանկունք։ Աւագ ուրբաթին միայն ապաշ. օրհ. և մանկունք. իսկ Զատկին և նոր կիւրակէին միայն աւագ օրհնութիւն։

Վերջին կանոնից (ի նեղութեան) յետոյ և Դ.Զ. շարականներից յետոյ սկսում են աւուր ձայնի կանոնագլուխը ևն։ Մնացեալ տաղունքը սովորական կարգով է մինչև առաւօտեան ժամերգութեան վերջը։

*
* *

Գիշերային ժամերգութեան կից տալիս է Առաւօտեան ժամը։ Լցաք առաւօտու։ Հարցի և բոլոր շարականների փոխերը տալիս են մինչև վերջը. ապա սկսվում

է շարականը, Հարցի փոխին դասէդաս Օրհնեալ է Աստուած են երգում։

Հարցի շարականի առաջին կէսը (մինչև գործատուն) իւրաքանչիւր տուն ասվում է երեք անգամ, իսկ գործատնից մինչև վերջին տունը—երկու անգամ։ Երկու անգամ են երգվում նաև բոլոր շարականների տները, միայն կիւրակամտի Սուրբ ես տէրը չէ կրկնվում։

Հասարակ պաս ուրբաթ օրը հարցը հանգստեան է ասվում, իսկ մանկունքը Խաչի։

Փառք ի բարձունս աստեան է ասվում բոլոր կիւրակէներին (բացի մեծ պասից) և Զրօրհնեաց ու թլպատութեան տօնին, և աւագ ուրբաթին։

Ծանօթութիւն։ Ամեն անգամ աստեան եկած ժամանակ, թափորի նախատօնակի և այլն, մաղթանքները հանդիսադիրն է ասում և ոչ ժամօրհնողը։

Տէր ամենակալը միմիայն մեծ պասին է ասվում։

*
* *

Աւաւօտեան ժամերգութեան կից ասվում է Արևագալն ամեն օր (բացի տէրունական օրերից)։ Բոլոր պաս օրերին՝ երգերն էլ հետը. իսկ սրբոց տօներին առանց երգերի։

Արևագալից յետոյ ծնկաչոք Տէր ողորմեա, որ սկսվում է երեք տուն շարականով։ Պաս օրերին Գ.Կ. Սուրբ Աստուած Հայր անեկիզբն։ Իսկ սրբոց տօներին Գ.Զ. Սուրբ ես Տէր և ի սուրբս հանգուցեալ։ Ապա տէր ողորմեա. ապա 1. Արի Աստուած, հարցն մերոց. 2. Միջնորդութեամբ. 3. Զի գետացաք. 4. Արդ անկանիմք։ Զորեքշաբթի պաս օրերին 3 և 4 տների փոխանակ—Աստուածածին անհարսնացեալ և Բանին կենաց։ Իսկ պաս ուրբաթ օրերին գովեալ ես դու փայտ փրկութեան և Դողան ի քէն գունդք խաւարին։ Տէր ողորմեայից յետոյ Եւ վասն սրբուհւոյ։ Սուրբ զաստուածածինն։ Ընկալ Տէր, Հայր մեր։ Օրհնեալք եղերուք։

Ծանօթութիւն։ Ինչ օր պատարագ է լինելու, արևա-

գալից յետոյ ծնկաչոք Տէր ողորմեա չկայ։ Ժամն արձակվում է, իսկ պատարագիչն և մի սարկաւագ քաղում են երեք ողորմեայի կարգը և վերջը հանգստեան ասում։

* * *

Ճաշու ժամից առաջ ասվում է մի կանոն սաղմոս աւուր ձայնի համեմատ հետևեալ կարգով։

Ա.Զ. Տէր ապաւէն	Գ.Զ. Երկինք պատմեն
Ա.Կ. Խոստովան	Գ.Կ. Մի նախանձիր
Բ.Զ. Ի նեղութեան	Դ.Զ. Ողորմեա
Բ.Կ. Երանեալ	Դ.Կ. Իբրև։

Ծանօթութիւն։ Ա. Երկինք պատմեն և Տէր ապաւէն միևնոյն քարոզն ու աղօթքն ունեն (վասն ի գիշերի), ուրեմն այդ երկու կանոնից որ մէկը աւուր ձայնի կանոն լինի, միւսն էլ ճաշու կանոնն է։ Այդպէս էլ միւս կանոնները։

Ծանօթութիւն։ Բ. ինչ օր որ պատարագ է լինելու այլ ևս այդ սաղմոսը չէ ասվում, որովհետև պատարագիչն արդէն ութ կանոնն էլ ասել է։

Ճաշու երեք ողորմեան մեծ քարոզներով ու աղօթքներով ասվում է բոլոր պաս օրերին և վերջը հանգստեան չէ ասվում։ Իսկ առանց մեծ քարոզների ու աղօթքների ասվում է բոլոր սրբոց և տէրունական տօներին (բացի աւագ ուրբաթ օրից)։ Վերջում ասվում է և հանգստեան։

Ծանօթութիւն։ Պատարագ օրերին առաջին ողորմեայից յետոյ Առաջնորդեա աղօթքը ասում է պատարագիչը ինքը և մտնում է խորան զգեստաւորելու։ Այդ է պատճառը, որ առաւօտեան ժամի վերջում առանձին սարկաւագի հետ 3 ողորմեան ասում է, որովհետև այժմ ներկայ լինել ողորմեաներին անկարող է։

Երեք ողորմեայից կից ասվում է բուն ճաշուն։ Այն է, ժամամուտ. ճաշու շարական, Սուրբ Աստուած, Գիրք. Աւետարան, Հաւատամք են. և կամ պատարագը։ Ցինանց օրերին ճաշու գրքից առաջ ասվում է սաղմոս օրական երեք փոխ տօնացուցի համեմատ։

* * *

Երեկոյեան ժամից առաջ, եթէ պաս օր է, ասվում է մի կանոն սաղմոս, սովորաբար «Ի նեղութեան» կանոնը. իսկ եթէ գիշերային կամ ճաշու ժամին այդ կանոնը ասվել է, այն ժամանակ մի ուրիշ կանոն է ասվում, որը նոյն օրը չէ ասվել։

Իսկ ամեն օր կարդացվում է Յայսմաւուր ամսաթուի համեմատ։ Ապա շարական, Մարտիրոսաց ողորմեան աւուր ձայնից և նորա մեծացուցէն և խաչի մանկունք նոյն ձայնից։ Մաղթանք, Աղաչեմ ողորմեաց, Տէր բարերար։ Քարոզ Սուրբ ճգնաւորաց, աղօթք, Պատկիչ սրբոց կամ Որ ընտրեցեր, նայելով թէ ո՞ր սուրբի ճառն է կարդացվել։ (Իսկ այն օրերին, երբ տէրունական, տնօրէնութեան ճառ է, յայսմաւուրից յետոյ Հայր մեր, Անկանիմք կամ Առաջի պատուական)։ Ես առ Աստուած կարդացի։

Պատկիչ սրբոց կամ Որ ընտրեցեր աղօթքից յետոյ ասվում է Հայր մեր և հեռուեալ մաղթանքը։

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի, մաքուր մաղթանօք և բարեխօսութեամբ սրբոցն, որոց այժմ զճառս և զպատմութիւնս երանելի վարուք և բարի մահուան նոցին ընթերցաք, Տէր Յիսուս, ընդ մեզ հաշտեսցիս, և սրբոյ եկեղեցւոյս (կամ անապատիս) յիշատակ ընծայողացն սիրով գթասցիս։ Ես առ Աստուած կարդացի։

Մեծ պասին, երբ երեկոյեան ժամը կից է ասվում ճաշու ժամի հետ, ճաշու գրքի վերջում, «Ողիր եղիցին-ից» առաջ սաղմոս է ասվում մէկ փոխ ոտնացուցի համեմատ։

*
* *

Երեկոյեան ժամին կից ասվում է ամեն օր խաղաղական ժամը։ Բայց Նայեաց սիրով, Երանեալ են ամբիծք, Ի քէն հայցեմք և ստեղի շարական միայն մեծ պասի օրերին են ասվում, առաջին շորեքշաբթի օրից սկսած։

Խաղաղական ժամի վերջում ծնկաչոք Տէր ողորմեա են երգում առաւօտեան ժամի կարգով։

Ծանօթութիւն։ Տէրունական տօներին և շաբաթ երեկոներին խաղաղական ժամ և Տէր ողորմեա չկայ։

Ծանօթութիւն, եթէ հետևեալ օրը պատարագ է, պատարագիչը սարկաւագի հետ գրակալի վերայ 5 կանոն սաղմոս է ասում։ Երեկոյեան ժամից յետոյ։

*
* *

Հանգստեան ժամը Եկեսցէն է, Եկեսցէին Աւետարան կարդացվում է օրական մի փոխ աւետարանից յաջորդաբար՝ մինչև գիրքը վերջանում է. վերջանալուց յետոյ նորից է սկսվում Աւետարանի սկզբի փոխից։

Ծանօթութիւն։ Առաջաւորաց և մեծ պասի օրերին (Բացի շաբաթ և կիւրակի) Աւետարան չէ կարդացվում Եկեսցէին։

Նարեկի գլուխներից «Ընկալ քաղցրութեամբ» և «Աստուած յաւիտենական» է ասվում թիւ. Հաւատով խոստովանիմը երկու հոգւով են ասում փոխ առ փոխ։

Ժամագրքում գրածից աւելի բան չէ ասվում Եկեսցէին։ Բայց եթէ կից է ասվում հսկումների հետ այն ժամանակ Աւետարանի սաղմոսից (Ի կարդալ) առաջ երգվում է երկու շարական ապաշխարութեան Բկ. Ող օրհնիս ի հրեշտակաց և Օրհնեմք զքեզ Ծէր։

Եկեսցէի ժամն արձակվելիս Աւետարան չեն համբուրում։ Չեն համբուրում նոյնպէս Առաջաւորաց և մեծ պասի օրերին բոլոր ժամերի վերջում։

ՄԱՍՆ Ա.

ԳԼԽԱԿԱՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ

—Ա. Անապատական կեանքի սկզբնաւորութիւնը: Բաքաքիմեանք: Եղիա մարգարէ: Յովհաննէս Մկրտիչ: Հեսսեանք. 1—10 երես:

—Բ. Անապատականութեան սկիզբն քրիստոնեայ եկեղեցում: Պաւղոս միայնակեաց և Անտոն անապատական. 10—19 եր:

—Գ. Պախոմ՝ հիմնադիր վանքերի և վանական կեանքի: Անապատականների հակումները: Կրօնաւորները որպէս ղէնք իրանց մեծաւորների ձեռքին: Կրօնաւորների մոլորութիւնները. 20—26 երես:

—Դ. Կրօնաւորական և վանական կեանքի տարածուելը Եգիպտոսի սահմանից դուրս՝ Պաղեստինում, Ասորիքում (Սիրիա), Հայաստանում և Պոնտական դաւառներում: Կրօնաւորութեան այլափոխումն: Խոտաճարակներ (Воскы): Սինակեացներ: Գրի մէջ աքնողներ. 27—34 երես:

—Ե. Ամփոփումն—Անապատականներ, Սկիտէ, Վանք և Վանականներ: Այլափոխուած անապատականներ — խոտաճարակներ, Սինակեացներ, Գրնեցիներ: Վանքերը որպէս անհրաժեշտ հաստատութիւն: Աշխարհիկ հոգևորականութիւն: Հոգևորականների զգեստը—վիլոն և վեղար. 35—43 երես:

—Զ. Մեծ Բասեղի և Գրիգոր Աստուածաբանի կրթութիւնը: Բասեղը ուսումնասիրում է արևելքի կրօնաւորական և անապատական կեանքը: Նա Պոնտոսում հիմնում է վանքեր և Գրիգոր Աստուածաբանի հետ կրօնաւորական կեանք վարում: Նրանց և վանականների զբաղմունքները: Անախորիտներ և կինովիտներ: Վանական դառնալու հրապոյրը ընդհանրապէս: Բասեղը Կեսարիայի սրբազան եպիսկոպոս: Գրիգորի դժտութիւնը Բասեղից: Գրիգորը Կ. Պոլսում: Երկու մեծ բասեկամների ազդեցութիւնը արևելեան եկեղեցում: Բասեղի և Գրիգորի մահը. 44—54 երես:

—Է. Հոգևորականների ամուսին լինելու խնդիրը։ Եպիսկոպոսների ամուսնությունը արևելքում։ Հոգևոր կեանքի կազմակերպությունը Դ. դարի վերջերում։ Կանոնները կրօնաւորների մասին։ Տրուլեան ժողով. 54—60 երես։

—Ը. Աշխարհիկ հոգևորականների ամուսնությունը արևմուտքում։ Կանոնիկները և նրանց նոր նշանակությունը։ Սիմոնականություն։ Գրիգոր Է. պապի ջանքը Սիմոնականությունն ու հոգևորականների ամուսնությունը վերացնելու։ Ամուսնություն—Յելիբատ։ Տրիդենդեան ժողով։ Հայ կաթոլիկ եկեղեցի։ Հռոմէական եկեղեցուց հերձուածները. 61—69 երես։

ՄԱՍՆ Բ.

—Ա. Անապատականները ու վանականությունը Հայաստանում։ Ոսկեանք և Սուքիասեանք։ Եկեղեցական աւանդությունը նրանց մասին։ Նրանց բնակության վայրերը—Ծաղկէոյ և Սուկաւ-Սուկաւէտ լեռները։ Ոսկեանց և Սուքիասեանց ժամանակի մասին տարակոյսներ։ Ոսկեանց և Սուքիասեանց հաւանական ժամանակը։ Ոսկեանց և Սուքիասեանց վկայաբանությունն աւանդողները։ Երբ էին ապրում Ոսկեանց և Սուքիասեանց ժամանակ յիշուած թագաւորները. 70—80 երես։

—Բ. Գրաց վարք որբոցները Սուքիասեանց մասին և պ. Ն. Մառի կարծիքը։ Ոսկեանց և Սուքիասեանց վկայաբանության կազմուելու ժամանակը։ Յովհաննէս կաթուղիկոսը հետևող արդէն կազմուած վկայաբանության, Ոսկեանց և Սուքիասեանց մասին ենթադրություններ։ Նախալուսաւորչեան նահատակները—Արարատեան քիւրք վկայք և Խորոմ Ա.-ի ժամանակ նահատակուած քրիստոնեայք. Ս. Ոսկեանց և Սուքիասեանց առնչությունը սրանց հետ. 80—91 երես։

—Գ. Կրկին Շապուհներ և Խորոմներ։ Ժամանակի և գործող անձերի շփոթություն։ Գուցէ Ոսկեանք և Սուքիասեանք կոչուել են ս. Լուսաւորչի բերած յոյն և ասորի կրօնաւորներն ու նրանց հետևողները։ Հալածանք քրիստոնէության դէմ Շապուհ Բ.-ի օրով։ Ոսկեանց և Սուքիասեանց մասին ժողովրդա-

կան այժմեան աւանդութիւնը: Սուկաւէտի մասին կասկածները: Ս. Ոսկեանց և Սուքիասեանց մասին մեր կարծիքը. 92—100 երես:

—Դ. Ս. Լուսաւորչի բերած Սեբաստացի և ասորի կրօնաւորները: Ս. Դանիէլ ծերունի: Հայ կրօնաւորների անչիշատակ մնալը տօնուց որբերի շարքում: Հայ կրօնաւորների համար կանոններ: Դ. դարում Հայաստանի կրօնաստանները: Ս. Լուսաւորչի և Տրդատ թագաւորի ճգնութեան վայրերը: Եւստաթէոս և իւր հետևողները: Հայաստանի կրօնաւորների վարքը. 101—109 երես:

—Ե. Հայ կրօնաւորութեան զեղծ կեանքը: Մեծն Ներսէս և Աշտիշատի ժողով: Կրօնաւորական հաստատութիւնների տեսակները: Աշտիշատի կանոնների աղբիւրը: Ներսէսի բարեկարգութեան հետևանքները: Ծագումն հայ կրօնաւորութեան ըստ Ց. Թօփչեանի: Աստուածպաշտութեան ժամերը. 109—115 եր:

—Զ. Մինչև Ե. դարի բ. կէսը եպիսկոպոսները ամուսնացած էին: Յեղափոխութիւն աշխարհիկ հոգևորականութեան կեանքում: Ամուրի եպիսկոպոսների վանքերում հաստատուելու պատճառները:—Վաղարշապատի կաթուղիկէն և Սուրենայ անապատը: Հայ կրօնաւորութիւնը ըստ Ղազարի: Կրօնաւորութեան անկումն բարոյապէս: Լաւ կրօնաւորութիւն ի դէմս Թաթլոյ և նրա խրատը. 116—130:

—Է. Թանահատի վանք և Սիւնեաց աշխարհի կրօնաւորութիւնը: Սևանի անապատ: Տաթևի մօտի անապատը: Մաքենոցաց և Թեղենեաց անապատները: Վանականութեան և կրօնաւորութեան անկումն: Կրօնաւորների մասին կանոններ: Ամփոփումն. 130—139:

Յ Ա Ւ Ե Լ Ո Ւ Մ Ա Ծ

—Ա. Սևանայ կրօնաւորական կեանքը. 140—143 երես:
—Բ. Սևանայ ժամերգութեան կարգը. 143—153:

L. S. O onom

886

002639

886